ИНСТИТУТ ПО ИЗУЧЕНИЮ РУКОПИСЕЙ ПРИ СНК АРМ. ССР

ТЕКСТЫ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ № 2

**АНАНИЯ ШИРАКАЦИ**

# КОСМОГРАФИЯ И ТЕОРИЯ КАЛЕНДАРЯ

*Текст составил канд. историч. наук АШ. АБРАМЯН*

*Редактор—проф. Г. АЧАРЯН*

**АРМГИЗ** 1940 **ЕРЕВАН**

ՀԱՅԿ. ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՔՍՏԵՐ. № 2

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

# ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՄԱՐ

Աշխատությամբ պատմ. գիտութ. թեկնածու ԱՇ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Խմբագիր՝ պրոֆեսոր Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1940 ԵՐԵՎԱՆ

# ԱՌԱՋԱԲԱՆ

1․ Անանիա Շիրակացու մեզ հասած ու բանասիրության մեջ հայտնի աշխատություններից մեծ արժեք է ներկայացնում նրա տիեզերագիտությունը։ Այդ տեքստը հրատարակվել է պրոֆ. Ք. Պատկանյանի կողմից Պետերբուրգում, 1877 թ., նրա կազմած «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից» ժողովածուի մեջ՝ «Յաղագս երկնի» վերնագրով։

Պրոֆ. Ք. Պատկանյանի այս հրատարակության հիմքը Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագիրն է հանդիսացել։ Տեքստը ձեռագրից արտագրել ու նրան է ուղարկել Հ. Ղ. Ալիշանը։

Պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած այդ տեքստն ունի հետևյալ գլուխները՝ 1) «Յաղագս երկնի», 2) «Յաղագս երկրի», 3) «Յաղագս ծովու», 4) «Յաղագս երկնային զարդուց», 5) «Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի շարժմունք», 6) «Յաղագս կաթին ծրոյ», 7) «Յաղագս հիւսիսային աստեղաց», 8) «Յաղագս լուսնի» և 9) «Յաղագս արեգական»։ Սրանցից բացի, պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած Շիրակացու տիեզերագիտության տեքստի վերջում, տասներորդ գլխի տակ, տեղավորված է նաև Շիրակացու աստղաբաշխական աշխատության մի գլուխը՝ «Յաղագս կենդանատեսակաց» վերնագրով։

1937 թվի աշնանից Հայկական ՖՍՀ մատենադարանի ձեռագրերի անվանական ու թեմատիկ բիբլիոգրաֆիա կազմելիս, յես առանձին ուշադրություն դարձրի տիեզերագիտական բնույթ ունեցող տեքստերի, մասնավորապես, Անանիա Շիրակացու տիեզերագիտության վրա։ Հին հայկական վորոշ մատենագրերի (Կորյունի և «Աշխարհացոյց»-ի) ընդարձակ և համառոտ խմբագրությունները մեզ հասնելու փաստը, ինչպես և պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած Շիրակացու տիեզերագիտության տեքստում նկատվող աղճատումները, բերել եյին ինձ այն համոզման, վոր Շիրակացու տիեզերագիտությունն անդամահատված ձևով է մեզ հասել և պիտի վոր յեղած լինի տիեզերագիտության ընդարձակ տեքստ։ Ինձ հաջողվեց մեր մատենադարանում հանդիպել Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստին՝ Շիրակացու ամբողջապես դեռ անհայտ տոմարական մի աշխատության հետ միասին։

Շիրակացու տիեզերագիտության այդ ընդարձակ տեքստը և տոմարը

գտնվեցին մեր մատենադարանի երկու ձեռագրերում — Թիվ 2180 և 2762: Նրանք մատենադարանի մյուս ձեռագրերի հետ միասին ցուցակագրվել են մի քանի անգամ Մ. Տեր-Մովսիսյանի և ուրիշների կողմից, սակայն այդ ցուցակագրողներից ոչ մեկը, որքան մեզ հայտնի չէ, գրականության մեջ ոչինչ չի գրել Շիրակացու տիեզերագիտության մասին: «Հայկազյան բառարան»-ում Շիրակացու աշխատություններից բերված որոշ հատվածներից երևում է, որ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում ևս կա Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ խմբագրության մի ձեռագիր:

2. Շիրակացու անձնավորության մասին մենք բավականաչափ տեղեկություններ ունենք: Նա գրել ու մեզ է թողել իր ինքնակենսագրությունը: Բացի այս, նրա մասին որոշ տեղեկություններ են տալիս միջնադարյան հայ մատենագրերը:

Շիրակացին ծնվել է Շիրակի շրջանի Շիրակավան գյուղաքաղաքում (Բաշ-Շորագյալում): Ծննդյան ճիշտ թվականը մեզ հայտնի չէ: Շիրակացու՝ իր ուսուցչի մասին տված մի տեղեկությունից երևում է, որ ինքը ծնված պիտի լինի վեց հարյուր տասական թվերին: Նախնական կրթությունը նա ստացել է Շիրակավանում: Չբավարարվելով իր ստացած կրթությամբ, նա հանձն է առնում երկար ճանապարհորդություն դեպի Բյուզանդիա՝ գիտության մեջ խորանալու նպատակով: Մանկությունից շատ է սիրում մաթեմատիկա, համարելով դա մայր բոլոր տեսակ գիտությունների. «Ես, Անանիա Շիրակվանցի, որ բովանդակեցի զդպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց... և օր ըստ օրէ լուսաւորէի զաչս մտաց իմոց... յոյժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ յարմարի բան իմաստասիրութեան առանց թուոյ, կարծելով զնա մայր ամենայն իմաստից...» (Պատ., էջ 1): Բյուզանդիա գնալիս, ճանապարհին, Չորրորդ Հայքում, նա հանդիպում է Քրիստոսատուր անունով մի ուսուցչի, մնում է նրա մոտ սովորելու վեց ամիս, բայց հետո տեսնում է, որ ուսուցիչն իրեն չի բավարարում. «Տեսի զի ոչ ունէր զբովանդակ արուեստն, այլ աստի և անտի ծայրաքաղ» (Պատ., էջ 2): Այստեղից Շիրակացին շարունակում է իր ճանապարհը դեպի Կոստանդնուպոլիս: Կոստանդնուպոլսում նույնպես Շիրակացին չի գտնում իր ցանկացած ուսուցիչը: Այստեղ նրան խորհուրդ են տալիս գնալ Տրապիզոն, Տյուքիկոս անունով՝ ազգով բյուզանդացի մի գիտնականի մոտ, որն այդ ժամանակ մեծ հռչակ էր վայելում և, ինչպես Շիրակացին է վկայում, նրա մոտ գալիս էին սովորելու աշխարհի բոլոր ծայրերից. «... Գային առ նա անդ ի (այսինքն՝ Տրապիզոն.— ԱԱ) յուսումն յամենայն աշխարհաց առ ծովածաւալ գիտութեան» (Պատ., էջ 3): Շիրակացին գալիս է Տյուքիկոսի մոտ: Տյուքիկոսը մեծ ուրախությամբ ընդունում է Շիրակացուն, որդու նման սիրում և պարապում է նրա հետ. «Եւ նա (այսինքն՝ Տյուքիկոսը,— պատմում է Շիրակացին) ընկալաւ զիս ուրախութեամբ... սիրեաց զիս որպէս զորդի իւր, պարապեաց յիս զամենայն խորհուրդս» (Պատ., էջ 2): Շիրակացին ութը տարի շարունակ մնում է Տյուքիկոսի մոտ և խորանում գիտության մեջ: Նա մեծ ուշադրություն է դարձնում հատկա-

պես մաթեմատիկայի վրա ու այնպես է վարժվում դրա մեջ, որ նրա ընկերները, որոնք արքունիքի որդիներ էին եղել, սկսում են նախանձել Շիրակացուն: «... և ուսայ լիով զարուեստ համրողութեան, մինչ զի նախանձեալ ընդ իս աշակերտակցացն, որ ի դրանն արքունի» (Պատ., էջ 2): Շիրակացին վերադառնում է Հայաստան և զբաղվում գրական ու մանկավարժական աշխատանքով: Շիրակացին այստեղ Կոմիտաս կաթողիկոսի պատվերով առաջին անգամ կազմում է հայկական տոմարը, որը սակայն չի հաստատվում հայ յեկեղեցու կողմից: Անեցին այդ մասին գրում է. «Հայրապետն Անաստաս՝ կոչէ առ իւր զմեծ վարդապետն Անանիա յԱնէից գեղջէ՝ անշարժ ըստ այլոց ազգաց դնել տոմար և մերոյ ազգիս. զոր արարեալ մեծաւ ջանիւ. և մինչ կամէին ժողովով հաստատել զնոյն՝ վախճանի Ս. Անաստաս՝ անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն՝ այլ առաջին կարգաւն վարէին»: Սամ. Անեցի, էջ 84):

Շիրակացին, սակայն, Հայաստանում համապատասխան ընդունելություն չի գտնում: Այդ մասին ակնարկներ կան նրա ինքնակենսագրության մեջ: Շիրակացին գանգատվում է, որ յերբ ինքը վերադարձավ Հայաստան, իր մոտ սովորելու յեկան բազմաթիվ աշակերտներ, բայց նրանք՝ գիտությունը լավ չյուրացրած՝ թողին իրեն ու սկսեցին զրպարտիչ խոսքեր ասել իր մասին. «Եւ ասեն ի վերայ իմ պարսաւանս որք յինքեննէն յերևեալք»: Իր ինքնակենսագրության մեջ, մի այլ տեղ նա, դառնացած գանգատվում է, որ ոչ ոք շնորհակալ չեղավ իր աշխատության համար. «Եւ ես տրուպս ի Հայաստանեաց, ուսայ ի նմանէ (այսինքն՝ Տյուքիկոսից— ԱԱ) զհզօր արհեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհն մեր ... թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ և մեծարաւղ իմոյ աշխատութեան...» (Տաշյան ցուցակում տրված Շիրակացու ինքնակենսագրությունից, էջ 175)[1]:

Շիրակացին գրել ու մեզ է թողել մի շարք աշխատություններ: (Այս մասին տե՛ս «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ»-ի Ձ-րդ հատորում մեր հրատարակած Շիրակացու թվաբանության դասագրքի առաջաբանը, էջ 246): Շիրակացու ունեցած աշխատությունների մասին մոտավոր պատկերացում է տալիս մեզ XI դարի հայ գիտնական Գրիգոր Մագիստրոսն իր Պետրոս Գետադարձ կաթողիկոսին գրած նամակում. «Փոխան Յիսուսի համարձակիմք, մինչ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և պիտանացուսն յարատևական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ՝ որ բազում աշխատութեամբ և յածաչու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յոգնարեղուն մատենից՝ յօրում և ընթակայացեալ են ո՛չ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս, որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ՝ խրթնացեալ և թաղնի ընդ գրուանաւ ծածկէին. զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց պայդուսիկ, յառաջնումն իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանօ և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառ-

---

[1]) Պատ. տեքստում գրված է «...թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ իմոյ աշխատութեանս» (Պատ., էջ 2):

նութիւնս, յորում մթերեալ են տոգորք աստուածային և են ենթակայացեալ ամենայն արհեստ մակացութեան· և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք· իսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք· և մակացութիւնք, մատենագրութիւնք· և դրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական, թէպէտ և մասնաւոր զփոշէտեսական զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի անդր ի բազմավէպ մատենագրից Քաղդէացւոց և յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ···» (Թիվ 3062 ձեռ·, թերթ 247 բ, 248ա)։

Շիրակացու գիտական բովանդակություն ունեցող մի շարք աշխատությունները մեծ չափով օգտագործվել են միջնադարյան մի շարք հայ մատենագրերի կողմից— Հովհաննես սարկավագի, Վանականի, Հովհաննես Ցերզնկացու, Մարտիրոս Ղրիմեցու և ուրիշների։

Շիրակացու գրած աշխատությունների ուսումնասիրության նյութ են սկսում դառնալ 19 դարի առաջին քառորդից։ Շիրակացու առանձին աշխատությունների վերաբերյալ սկսում են գրվել մոնոգրաֆիաներ, որոնցից աչքի յեն ընկնում հատկապես հայագիտության հինգ խոշոր գիտնականների աշխատությունները— պրոֆ· Ք· Պատկանյանի, Գ· Տ–Մկրտչյանի, ակադ· Հ· Օրբելու, ակադ· Հ· Մանանդյանի և պրոֆ· Հ· Մարկվարտի։

3· Շիրակացու տիեզերագիտությունը պարունակող թիվ 2180 ձեռագիրը ժողովածու յե։ Նա պարունակում է հետևյալ նյութերը։—

2ա Յովհ· Որոտնեցւոյ «Ի բանն՝ որ ասէ ի սկզբանէ տէր զերկինս հաստատեցեր»։

Սկ·՝ «Ի մտանել բանիս նախերգաբար յարդարեսցուք···»։

Վջ· (9 բ) թերի «··· իսկ առաւել երկՐՆչիւրոցն ծայրիցն···»։

10ա Պատմութիւն և վկայաբանութիւն (լատինական օրինակից)։

Սկ·՝ «Դեկտ· ԼԱ· Ս· Սեղբեստրոսի խոստովանողի և պապի···»։

Վջ·՝ (52 բ) «Այսոքիկ պատմութիւնք գրեցան ի լաթինացւոց օրինակաց»։

53ա Յովհ· Որոտնեցւոյ «Մեկնութիւն բանին՝ որ ասէ մարգարէն ո՞ տեղծ առանձինն···»։

Սկ·՝ «Ներգործական իմն անխափան բնաւորեալ են միտք···»։

Վջ·՝ (80 ա) «···և յաղագս այսորիկ այսքան բաւական լիցի»։

80ա Գրիգորի Տաթևացւոյ տեսութիւն ի բանն՝ Հոգի տեառն ի վերայ իմ···

Սկ·՝ «Տեսանողն վեհերևակ տեսութեամբ ի բնաբար···»։

Վջ·՝ (103 բ) «··· Վասն այն ասէ ոգի տեառն ի վերայ իմ»։

104ա Բարդողիմէոսի համառօտ հաւաքումն ի դիալէքթիկայն։

Սկ·՝ «Եւ զի խօսելոյ եմք ի Դիալէքթիկայէն···»։

Վջ·՝ (124 բ) թերի «··· որպէս յայտնի է ի սահմանս այս ումն մարդ ոչ է քերթողն···»։

125ա— 153բ— դատարկ թղթեր։

154— Ցանկ ուստուլապին ա— ճկթ գլխովք և ուստուլապա անխորագէր (Հմ· մեր մատենադարանի թիվ 645 ձեռագրի և 1650 ձեռագրի հետ)։

Սկ.՝ «Կայ ի վերայ նորա արտաքոյ կամ ի ներքոյ...»:

Վջ.՝ (227 բ) «... և թէ ոչ նա սղալ է»:

227բ— «Բան պիտանի և գեղեցիկ»:

Սկ.՝ «Առաջին նադր հայն աստղն է...»:

Վջ.՝ (234 ա) «... և այս էր զոր դրեցաք և աստուած յաջողէ ի գործս նոցա»:

234բ— Կենդանակերպք:

Սկ.՝ «(Խ)ոյն: Ցուլն: Երկաւորն...»:

Վջ.՝ (235 ա) «... Երկաւորն, աղեղնաւորն Գ., տուտն»:

235բ— Ժամանակի չափում:

Սկ.՝ «Ժամն Լ մասն է, որ լինի ընդ տիւն և ընդ գիշերն Ձի մասն...»:

Վջ.՝ նոյն էջում «... Ղունկն Բ զարի է, զարին ական թաւթով մէ է»:

237ա— 286 բ Պարզատոմար:

288բ— (Տոմարական հարց ու պատասխան)

Սկ.՝ «Հայոց թվականն որ եդին ի յո՞ր կետն էր...»:

Վջ.՝ (302 ա) «... Պտխ: ՁՀ թիւ մի յաւելի անկաւ ի ներքս այն է պատճառն»:

303ա—«Յաղագս նշանաց յարեգական ի լուսնին· յաստեղս և վասն շարժի և որոտման· յասորոց գրոց ասացեալ երանելոյն Դանիէլի»:

Սկ.՝ «Թշրին ղրիմ, որ է հոկտեմբեր՝ թէ արեգակն խաւարի եւանէ որդի թագաւորի...»:

Վջ.՝ (309 բ) «... և պարսիկս յանձրևոյ յապականին»:

309բ— Վասն խաւարման արեգականն և լուսնին ումեմն իմաստասիրի ասացեալ:

Սկ.՝ «Յունվարի թէ լուսինն խաւարի...»:

Վջ.՝ (315) «... հաց և գինի նուազ (լինի)»:

315ա— Տանուտէրք որք ցուցանեն զգնացս տարոյն:

Սկ.՝ «Յորժամ խոյն լինի՝ ղարուՆն աղնիւ...»:

Վջ.՝ (318բ) «... ի մէջ ձմռանն անձրև դայ»:

319ա— Կաղանդացոյց:

Սկ.՝ «Թէ կիրակի հանդիպի կաղանդամուտն...»:

Վջ.՝ (319 բ) «... Եւ յունվարի Ա կաղանդամուտ է հանապազ»:

319բ— Կաղանդացոյց Կիւրղի:

Սկ.՝ «Եթէ կաղանդն ի կիրակէ լինի...»:

Վջ.՝ (320 բ) «... թէ պարզ լինի, սղութիւն լինի և չոր»:

321ա— Տարաձայնութիւն Հայ եկեղեցւոյ ընդդէմ Ֆռանկաց:

Սկ.՝ «Առաջին ղքրիստոս մի բնութիւն ասեն...»:

Վջ.՝ (321 բ) վերջում թվում է այն հոգեւորականների անունները, վորոնք կաթոլիկ են դարձել:

322ա— Յակոբ Ղրիմեցւոյ մեկնութիւն տոմարի:

Սկ.՝ «Հայեցուածս գերերջանիկ բաբունապետի...»:

Վջ.՝ (415 բ) Յակոբ Ղրիմեցու յիշատակարանը:

416բ— Այս են գաւառք Նիգ գաւառին որ ասի Ապարանք:

*Սկ.՝ «Ի վերայ Քասախ գետոյն ականցն...»:*

*Վջ.՝* (417 *ա*) *«... միահամուռ ամենայն եղև ԺԳ Բերդ»:*

417*բ*—429*բ*— *Դատարկ թղթեր:*

430*ա*— Յովհաննէս սարկաւագի Յաղագս Շ եկի»:

*Սկ.՝ «Համարձակեցան ոմանք յաննշանից ստութեան պատճառս...»:*

*Վջ.՝* (468 *բ*) *«... Եւ դու ըստ խրատուս այսմիկ նշանեա՛...»:*

468*բ*— Այլ ի [տ]կար և եղեռնագործ Աւիկա սակս ծռազատկին:

*Սկ.՝ «Ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ...»:*

*Վջ.՝* (470 *բ*) *«...զատիկ փրկութիւն, զատիկ նորոգման»:*

471*ա*— Հարցումն Եւսեբեա ժամանակագրի:

*Սկ.՝ «Ընդէր տարին ՅԿԵ օր է...»:*

*Վջ.՝* (475 *ա*) *«... զի ի ԺԵ աւրն կատարի Կ որ լինին ժամք ԺԲ»:*

475*ա*— Յաղագս տոմարի թէ յումէ արարեալ:

*Սկ.՝ «Զեբրայեցոցն Եզրաս, որդի Սարիոնի...»:*

*Վջ.՝* (476 *բ*) *«... Ը անգամ պատահեալ լինի ծռազատկի»:*

478*ա*— Անանիայի Շիրակունոյ համարողի առ խոստացեալսն:

*Սկ.՝ «Զխոստացեալսն մեր հատուսցուք զբան...»:*

*Վջ.՝* 532 *բ «... սուտս զանգիտացեալ պատմութիւնս»:*

532*բ*— Պատմութիւն յաղագս գերագս գիտելոյ սաղմոսիւք:

*Սկ.՝ «Բազումք են որ երազոյ հաւատան...»*

*Վջ.՝* (533 *բ*) *«... և նա մեկ[ն]է զտեսութիւն երազոյն եթէ չար է եթէ բարի»:*

533*բ*— Անանիայի Շիրակացոյ յաղագս կշռոյ և կշռոց և կշռորդաց:

*Սկ.՝ «Տաղանդն ԵՃԻԵ լիտր է...»:*

*Վջ.՝* (535 *բ*) *«... քանքարն լինի դահեկան Ա»:*

536*ա*— Յաղագս չափոյ չափուց (Անանիայի Շիրակունւոյ համարողի):

*Սկ.՝ «Չափ առաջնորդ չափոյ...»*

*Վջ.՝* (537 *ա*) *«և մասմարովթն ճաշակ, որով դդինին հանեն»:*

537*ա*— Անանիայի Շիրակացոյ թիւք որչափութեան տանց հին և նոր կտակարանաց:

*Սկ.՝ «Գիրք Մովսէսի օրէնսդրի...»:*

*Վջ.՝* (538 *ա*) *«... Տուն այս են ԱՓԾՂԱ»:*

538*ա*— Յաղագս շաղկապութեան արեգական և լուսնի:

*Սկ.՝ «Իսկ յորժամ կամիս դիտել թէ զիարդ են ընթացք արեգական...»:*

*Վջ.՝* (538 *բ*) *«... ասա մասունսն ՌԺԵ և կամ ՌԺԲ և այս է»:*

538*բ*— Իշխանք, թագաւորք և մարզպանք հայոց:

*Վերջանում է Հեթում* 2*-րդով:*

539*բ*— Կաթողիկոսք հայոց:— *Հասցնում է մինչև* 1291 *թվ. Այլ գրիչ շարունակել է մինչև* 1563 *թ.:*

*Ձեռագիրը գրված է յերեք տարբեր գրիչների կողմից— Վարդանի, Աթանասի և Սահակի: Վերջինի, Սահակ դրչի, հիշատակարանից յերևում է,*



*Մատենադարանի Թիվ 2180 գրչագրի առաջին յերեսը:*

վոր ձեռագիրը նա գրել է 1644 թ. (Հայկական ՌՂԳ թվին)։ Գրիչները ձեռագրում թողել են հետևյալ փոքրիկ հիշատակարանները։—

103բ— «Ով եղբայր, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեանց. յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեղկելիս Վարդան սարկաւագս և դուք յիշեա՛լ լիջիք ի քրիստոս»։

102ա— «Սխալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք ո՛վ եղբայր, զի խիստ յշտապեցա գրելիս»։

317ա— «Թողութիւն արէք սխալանաց գրիս Աթանաս խէլառ սարկաւագիս»։

318բ— «Արդ պաղատիմ կարդա և տես... զայս գիրքս բարով վայելէս»։

320բ— «Թողութիւն արէք սղալանաց գրիս Աթանասի անպիտան դպրիս»։

415ա— «Արդ պաղատիմ աղերսալի, և Թախանձեմ ըղձմամբ սրտի։
Ըզհանդիպողսդ յայս մատենի, և զվերծանողսդ խուն այս բանի։
Անկեղծ մտօք սերտեալ սրտի, յիշման առնէք զհէքս արժանի։
Զփոքրիկ մարմնովըս տաղտկալի, բայց ճոխ մեղօք յանցմամբ ի լի։
ԶՍահակ համբակըս եղկելի, ծաղր և ծանակ համայն ցեղի։
Նաև եղբարսն իմ նազելի, դոյզն ինչ օգտող յայսըմ ծըրի։
ԶԱռաքեալն ըղձալի, և զԳրիգորըն տենչալի։
Այլ և զհամօրէն ջոկքս երամի, որ կան ի կիրթ յայս դպրոցի։
Այլ ամք կենացս ապիկարի չորեքտասան մու աւելի*)։
Ի Թուականիս հայոցս ազնի ՌՂ եզ և երկի»**)։

Ձեռագրի նյութը— թուղթ է։ Գրչության վայրը— հայտնի չի։ Գրությունը նոտր է։ Գրված է միասյուն։ Ձեռագիրը զարդագրություններ չունի։ Կազմը — կաշեպատ տախտակ է։

Թիվ 2762 (209) ձեռագիրը դարձյալ ժողովածու է։ Նա ունի հետևյալ բովանդակությունը.—

Եջ 1. «Յովհաննու վարդապետի արարեալ, որ մականուն սարկաւագ կոչի, Յաղագս Շեկի»։
Սկ.՝ «Համարձակեցան ոմանք յաննշանից ստութեան պատճառ...»։
Վջ.՝ (98) «...Ը անգամ պատահեալ լինի ծռազատիկ»։

Եջ 99—100 չգրված։

Եջ 101. Անանիայի Շիրակունոյ համարողի, առ խոստացեալսն։—
Սկ.՝ «Զխոստացեալսն մեր հատասցուք զբան...»։
Վջ.՝ (եջ 217) «Զոր մերժեալ խոտեցի. սուտս զանդխտացեալ պատմութիւն»։

Եջ 217. Պատմութիւն յաղագս զերազս գիտելոյ սաղմոսիւք՝ և մեկնելոյ։
Սկ.՝ «Բազումք են որ երազոյ հաւատան...»։
Վջ.՝ (եջ 219) «... Եթէ չար է, եթէ բարի»։

---

*) Անշուշտ ուզում է ասել $4\times10+1=41$ տարեկան, փորովհետև $14+1=15$ տարեկան գրիչ չի կարող լինել։

**) Իմա՛ $1090+1+2=1093+551=1644$ թ.։



Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատութեան թիվ 2762 ձեռագրի առաջին էջը։

Էջ 220· **Անանիայի Շիրակացոյ յաղագս կշռոյ, և կշռոց, և կշռորդաց:**

Սկ.՝ «Յաղագս տաղանդի» գլխով:

Վջ.՝ (էջ 227) «Յաղագս կաղամաղէկօղի և մասմարութայ*)»:

Էջ 228· **Անանիայի Շիրակունոյ՝ թիւք որչափութեան տանց հին և նոր կտակարանաց:**

Սկ.՝ «Ծննդոց տունք ՏՑէ...»:

Վջ.՝ «... տունք այս են ԱՓՇՂԱ»:

Էջ 250· **Յաղագս շաղկապութեան արեգական և լուսնի:**

Սկ.՝ «Իսկ յորժամ կամիս գիտել թէ զի՞րդ են ընթացք արեգական...»:

Վջ.՝ (էջ 231) «... և կամ ՌԺԲ և այս է»:

Էջ 231ա· **(Իշխանք, թագաւորք և մարզպանք):**

Սկ.՝ «Յարեդ: Գամեր: Թիրաս...»:

Վջ.՝ (էջ 233) «... Ամրի, Պաղտոյն: Այսքան սոքա»:

Էջ 233· **Կաթողիկոսք հայոց մինչև ՌԺԲ թվականը:**

Ձեռագիրը չունի հիշատակարան: Գրիչը, գրչության ժամանակը և վայրն—անհայտ են: Մոտավոր ժամանակն ըստ գրչության— XVIII դ. է: Նյութը—թուղթ է: Գրված է միասյուն, նոտր գրով:

Մեր մատենադարանի նյութերը թեմատիզացիայի յենթարկելու ընթացքում պարզվեց նաև, վոր բացի Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության տեքստից, Շիրակացու տիեզերագիտության այլ ձեռագիր որինակներ ևս կան, վորոնք պատկանում են պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած տիեզերագիտության, կամ նրանից ավելի համառոտված խմբագրությանը: Այսպիսով, պարզվում է, վոր Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատությունը մեզ հասել է յերեք խմբագրությամբ— ընդարձակ, վորն այժմ մենք հրատարակում ենք, միջին, վորը հրատարակել է պրոֆ. Ք. Պատկանյանը, և համառոտ, վորը ընդօրինակված է թիվ 1979 ձեռագրում: Ուսումնասիրողների գործը հետագայում հեշտացնելու համար, մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ մեր մատենադարանի ձեռագրերում յեղած Շիրակացու տիեզերագիտության բիբլիոգրաֆիան:—

1· Փոքրիկ հատված Շիրակացու տիեզերագիտությունից: Ընդօրինակված է Ղուկաս (Դավթի վորդի) գրչի կողմից 971 թ.: Սա մեր մատենադարանի ամենահին ձեռագրերից է— մեզ հասած թղթե ամենահին ձեռագիրը հայկական տեքստով: Ձեռագիրը իր բովանդակությամբ պատմա-գիտական նյութերի ժողովածու յէ: Ձեռագրում ընդօրինակված է յեղել Շիրակացու տիեզերագիտությունը, սակայն թերթերի մեծ մասը թափել են: Նյութը տեղավորված է Շիրակացու աշխատությունների շարքում: (Տե՛ս թիվ 2679 (102 ձեռագիրը:

2· «Անանիայի Յաղագս երկնի»:— Ընդօրինակված է Գրիգոր քհ. կողմից Յերզնկայում 1342 թվին: Տեղավորված է տոմարական բովանդակություն ունեցող նյութերի շարքում: Նրան նախորդում է «Յաղագս շրջագայութեան»

*) Այն է, կաղամաղեկովթ և ամսաարակովթ:

*երկնից թէ որպէս իմաստասիրաց թուեցան», իսկ վերջում շարունակվում է Շիրակացու ստողաբաշխութւմն ավելի ընդարձակ ծավալով, քան Պատկանյանի հրատարակած տեքստն է։ Շիրակացու տիեզերագիտության այս տեքստը համընկնում է Պատկանյանի հրատարակած տեքստի հետ։* (*Տե՛ս թիվ* 1973 (—2042), *թերթ* 286*բ*—316*բ*)։

3· «Անանիայի Շիրակացոյ ասացեալ յաղագս արեգական»։— XIV *դարի ընդօրինակություն է։ Շիրակացու տիեզերագիտության ամենահամառոտված տեքստն է։ Գլուխների յետ և առաջութեամբ ընդօրինակված է։ «Յաղագս արեգական», «Յաղագս հիւսիսային աստեղաց, զոր կոչեն բևեռք երկնի»։ Ձեռագիրը չունի հիշատակարան։* (*Տե՛ս թիվ* 5619 (930), *թերթ* 207*ա*—214*բ*)։

4· «Անանիայի Յաղագս երկնի»։— *Ընդօրինակված է* XV *դ. Ստեփաննոս յեպ–ի կողմից։ Նմանվում է* 5619 *թվակիր ձեռագրի տեքստին, այն տարբերությամբ, վոր այնտեղ գլուխները խառնված են, իսկ այստեղ—վոչ։* (*Տե՛ս թիվ* 1979 (2052), *թերթ* 429*բ*—439*ա*)։

5· «Անանիայի վասն երկնի»։— *Շիրակացու տիեզերագիտության չորս գլուխն է միայն — «Յաղագս երկնի», «Յաղագս երկրի», «Յաղագս ծովու» և «Յաղագս երկնայն զարդուց»։ Ձեռագիրն ընդօրինակված է* 1426 *թվ. Մատթեվոս գրչի կողմից։* (*Տե՛ս թիվ* 2678, *թերթ* 342—348)։

6· «Անանիայի Շիրակացոյ ասացեալ է յաղագս արեգական»։— *Ընդօրինակված է* XV *դ. Կարապետ քահանայի կողմից։ Շիրակացու տիեզերագիտության ներկա տեքստը համապատասխանում է թիվ* 5619 *ձեռագրի խմբին։* (*Տե՛ս թիվ* 5610)։

7· «Անանիայի յաղագս երկնի»։— *Ընդօրինակված է* XV *դ. Գեվորգ գրչի կողմից։ Տեքստը համապատասխանում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած տիեզերագիտության խմբին։* «*Տե՛ս թիվ* 1267, *թերթ* 310*ա*—327*բ*)։

8· «Անանիայի Շիրակունոյ համարողէ առ խոստացեալսն»։— *Ընդօրինակված է* 1644 *թ. Վարդան սարկավագի ձեռքով (Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տրված է առջևում— տե՛ս* 2180 *թվակիր ձեռագրի նկարագրությունը*)։

9· «Անանիայի Շիրակացոյ ասացեալ վասն արեգական»։— *Ընդօրինակված է* 1687 *թ. Մարտիրոս գրչի կողմից, Մերդինում։ «Յաղագս արեգական» գլուխն է միայն։* (*Տե՛ս թիվ* 2191, *թերթ* 141—143)։

10· «Անանիայի յաղագս երկնի»։— *Ընդօրինակված է* XVII *դ. Կարապետ վարդ. կողմից։ Բովանդակությամբ նմանվում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած տեքստին։* (*Տե՛ս թիվ* 2041 (—2053), *թերթ* 324*ա*—351*բ*)։

11· «Անանիայի յաղագս երկնի»։— *Ընդօրինակված* XVIII *դ. Կարապետ վարդապետի կողմից։ Բովանդակությամբ համապատասխանում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած խմբին։* (*Տե՛ս թիվ* 2041, *թերթ* 324*ա*—351*բ*)։

12· «Անանիայի Յաղագս երկնի»։— *Ընդօրինակված է* 1737 *թ. Հակոբ վարդ. Շամախեցու կողմից, Էջմիածնում։ Նմանում է Պատկանյանի հրատարակած տեքստին։* (*Տե՛ս թիվ* 464, *թերթ* 227*բ*—247*ա*)։

*Մեր մատենադարանի ձեռագրերում յեղած Շիրակացու տիեզերագիտու-թյան տեքստը կարելի յե հետևյալ ձևով ճյուղագրել։—*



Ներկա ճյուղագրությունն, իհարկե, վերջնական չէ: Կարող են լինել միջանկյալ ուրիշ ողակներ, վորոնք մեզ հայտնի չեն: Բացի այդ, նույն խմբի այս կամ այն ձեռագրի կախվածությունը միշտ չէ՝ վոր վորոշված է անվիճելի փաստերի հիման վրա, ուստի և մենք առանձին խմբի օրինակները միացրել ենք կետավոր գծիկներով: Ճյուղագրությունը կազմված է մոտավոր ձևով: Ձեռագրերի հիշատակարաններում չկային փաստեր նախապատվածր օրինակների վերաբերմամբ, իսկ մեր ձեռքի տակ յեղած փաստերն անբավարար համարեցինք առանձին ձեռագրերի կախվածությունը վորոշելու համար:

5. Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստի և տոմարական աշխատության ձեռագրում վերնագիրն է «Առ խոստացեալսն»: Տեքստի ուսումնասիրությունից յերևում է, վոր սա վոչ թե ամբողջ աշխատության վերնագիրն է, այլ միայն առաջին գլխի, ներածականի: Վերնագրից կարելի յե կռահել, վոր Շիրակացին վորոշ մարդկանց խոստումներ է տվել գրել նման մի աշխատություն և, կատարելով իր խոստումը, ներածականը վերնագրել է «Առ խոստացեալսն», իսկ տեքստում նշել՝ «Զխոստացեալսն մեր հատուսցուք զբանս...»: Շիրակացու այդ ներածականը Պատկանյանի հրատարակած խմբում ընկել է: Ցելնելով տեքստի բովանդակությունից, մենք նպատակահարմար համարեցինք գիրքը վերնագրել «Տիեզերագիտութիւն և տոմար»:

Ներածականից հետո, 2-ից մինչև 10-րդ գլուխը, Շիրակացին շարադրել է իր տիեզերագիտությունը: Այդ տեքստը զգալի կրճատումներով պահպանվել է պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած խմբում:

11 գլխից մինչև 83 գլուխը Շիրակացին շարադրել է իր տոմարական աշխատությունը՝ հարց ու պատասխանի ձևով:

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության 84-երորդ գլուխը—յերազի մասին է: Մեզ թվում է, վոր այս գլուխն ընդմիջարկություն պիտի լինի:

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության տեքստից յերևում է, վոր պրոֆ. Պատկանյանի հրատարակած «Շիրակացու տիեզերագիտության տասերորդ» գլուխը վո՛չ մի կապ չունի Շիրակացու տիեզերագիտության հետ և Շիրակացու աստղաբաշխության մի գլուխն է:

Մեր մատենադարանի Շիրակացու «Առ խոստացեալսն» պարունակող ձեռագրի մեջ, այդ տեքստից հետո, շարադրված են Շիրակացու «Յաղագս կշռոյ...», «Յաղագս չափոյ...», «Թիւք որչափութեան տանց հին և նոր կտակարանաց» և «Յաղագս շաղկապութեան արեգական և լուսնի» աշխատությունները: Շիրակացու նյութերի նման դասավորությունը, մեր կարծիքով, հնից է գալիս մեզ և հիմք է տալիս յենթադրելու, վոր Շիրակացու գիտական բնույթ ունեցող առանձին աշխատությունները հավաքված են յեղել մի ժողովածույի մեջ:

6. Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության հիման վրա հնարավոր է դառնում պրոֆ. Պատկանյանի հրատարակած տեքստում մատնացույց անել մի շարք աղավաղումներ, վորոնք տեղ են գտել ընդօրինակությունների ժամանակ:

Պրոֆ. Պատկանյանի հրապարակած տեքստի և «Առ խոստացեալսն» աշխատությունների համապատասխան գլուխների համեմատությունից, ամենից առաջ, պարզվում է, վոր Շիրակացու հրատարակված այդ նույն գլուխներում կրճատված են մի շարք կարևոր հատվածներ: Կրճատված են մեծ մասամբ Շիրակացու այն հատվածները, վորոնք իրենց դրվածքով հակասել են հայ յեկեղեցու դոգմաներին: Բերենք մի քանի որինակ:—

Շիրակացին իր աշխատության «Յաղագս լուսնի» գլխում, խոսելով լուսնի սեփական լույս ունենալ—չունենալու մասին, բերում է քրիստոնեյական տեսաբանների կարծիքը որինակով: Նայեցեք, ասում է, լուսատտիկին, թե ինչպես է այդ փոքրիկ միջատը լույս տալիս յերեկոյան: Նա գիշերվա մթնում այնքան լույս ունի, վոր կարելի յե նրան գրքի վրա տանելով կարդալ գրերը: Հատկանշական է, շարունակում է Շիրակացին, քրիստոնեյական տեսաբանների պնդումները, վոր լուսատտիկի այդ լույսը միանգամայն յուրահատուկ լույս է— նա վո՛չ կարմիր է, վո՛չ դեղին է, վոչ բաց կապույտ է, այլ կանաչի մի տեսակը: Յեթե լուսատտիկն ունի իր սեփական յուրահատուկ լույսը, ինչո՞ւ չպիտի նույնն ունենա և լուսինը: Այս ասելուց հետո, սակայն, Շիրակացին մեկեն շրջադարձ է կատարում և պնդում է, վոր ինքը ճիշտ է համարում այն գիտնականների տեսակետը, վորոնք գտնում են, վոր լուսինն արեգակից է ստանում լույսը: «Բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան՝ յարեգականէ ասել» (եջ 36)· Շիրակացու այս հատվածը Պատկանյանի հրատարակած տեքստում կրճատվել է: Դա կրճատվել է, պարզ է, վորպես հակայեկեղեցական մի հատված:

Շիրակացին իր աշխատության «Յաղագս արեգական» գլխում, խոսելով արեգակի յերկրագնդից մեծ լինելու մասին, բերում է մի շարք գեղեցիկ որինակներ, վորոնք դարձյալ կրճատված են Պատկանյանի հրատարակած տեքստում: Վորպեսզի պարզ լինի այդ հատվածի նպատակադրված կրճատվելու փաստը, մենք անհրաժեշտ ենք համարում բերել այն՝ ամբողջությամբ: (Հատվածը անդամահատված է այն տեղում, ուր Շիրակացին խոսում է արեգակի յերկրից մեծ լինելու մասին և բերում է որինակները): «Զիցէ՞ արդեօք տեսեալ քո ի գլխոյ բարձր լերանց զծով իւրով մեծանիստ լայնութեամբն. ո՞րչափ արդեօք փոքր երևեսցի քեզ մեծութիւն նորա: Եւ կամ ո՞րչափ սակաւիկ տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձրաբերձ իցէ աղխաղխեալ ուղերձեալ զբազմաչահն վաճառս՝ հանդերձ սպիտակ առագաստաւն, որոյ խորշ առեալ գոգեալ տանիցի զնաւն յարշաւանի. այլ թերևս իբրև զձագս աղաւնոյ տեսանիցես զնաւն: Կամ չիցէ՞ տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց: Զիա՞րդ թուիցի քեզ հանդերձ զովողաւն իւրով որ վարէն*) զնոսա. այլ թերևս որպէս զմրջիւնս գետնազնացս յայլայլոյ օդոյն, որ քաղքայեաց զտեսիլ աչացդ քոյ, ո՛ր ոչ ետ ճշգրտիւ նշմարել զտեսիլ իրացն հեռաւորաց. քանզի չառնի բաւական լոյս աչացդ զհեռաւորն որպէս զմօտաւորս ճանաչել. զի և լերինս բարձունս որ զատեալ լինին ի միմեանց խորաձորիւք»

---

*) Յերկու ձեռագրում էլ «զովաղաւն... վարեն»:

և յորժամ հայեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ՝ ցածունք և միայարք երևին. և ոչ կարեմք նշմարել զխորաձորոցն անջրպետս. այլ և շարժունս նմանեցուցանեմք. և որպէս թէ շուրջ զմեօք երևեսցին գալ: Զի և աշտարակք չորեքկուսիք բոլոր երևին, և այնպէս թուեսցին թէ շուրջ գալցեն»:— Այս նույն օրինակի հիման վրա, Շիրակացին խորհուրդ է տալիս պատկերացնել արեգակի մեծությունը:

Նման կրճատումներ պրոֆ. Պատկանյանի տեքստում կան 23 տեղերում:

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության համեմատությունից յերևում է նաև, վոր պրոֆ. Պատկանյանի հրատարակած տեքստի մի քանի գլուխների վերջում աստծուն ուղղված փառաբանությունները ընդմիջարկություններ են: Այսպես՝ 7-րդ գլխի («Յաղագս հիւսիսային աստեղաց») վերջում՝ «և ի փառս արարչին ամէն»— ընդմիջարկություն է, 8-րդ գլխի («Յաղագս լուսնի») վերջում՝ «որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»— ընդմիջարկություն է, 9-րդ գլխի («Յաղագս արեգական»-ի) վերջում «որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»— ընդմիջարկություն է: Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստն ազատ է այդ ընդմիջարկություններից:

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության հիման վրա այժմ հնարավոր է կատարել գրչական մի շարք ուղղումներ, վորոնք, պարզ է, աղավաղված են ընդօրինակող գրիչների կողմից: Ցեղած այդ սխալները ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ վորոշ օրինակներ:—

| | |
|---|---|
| 1) Պատկանյանի հրատարակած տեքստում յերկնքի մասին կարդում ենք, վոր նա «անկորանալի, անխորշ, անփ··փ, անգոգ» մի տարածություն է (եջ 35) | Բնագրում յեղել է վո՛չ թե «անփոփ», այլ «անփոր», այսինքն՝ վողորկ: |
| 2) Նույն գլխում յերկնքի մասին խոսելիս Պատկանյանի տեքստում ասված է, վոր յերկնքին «տարածեալ ձև յաւիտենական կոչեն» (եջ 35) | Նախնական բնագրում յեղել է վո՛չ թե «տարածեալ» այլ «կատարեալ ձև յաւիտենական կոչեն»: |
| 3) Պատկանյանի տեքստում յերկիրը նմանեցվում է ձվի: Ինչպես վոր նրա միջուկը գնդաձև դեղնուցն է, վորը շրջապատված է սպիտակուցով և կճեպով, այդպես էլ նրա նմանությամբ յերկիրը մեջտեղումն է «և ապա շուրջ գնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ» (եջ 38) | Նախնական բնագրում յեղել է վո՛չ թե «և ապա շուրջ գնովաւ» այլ «աւդ շուրջ գնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ»: |
| 4) Պատկանյանի տեքստում Շիրակացու յերազում յերևացող արեգակն «էր պատանի անմօրուս ոսկեղիսակ» (եջ 39) | Նախնական բնագրում յեղել է վո՛չ թե «վոսկե դէսակ», այլ «ոսկեգիսակ»: |

| | |
|---|---|
| 5) Պատկանյանի տեքստում արեգակը պատասխանելով Շիրակացու այն հարցին, թե ծածկվելուց հետո ում ես լույս տալիս, պատասխանում է, թե՝ «լերանց անփայից և անձանց անկենդանաց տամ լոյս» (էջ 40) | Նախնական բնագրում յեղել է վոչ թե «անփայից», այլ «ափափայից» այսինքն լեռ-ապառաժներին։ |
| 6) Նույն գլխում «ամենայն զգացութիւնք վերինք և ներքինք» (էջ 48) | Բնագրում յեղել է վոչ թե «զգացութիւնքս», այլ «գոյացութիւնքս վերինք և ներքինք»։ |
| 7) Պատկանյանի տեքստում լուսնի մասին խոսելիս ասված է, թե նա «ճառագայթս բազումս արձակէ յիւրմէ» (էջ 49) | Նախնական տեքստում յեղել է վոչ թե «բազումս արձակէ» այլ «ճառագայթս բաց արձակէ յիւրմէ»։ |
| 8) Արեգակի մասին Շիրակացին ասում է՝ թե «յոյժ սիրելի է... ճառել զառաստութիւնս որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորեդ է բան» (էջ 54) | Նախնական բնագրում եղել է «զառասութիւնս, որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորեդ է բան»։ |

Կարելի յե բերել բազմաթիվ այլ աղավաղումներ ևս, սակայն բերածները, կարծում ենք, բավական են համոզվելու համար, վոր տիեզերագիտության ներկա ընդարձակ տեքստը մեծ արժեք է ներկայացնում, մինչև իսկ հրատարակված գլուխները ճշտելու խնդրում:

Պատկանյանի հրատարակած Շիրակացու տիեզերագիտության մեջ նկատվող կրճատումները, ընդմիջարկությունները և այլ տիպի աղավաղումները, վորոնք այժմ հնարավոր է մատնացույց անել «Առ խոստացեալսն» տեքստի համեմատության շնորհիվ, հիմք են տալիս յենթադրելու, վոր նախնական տեքստի նման կրճատումները բացառիկ յերևույթ չեն միայն Շիրակացու աշխատությունների նկատմամբ:

7· Տոմարական այս աշխատության մեջ հետաքրքիր է Հայկի լեգենդայի հիշատակումը ԽԲ գլխում: Շիրակացին այդ գլխում խոսելով ամիսների առաջացման մասին, կանգ է առնում նաև հայկական ամիսների վրա: «Բայց ղամիսքդ հայոց ասացից, զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան ղդնել Թուականին հայոց էին: Եւ ո՛չ քան ղայն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն բանին աստուծոյ՝ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ· և այս է պատճառն: Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յաբեթի, որդւոյ Նոյի, Եկեալ ի Բաբիլոնէ՝ տիրեաց հայոց: Եւ բնակեալ ի հայս· և յանուն նորա կոչեցան հայք· նոյնպէս և դստերաց եդ ղանուանս· զոր առեալ հայոց ղանունս ուստերաց և դստերաց նորա՝ եդին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն և ղաւակացն· և են այսոքիկ: Նաւասարդի· Հոռի· Սահմի· Քաղոց· Արաց· և Հրոտից, որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց և Հարաւանց զոր այժմ Ահկի կոչենք, այս ի գործոց անուանեցան, զի ըստ այն ժամանակս ամառ-

նայինք էին տոքա» (էջ 68—69): Հայկի այս լեգենդան հին հայկական մատենագրության մեջ հիշատակվելու չորրորդ փաստն է սա: Առաջինը հիշատակված է Խորենացու, յերկրորդը՝ Սեբեոսի, յերրորդը՝ Թեոնի և չորրորդն—այս:

8. Պատկանյանի հրատարակած տեքստի կրճատված մասերից հետաքրքիր նյութ են հանդիսանում քաղդեյական զրույցները, վոր մեջ է բերում Շիրակացին «Յաղագս երկնային զարդուց» գլխում: Դա իր ծավալով մոտ կես մամուլ նյութ է: Շիրակացին սկսում է քաղդեյական սովորություններից, վորոնք ծնված յերեխայի բախտը կապում են առանձին կենդանատեսակների հետ «Զխոյէն ասեն թէ՝ գլուխ է աստեղատանց ԲԺ. անիցն, և շնորհատու. զի և խոյ գլուխ է հօտի և պարգևատու. զի առանց տրտմութեան մերկանայ յասուէն իւրմէ. և դարձեալ անդստին յիւրմէ բնութենէն զգենու հանդերձ հանապազորդ: Նոյնպէս և զաստեղատունն ասեն ըստ նորին նմանութեան: Ասեն թէ որ ի նմայն ծնանի՝ գեղեցիկ լինի և փարիտա, գանդրահեր, ծաւի. զուարթատես, բարերարուոյ, մեծ ու ճոխ լինի: Զցլէն ասեն թէ՝ ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեայ է... զկարճէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի՝ չարախոհ և մարդասպան ըստ օրինակի կարճի, որ հանապազ հարկանել կազմըն կայ...» (21—22):

Քաղդեացիների մեջ խոսում են, ասում է Շիրակացին, վոր դյութելու միջոցով կարելի յե լուսինը յերկնքից իջեցնել գետին: Նա քննադատության է յենթարկում քաղդեյական այս զրույցը և ջղայնացած բացականչում. «Ոն անդր և ի միտ անգամ ուրուք մի եկեսցէ այսպիսի անկարգութիւն առասպելական բանից» (էջ 24):

Շիրակացին հատկապես սուր քննադատության է յենթարկում քաղդեյական սովորությունը՝ յերեխայի ծնված ժամանակով չար ու բարի վորոշելու խնդրում: Այսինչ ժամին ծնվածը «ճոխ լինի ասեն, գլխավոր քաղաքաց, մեծատուն և զօրաւոր», մի այլ ժամի ծնվածը մուրացկան կլինի և «թափառական շրջի տուն ի տանէ և տեղի ի տեղւոջէ և հացիւ կարէ ժողովել զաւուրս ռոճկի»: Քաղդեացիները յերեխայի բախտն, ասում է Շիրակացին, վորոշում են վայրկյաններով: Բայց այդ, քննադատում է Շիրակացին, միանգամայն անհնար է.— մանկաբարձուհին, վորը զբաղված է յերեխայի կենդանի թե մահացած, տղա թե աղջիկ ծնվելու հարցերով և պորտը կտրելու գործով, յե՞րբ ժամանակ ունի վորոշելու յերեխայի վոր ժամանակ ծնվելու հարցը:

Շիրակացուն շատ է ջղայնացնում մանավանդ քաղդեյական այն զրույցը, ըստ վորի յերեխան համապատասխան առանձին ժամերի՝ կարող է չար ծընվել կամ բարի: Յեթե անմեղ յերեխան սկզբից չար է ստեղծվում, այն ժամանակ «յոյժ չար իցէ» նրա ստեղծողը, քննադատում է Շիրակացին: Այնուհետև, յեթե մարդու մեջ չարությունը նախորոք արարչից է դրվում, ինչո՞ւ համար է այդ դեպքում օրենքը, ինչո՞ւ համար են դատավորները, վորոնք պատժում են գողին, սպանողին, չարագործին: Ինչո՞ւ յեն նրանք պատժում չարագործներին ուղղելու համար, յերբ նրանք իրենց եյությամբ չար են ստեղծված և անկախ իրենց կամքից՝ չարություն պիտի անեն: Ին-

չո՞ւ համար են չքավորները ձգտում դեպի բարեկեցիկ կյանք, յերբ նրանց վիճակված է ընդմիշտ մուրացկան լինել:

Մեջ բերելով ու քննադատելով քաղդեյական մի շարք այլ զրույցներ ևս, Շիրակացին ջղայնացած բացականչում է, վոր բավական է նրանց անհամ պատմությունների մասին խոսելը:

9· Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում վո՛չ միայն հայ ժողովրդի կուլտուրայի, գիտության և պատմության համար, այլ և համաշխարհային կուլտուրայի, գիտության և պատմության համար: Շիրակացին դնում է գիտական մի շարք հարցեր և տալիս է դրանց ճիշտ լուծումը: Շիրակացու այդ աշխատության արժեքն ավելի ակնբախ դարձնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի փաստեր:

Շիրակացին, հիմնված «արտաքին գիտնականների» տեսակետի վրա, խոսում է յերկրի կլորության մասին. «Եւ եթէ ոք կամիցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել՝ իբր թէ զկայս երկրի նմանեցուցեալ, ինձ ի դէպ թուի ասացեալն ձու, որպէս նորա դեղինն ի միջին գնդաձև կառուցեալ կայ՝ և սպիտակն շուրջ զնովաւ, և խեճեպն պատ առեալ զամենայնիւ, նոյնպես երկիրս ի միջոյ կառուցեալ կայ, և աւդ շուրջ զնովաւ և երկինս պատ առեալ զամենայնիւ»:

Շիրակացին արեգակը մեծ է համարում յերկրագնդից: Այդ առթիվ նա բերում է բազմաթիվ որինակներ ու ամփոփում հետևյալ խոսքերով. «Եւ յայսմ ամենայնէ յայտ է, թէ մեծ է արեգակն ըստ վկայութեան աստուածային գրոց, որում և արտաքնոցն բարեաց ի ճահ պատահին վկայութիւնք»:

Շիրակացին գիտական ճիշտ բացատրություն է տալիս արեգակի խավարմանը. «...Արեգակն գեր ի վերոյ լուսնին է. և լուսինն դիպեալ ի ներքոյ արեգական... յորժամ հաւասարագոյգ լիցին՝ մինն զի իցէ ի վերոյ և միւսն ի ներքոյ կշիռ նմին և արեգակն բերանբացեալ հոսէ հեղլով զբոլորութիւն լուսոյն հանդէպ ուղիղ կշռութեամբ ի միջոյ լուսնին, ոչ թողու անցանել ի ներքին. անօսրութիւն օդոյն, որ սփռեալ տարածանի ընդ ծով և ընդ ցամաք»:

Շիրակացին ճիշտ ձևով է բացատրում մարդկանց լսողության և տեսողության ըմբռնողականության հարաբերության հարցը: Դրա առթիվ նա բերում է կայծակի և վորոտի որինակը: Ինչպե՞ս է վոր, հարց է տալիս Շիրակացին, կայծակը և վորոտը միասին են սկսվում, բայց մենք կայծակն ավելի շուտ ենք տեսնում, քան լսում ենք վորոտը: Դրա պատճառն այն է, բացատրում է նա, վոր «ակն երագ է քան զունկն և ակն փոյթ կարէ տեսանել զհուրն»:

Շիրակացին գիտե լուսնի սեփական լույս չունենալու և նրա արեգակից լույս ստանալու փաստը. «Ես հաւանիմ բազմաց իմաստասիրաց, յարեգականէ առել առնուլ զլոյս»:

Շիրակացին գիշերվա ճիշտ բացատրությունն է տալիս, համարելով դա յերկրի ստվերը. «Երկիր... ստուերաւն զմեզ գիշերացուցանէ»:

Շիրակացու այս աշխատության մեջ, նրա փիլիսոփայական հայացքնե-

քում կան դիալեկտիկայի որոշ տարրեր: Այսպես, նա իր աշխատության «Յաղագս ծովու» գլխում, խոսելով արեգակի տաքության և լույսի շնորհիվ աշխարհի վրա կյանք և կենդանություն ստեղծվելու մասին, ամփոփում է հետևյալ խոսքերով. «Լինելութիւն իցէ սկիզբն ապականութեան և ապականութիւնն դարձեալ իցէ սկիզբն լինելութեան: Զի յայսմ անվնաս հակառակութենէ աշխարհ առցէ զտևողութիւն»: Նույն դրույթն ավելի պատկերավոր օրինակով Շիրակացին կրկնում է իր նույն աշխատության 42-րորդ գլխում. «Տեսանելով զառաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ՝ իմացան զանցաւորութիւն կենաց իւրոց և ասացին թէ՝ է մեզ պատկեր»:— Նախնիքները տեսնելով լուսնի լրումը և նորելը, ասում է Շիրակացին, ասացին, թե իրենց պատկերի նման է:

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատությունն ունի գրական մեծ արժեք: Նա իր աշխատությունը շարադրել է գեղեցիկ օրինակներով, գեղարվեստական մեծ պատկերավորությամբ: Բավական է հիշել նրա գարնան նկարագրությունը «Յաղագս արեգական» գլխից. «Քաղցրախառն խառնուածովք յարդարէ գարունն իւրով մեծագեղ վայելչութեամբ, զի ի նմա արմատք արձակեն զբոյսս, մարգք զուարճանան, ծաղիկք պայծառանան, տունկք ցցուին, ծառք արձակեն զբողբոջսն, անասունք հանդերձ թռչնօք և ծովային ջրածնունդքն գեռնօք և ամենեքեան ըստ իւրաքանչիւր ազգի զան ի ծնունդ, ի սէր և ի սնունդ»: Նա այստեղ օգտվել է Բարսեղից:

5-րդ գլխում խոսելով որոտի յերկրի վրա ունեցած ազդեցության մասին, Շիրակացին հետևյալ ձևով է նկարագրում.

«Ի սաստիկ ճայթմանէ օդոյն շարժմամբ խռացեալ թանձրութիւն հողոյս թուլասցի, և ի դալարաբեր արմատոյն բոյսք խոտոյն վերընձիւղեսցին: Սոյնպէս և պտուղք ծայրիցն ծառոց բացեալ փթթիցին, և այլքն ըստ իւրաքանչիւր կարգի՝ զձմեռնային ծանրատաղտուկ թանձրութիւնս ի բաց ընկենուցուն, զարթուցեալք և զուարճացեալք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու զվայելչութիւն»: Գեղարվեստական նման հատվածներ Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության մեջ— բազմաթիվ են:

Սրանով, իհարկե, չի սահմանափակվում Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության արժեքը գիտության, կուլտուրայի և գրականության պատմության համար: Շիրակացու այդ աշխատության մեջ կան բազմաթիվ այլ արժեքներ, որոնք բոլորը թվարկել այստեղ, իհարկե, մեր նպատակից դուրս է:

10. Անանիա Շիրակացին իր «Առ խոստացեալսն» աշխատությունը գրելիս մեծ չափով օգտվել է հույն, հայ, քաղդեացի և այլ հեղինակներից: Նրա աշխատության մեջ կան այնպիսի տեղեր, ուր նա օգտվել է ամբողջ հատվածներով, կան անգամ տեղեր, որ նա բառացի արտագրել է: Այդ բանը նա չի թագցնում: Նա անունով հիշում է իր օգտագործած հեղինակների աշխատությունները: Նա մեծ չափով օգտվել է Բարսեղ Կեսարացուց, Գրիգոր Աստվածաբանից, Յեզնիկից, Փիլոնից և այլն:

Շիրակացուն ծանոթ է յեղել նաև նախաքրիստոնեական շրջանի հունական գիտությունը, գրականությունը և փիլիսոփայությունը, որոնցից նա մեծ

չափով օգտվել է: Սակայն նա օգտվել է քննադատաբար, չարադրելով իր սեփականը, օրիգինալը: Նրա մի շարք արտահայտությունները՝ «Ես ո՛չ ընդունիմ», «Ես ո՛չ հաւանիմ», «Ես զանց առնեմ», «Բավական է ճառել զանհամ պատմութիւնս նոցա», «ատելի է ինձ» և այլն, ցույց են տալիս Շիրակացու ինքնուրույնությունը:



Մի էջ Շիրակացու «Յաղագս կշռոց և չափոց» աշխատությունից:

Հասկանալի է, որ Շիրակացու առաջադրած գիտական մի շարք հարցեր, ունեն որոշ թերություններ և անճշտություններ։— Այդ չէ կարևորը։ Կուլտուրայի և գիտության զարգացման այն ժամանակվա մակարդակում նման անճշտություններ ու թերություններ անխուսափելի էին։ Կարևորն այն է, որ VII դարում, 1300 տարի մեզանից առաջ, Շիրակացին խիզախությամբ, այն ժամանակվա գիտության բարձունքներից դնում է գիտական մի շարք հարցեր և նրանց ճիշտ լուծում է տալիս։

Չպիտի թաքցնել, որ Շիրակացու մոտ կան կրոնական բովանդակություն ունեցող բազմաթիվ դրույթներ, տեղեր, ուր նա պաշտպանում է քրիստոնեյական այս կամ այն տեսակետը։ Իր աշխատության որոշ տեղերում նա հիմնավորումներ է բերում անգամ կրոնական գրքերից։ Սակայն սրանում Շիրակացուն դատապարտելու ոչ մի հիմք չկա։ Նա իր ժամանակի մարդն է և տվել է իր տուրքը։ Բացի այս, Շիրակացին անչափ վախեցել է հետապնդումից։ Որոշ դեպքում նա ակամա ստիպված է յեղել համաձայնվել ժամանակակից կրոնական գերիշխող դոգմաների հետ։ Թե նա որքան է վախեցել հալածանքներից, դա կարելի յե տեսնել յերկրագնդի հակառակ կողմում յերկրների և բնության համար արած իր մի ակնդումից, որը նա ներկայացնում է յերազի միջոցով. «Եւ արդ մի՛ զիս եպերէք, սիրելիք, գիտէ՛ ծածկագէտն, զի ո՛չ ստեմ։ Մինչդեռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի սրբոյն Եւգենեայ և միտք իմ յայս խորհուրդս ծփէին՝ քուն էառ զիս։ Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր։ Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկս ընդունէի զնա, և նա էր պատանի անմուրուս, ոսկեգիսակ, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օծեալ. և ինքն սպիտակս և փայլունս զգեցեալ հանդերձս. և լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն։ Ասացի ցնա՝ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՝ աղէ պատմեա ինձ, եթէ յորժամ ի մէնջ ծածկիս ո՞ւմ տաս լոյս, դո՞ն կենդանիք ի ներքոյ երկրի՝ եթէ ոչ։ Եւ նա ասէ՝ ո՛չ, այլ լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս...»։ Կասկած չի կարող լինել, որ Շիրակացին վախենալով հարցի բացարձակ դրումից, յերազի միջոցով է հայտնում իր կարծիքը։

11. Շիրակացու տիեզերագիտության և տոմարական աշխատության ներկա տեքստի համար հիմք է ընդունվել մեր մատենադարանի թիվ 2367 ձեռագիրը, որը, մեր կարծիքով, մեզ մոտ յեղած ձեռագրերից լավագույն տեքստն է։ Այդ տեքստում, բացառությամբ մի քանի բառերի, որոնց մասին հիշված է ներքևում, չեն կատարված ո՛չ գրչական և ո՛չ էլ կետադրության ուղղումներ։ Այդ ձեռագրի հետ համեմատված և ներքին լուսանցքում նշանակված են միայն Պատկանյանի հրատարակության խմբի, թիվ 2180 ձեռագրի և ամենահամառոտ խմբի ձեռագրերի տարբեր ընթերցումները։ Նշված են բոլոր նկատված տարբերությունները։ Մի շարք տարբերություններ, օրինակ՝ սա, դա, նա և այլն հաճախ գրված են լինում «յ»-ով—նայ, սայ, դայ, կամ «օ»-ն գրված է լինում «աւ»-ով, որոնք իբր յերկրորդական տարբերություններ, մենք ավելորդ ենք համարել նշել ներքին լուսանցքում, որովհե-

տե. նրանք տեքստը մեծացնելուց բացի վորևէ այլ արժեք ներկայացնել չեյին կարող։

Մենք նպատակ չենք ունեցել կազմել Շիրակացու աշխատության բոլոր ձեռագրերի համեմատական տեքստը։ Այդ նախաձեռնելու համար, պարզ է, վոր ձեռքի տակ պիտի ունենայինք այլ մատենադարաններում յեղած Շիրակացու յեթե վոչ բոլոր, ապա գոնե կարևոր ձեռագրերի տեքստերը։ Մեր նպատակն է յեղել այստեղ տալ Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստը և տոմարական աշխատությունը՝ նկատվող կարևոր գրչական տարբեր ընթերցանություններով՝ մեր մատենադարանի ձեռագրի սահմաններում միայն։

ԱՇ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

7 հունիսի 1940 թ.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

**Ա**=Պետ. մատենադարանի թ. 2180 ձեռագիր:

**Բ**=Պետ. մատենադարանի թ. 2762 ձեռագիր:

**Պ**=Պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած տեքստ:

**Գ**=Պետ. մատենադարանի թ. 1979 ձեռագիր:

**Դ**=Պետ. մատենադարանի թ. 1973 ձեռագիր:

**ՁՁ**=Ձեռագրերը:

**ՆՀԲ**=Նոր հայկազեան բառարան:

## ՑԱՆԿ ԳԼԽՈՑ ԳՐՈՑՍ
## ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆՒՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ


1· *Առ խոստացեալսն*

2· *Յաղագս երկնի*

3· *Յաղագս երկրի*

4· *Յաղագս ծովու*

5· *Յաղագս երկնային զարդուց*

6· *Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի են շարժմունք և տեսութիւնք*

7· *Յաղագս կաթին ծրոյ*

8· *Յաղագս հիւսիսային աստեղացդ*

9· *Յաղագս լուսնի*

10· *Յաղագս արեգական*

11· *Պատճառ Ճ եակ աղիւսակի եբրայեցոցն*

12· *Բուն շրջագայ ՇԼԲ ամաց*

13· *Զի՞նչ (է) ժամանակ և կամ զի՞նչ (է) հոլով Ժամանակաց*

14· *Զի՞նչ է ողոմպիադ*

15· *Զի՞նչ է ընդիքտիոնն*

16· *Զի՞նչ է Բեսեքիստոն*

17· *Զի՞նչ է յոբելեանն*

18· *Զի՞նչ է թուականն*

19· *Զի՞նչ է նահանջն*

20· *Զի՞նչ է նահանջից նահանջն*

21· *Զի՞նչ է Թ և Ժ երեակ*

22· *Զի՞նչ է ԻԲ եակք*

23· *Զի՞նչ է բռըմաղ*

24· *Զի՞նչ է կաղանդ և կաղանդիկոս*

25· *Զի՞նչ է նոնոսն*

26· *Զի՞նչ է իդոսն*

27· *Զի՞նչ է հնգեակն*

28· *Զի՞նչ է վեցեակ*

29· *Զի՞նչ է վերադիր*

30· *Զի՞նչ է Է երեակն*

31․ Զի՞նչ է միջոցն

32․ Զի՞նչ է լրումն պատկի

33․ Զի՞նչ (է)՝ որ Ե թիւ ժամ կատարեմք

34․ Զի՞նչ է՝ որ զԿ թիւն օր կատարեմք

35․ Զի՞նչ է որ Դ կրկնեմք զքանիս լուսնին՝ յորժամ գիշերի զորչափ գնալն կամիցիմք գիտել

36․ Զի՞նչ է՝ որ ԲԺ անապատկեմք՝ յորժամ ի կենդանատեսակն գյո–րումս կամիցեմք գիտել

37․ Զի՞նչ է՝ որ զեկամուտն ի նահանջէն յաւելլին աւելն երրայեցւոց և այլոց…

38․ Զի՞նչ է՝ որ ԺԲ ամիս է տարին

39․ Զի՞նչ է որ ՅԿԵ օր է

40․ Զի՞նչ է տարին և ամն

41․ Զի՞նչ է տումար

42․ Զի՞նչ է ամիսն

43․ Զի՞նչ է կրկնակ ամսոցն

44․ Զի՞նչ է կիսակ

45․ Զի՞նչ է շրջանն

46․ Զի՞նչ է՝ որ երթամք ԻԸ ԻԸ՝ յորժամ Է երեակ առնեմք

47․ Զի՞նչ է գնալն ԻԸ ԻԸ Ն և զԴ մասն ի վերայ բերել

48․ Զի՞նչ է՝ որ երթամք ԺԹ ԺԹ յորժամ վերադիր առնեմք հռոմի

49․ Զի՞նչ է՝ որ ի Ժ երրորդ կանոնին թիւ մի յաւելու

50․ Զի՞նչ է բազմապատկեալն յաւելուլ

51․ Զի՞նչ է ըստ նահանջից պակասեցոյ

52․ Զի՞նչ է ըստ ԹԺ երեկաց յաւել

53․ Զի՞նչ է Ը հանապազորդ երթն

54․ Զի՞նչ է երթն Լ Լ

55․ Զի՞նչ է Գ ի վերայ բեր կամ Դ ի՟բաց երթ

56․ Զի՞նչ է՝ որ օրն ԻԴ ժամ է

57․ Զի՞նչ է՝ որ ժամն Լ մասն է

58․ Զի՞նչ է՝ որ թաւալմամբ գնայ արեգակն

59․ Ո՞րպէս գիտացին թէ թաւալի արեգակն

60․ Զի՞նչ է՝ որ Շ ասպարէզ է Ա առաջխաղացումն արեգական

61․ Զի՞նչ է՝ թէ մինչ Ա թաւալի արեգակն՝ մէկ մասն անցանէ յօրէն և մինչ Լ թաւալի՝ ժամ մի

62․ Զի՞նչ է՝ որ ի գիշերի ընդ երկրաւ դառնայ արեգակն

63․ Զի՞նչ է՝ որ ամսամտին ասէ՝ կալ թիւ մի

64․ Զի՞նչ է կալ հանապազ Լ

65․ Զի՞նչ է՝ որ ասէ կալ հանապազ ԽԵ

66․ Զի՞նչ է՝ կալ ԺԳ և զնահանջն

67․ Զի՞նչ է՝ որ յայտնութեան ոչ ասէ արկանել ի վերայ, այլ ասէ՝ կալ զնահանջն և տուր մեհեկի

68· Զի՞նչ է որ ասէ՝ կալ Ղ զվերադիրն երթ առանց կիտակի

69· Զի՞նչ է կալ ԽՋ

70· Զի՞նչ է որ ասէ՝ թէ քան զհասարակածն աւելի է ի նոյն ամսեան է լրումն և թէ պակասէ՝ յառաջին ամիսն ելանէ

71· Զի՞նչ է թուական հռոմայեցոց

72· Զի՞նչ է՝ կալ մինչև յ ԼԴ ամն Յուստիանոսի կայսեր և ց ԻԴ Խոսրովու պարսից

73· Զի՞նչ է տեսանել զնահանջ կամ ԺԹ երեակ

74· Զի՞նչ է ած ի վերայ ԹԺ երեկին

75· Զի՞նչ է երթ ըստ նահանջիցն Ա և թող

76· Զի՞նչ է ԺԷ ն ապրիլի և կամ ԻԵ ն մարտի· ո՛չ նահանջ՝ և ոչ բազմապատիկ

77· Զի՞նչ է՝ որ ի մարտի և յապրիլի լինի ԺԴաներորդն զատկաց

78· Զի՞նչ է՝ որ ի փետրուարի վերջին աւուրն անկանի օրն նահանջի

79· Զի՞նչ (է) Ա թիւ որ յաւելու յէերեակն

80· Զի՞նչ է բոպէն

81· Զի՞նչ է Ե երորդ աւուրն աւելեաց

82· Զի՞նչ է՝ որ ի մարտի Ի է հասարակածն միշտ

83· Զի՞նչ է լոյսն գերազանց։

84· Պատմութիւն յաղագս գերագս գիտելոյ սաղմոսիւք՝ և մեկնելոյ։

# ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆՈՅ
# ԱՌ ԽՈՍՏԱՑԵԱԼՍՆ

[478ա]

## Ա. ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ ԱՌ ԽՈՍՏԱՑԵԱԼՍՆ

*Զխոստացեալսն մեր հատուսցուք զբան՝ յարտաքնոցն առեալ զառարկութիւն. որպէս զի յետոյ յեկեղեցականն ելեալ մեր՝ զեղեցիկ հետևեսցի շարադասեալ ընդունակք: Զի և օրինակն այսպէս և ճշմարտութիւն կարգաւորեցաւ: Արդ՝ ես կամիմ ուսանիլ յարտաքնոցն յա՛յնցանէ, ուստի Պօղոս ինձ հրամայէ. և զանց առնել զհեթանոսական խելագարութեամբն՝ բանդագուշեալ իմաստնոցն ճառիւք, որք զաստուած ո՛չ կամեցան ճանաչել. և պատճառս լինելու-*
էջ 102 *թեան զհիւղէ ասացին և նիւթ գոյիցս եղելոց: Զորոց || ո՛չն երկրորդեսցուք ճշդիւ, և ո՛չ ընդդիմադրեսցուք իբր արդարև զարհուրելիս: Բաւական է նոցա կշտամբութիւնն՝ որ ի Սրբոց Հարցն: Բայց հաւանիմ յիսկզբանն փոքր ինչ յիշատակել և զանաստուածիցն բարբաջանս՝ և ի նոյն լքանել և այս՝ զի քաջալաւութիւն վեհագունիցն առաւել գեղեցկապէս երևեսցի: Եւ եթէ յայլում ուրեք վայրի յիշեսցուք զառ ի նոցանէն ճառեալ բան ինչ դուզնաքեայ, նոյն պատճառ է վասն ճոխացուցանելոյ զլաւացն՝ վատթարացն յիշատակաւ: Այլ ինձ ասելի է յարտաքնոցն բարեաց վկայութեանց, ըստ սրբոյն Պօղոսի ճառել յաստուածածան իմաստնոցն՝ որք զմի աստուածութիւնն խոստովանեցին՝ ա-*
[478բ] *նեղ և ամենակատար, պատ||ճառ ամենայն եղելոց՝ երևելեաց,*

4 Ա—զառակութիւն
9 Ա—բանդայգուշեալ
10 Ա—«զամենայն» փխ. «զաստուած» (բնագրում եղել է «զած», գրիչը սխալմամբ կարդացել է «զամ», այն է «զամենայն»)
13 Բ—կշտամբութիւն
18 Ա—ճառել

և իմանալեաց: Ոմանք ասացին Թէև սրբոյ երրորդութեան իմացան նոքա զխորհուրդս. զոր և երանելի աստուածաբանն Գրիգոր յիշէ ասելով, Թէ յորժամ յաղագս առաջնոյ և ևս երրորդի պատճառին իմաստասիրէին՝ զայս ոմանք կարծեցին սրբոյ երրորդութեանն լինել խորհուրդ: Բայց ես ո՛չ հաւանիմ, քանզի աստուածային առաքեալն ասէ. «Զխորհուրդն որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանցն՝ որ այժմ յայտնեցաւ»: Եւ ինքն փրկիչն ասէ. «Գոհանա՛մ զքէն, Հա՛յր, էջ 103 տէ՛ր երկնի և || երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի դիտնոց»: Իսկ մարգարէիցն բանք որ ինչ յաղագս սրբոյ երրորդութեան են Աստուածային հոգւոյն ազդումն: Բայց մարդկայինն իմաստութիւն այնմ մեծութեան ո՛չ եղև հասու: Բայց զմինն ճշմարտապէս ծանեան զաստուած. և փառաւորեցին բանիւ և գործով: Բանիւ խոստովանել զովելով զարարիչն ամենայնի, և գործով մաքուր լինել յախտից և յամենայն ցանկութեանց և ի զբաղմանց աշխարհականաց ազատեալ առանց ամուսնութեան միանձունք զմիայնաւորութեան կալեալ զվարս. որք զորովայնս դաստիարակեցին պարկեշտութեամբ: Քանզի ո՛չ միս և ո՛չ ձուկն ուտէին՝ և ասէին. մի՛ արասցուք զորովայնս մեր գերեզման այլոց կենդանեաց. այլ միայն բանջարաւ և պտղով ծառոց [479ա] կերակրէին. նոքա || միշտ զհետ բարեաց գործոց երթային. պարապէին զանազան իմաստից քննել և ճառել: Յորոց և մեր առեալ նիւթ ի մերումս շարադրեսցուք բանի, սկսեալ յերկնէ և եկեալ յերկիր: Եւ դարձեալ անդրէն ի յերկինս համբարձեալ՝ խորհրդով զարդուն հրճուեցայց յառաջ խաղացուցեալ զբանս՝ ճառ զճառից ելևել արարից:

էջ 104

## || Բ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ

Ճշմարտիւ Թուի ինձ և ամենեցուն որք են ի տեսական ուսումնասիրութեան, և ի քաջ առաջնոցն ասացեալքն բանք ո՛չ ինչ անճառելի է. և մտաց ո՛չ ինչ հասանելի է:

1 Ա—երորդութեանն
9 Ա—իմաստնոց
11 Ա—ասդումն

12 Ա—մարդկաին
17 Ա—ազատել

Իսկ արդ՝ որովհետև ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է թէ և յանմարմինն ելցուք տեսակ. ապա ուստի արժանն է՝ սկսանելի է: Իսկ սկսանելին ասի յանսկիզբն է ումեմնէ. ապա ուրեմն անսկիզբն անասաց և անճառելի մնաց, սակայն իմանալեաւն իմանի: Իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի: Իսկ միտքն զիա՞րդ կարասցեն հասու լինել անճառելոյն, եթէ ո՛չ ունիցի յանգութիւն ի նմին իմանալոյն: Իսկ որ ունին յանգութիւն, բերէ և զնորին ճշմարտութիւն: Արդ՝ եթէ ինքն իմանալին կամեսցի, նորուն յանգակցի մտացն եկեսցէ ի ճառելին: Ո՛չ զորպիսութիւնն գիտելով, այլ զէութիւն գոյութեանն իմանալով: Քանզի որ իմանալին է՝ և անեղ է: Իսկ որ անեղն է՝ նոյն և անարար է. իսկ
[479բ] որ անարարն է՝ նոյն և ան||տեղի է. ինքն է տեղի ամենեցուն: Եւ որ անարարն է, արարիչ է բոլորեցուն: Ասացաք զնա և անեղանելի. ապա յայտ է թէ եղեալքս ի նմանէ սկիզբն առին լինելոյ. իսկ յորմէ սկիզբն առին, նա գեր
էջ 105 ի վերոյ մնաց քան զսկսեալս: Այսպէս փիլիսոփայքն || բարիք միաստուածութիւն խոստովանելով հրէաբար ասացին՝ թէ որպիսութիւն նորա ո՛չ մտօք նկատի և ո՛չ բանիւ բովանդակի. և նա՛ է սկիզբն և արարիչ երևելեաց և իմանալեաց: Եւ եղեալքս ի նմանէ են թուով չորք: Առաջինն՝ հուր: Երկրորդն՝ հողմ: Երրորդն՝ հող: Չորրորդն՝ ջուր:

1 Գ—տեքստը սկսվում է «Արդ որովհետև ի մտաւորն եկաք բան.»։
2 ԱԲ—տեսակք (Գ. տեսակ)
4 Գ—«ապաքէն» փխ. «ապա»
4 Ա և Բ—անասաց չիք
5 Ա և Բ—«իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի» չիք.
6 Գ—կարիցեն
6–7 Գ—«ա..ելւոյն» փխ. «անճառելոյն»
8 Գ—«զնորա» փխ. «զնորին»
8 Գ—զճշմարտութիւնն
9 Գ—յանկակցի, ԱԲ—յանգանկցի (ուղղումը մեր կողմից է)
10 Գ—«ճառելին» փխ. «ի ճառելին»
10 Բ—որպիսութիւն

12 Գ—«անեղ» փխ. «անեղն»
12 Բ—որ անեղ է
12 Գ—անարար
16 Գ—յումմէ սկիզբն առին
17 Գ—«բարի փիլիսոփայքն» փխ. «փիլիսոփայքն բարիք»
19 Գ—«եթէ» փխ. «թէ»
19 Գ տեսութիւն
19 «կամ» փխ «և ոչ»
19—20 Ա—բովանդակի
20 Գ—«ամենայնի» փխ. «երևելեաց և իմանալեաց»
21 Գ—չորս
21 Գ—«առաջինն» չիք
22 Գ—«երկրորդն», «երրորդն» և «չորրորդն» չիք

Եւ զհոգւոյն փչումն աստուածային ասացին և ո՛չ նիւթական
արարած՝ այլ աննիւթ, թէպէտ և արարած. և գիտելի է
նմա՛ միայնոյ՝ որ արար զնա: Այլ երկինք և երկիր և որ
ի միջոցիս են հաստատութիւնք ամենայն որ ի նոսա, յա՛յս
նիւթոց կազմեցան՝ հրամանաւ արարչին. և ունին խառ-
նուածս միաբանութեան առ միմեանս հաղորդութեամբ: Եւ
է հրոյ բնութիւն՝ ջերմ և ցամաք: Եւ օդոյ բնութիւն՝
ջերմ և խոնաւ: Եւ ջրոյ բնութիւն՝ խոնաւ և ցուրտ: Եւ
հողոյ բնութիւն՝ ցուրտ և ցամաք: Եւ ի հա-
ղորդելն ընդ միմեանս՝ առնուն և ի բնութենէ մի-
[180ա] մեանց: Արդ՝ սոցա արարիչն յառաջագոյն նախ||ախնամու-
թեամբն տեղի ոչ պատրաստէր, քանզի մարմին գործէր:
Իսկ մարմնոյ դիրք հաստատութեամբ պիտոյ էին. իսկ
հաստատութիւն նախ և առաջին՝ որ զտեղին ունիցի. և
այլ երեքն ևս ըստ նովաւ յարմարեալ պատկանիցին: Արդ՝
ահա՛ հասաք ի կէտն՝ ո՛չ ի դուզնաքեայ, այլ ի
Ջ 106 մեծ և ահագին երկնին վերին, որում || յոյնք եթերն
կարդացին. և հելլենացիք հուր թաղկեալ ասացին, զորս
և բազումք յեկեղեցւոյ հաւանեցան: Թէպէտ և չարաց
փիլիսոփայիցն ո՛չ թուեցաւ հաճոյ. քանզի կէսքն ի նո—

1 Պ—աստուածային փչումն
2 ՊԴ—«արար աստուած» փխ. «արարած»
3 Ա—միայնոյ, Պ—միայն
4 Պ—(«միջոցիս» կրճատված է մինչև «որ ի»)
5 Պ—«ի նիւթից» փխ. «յայս նիւթոց»
5 Պ—ավելացրած «որ արարն զնա»
5 Պ—ունի
6 Պ—հաղորդության
7 Պ—բնութիւն հրոյ
7 Պ—«բնութիւն» չիք
9—10 ԱԲ—հաղորդեալն
13 Պ—հաստատութեան
14 Պ—«ևս» փխ. «և առաջին»
14 Պ—զտեղի
15 Ա—ընդ նովաւ (ըստ գործիականով անսովոր է, բայց մենք պահեցինք, վորովհետև բնագրում այդպես էր)։
16 Ա—ոչ է
17 Գ—տեքստն սկսում է «արդ յոյնք...»
17 Պ—մեծն
17 Պ—յահագին յերկինն
17 Պ—եթեր
18 Ա—հելլենացացիք
18 Պ «քաղդեացիք» փխ. «հելլենացիք»
18 Պ—«որում» փխ. «զորս»
19 Ա—եկեղեցոյ
20 Ա—փիլիսոփայոցն
20 Պ—«թուեցաւ հաճոյ»-ից հետո կրճատված է մինչև 5-րորդ էջի 21-րդ տողը—«աւելորդ է մեզ»

ցանէ երկինս բազումս և աշխարհս անհամարս ասացին:
Եւ կէսք ի նոցանէ ի մի տարր երկնի զերկինս ամենայն
ձուլեալ ասացին. և զնիւթոյն ասացին՝ եթէ է այլ իմն
բնութիւն պարզ, օտար ի չորից բնութեանց, զի ո՛չ հուր է և
ո՛չ օդ, ո՛չ հող և ո՛չ ջուր, այլ ա՛յլ իմն է ասեն, լու-
սաւոր և խիստ, որպէս զբնութիւն պաղպաղակի. և կամ որ-
պէս զվանակնէ, ասեն, եթէ ի ջրոց որ պաղեալ խստանան
մեծաւ հաստատուն կցուածով առնու փոփոխումն՝ գալ ի
կերպարանս ականց պատուականաց. և ասեն՝ եթէ վանակն
պայծառ լուսաւորութեամբն և պաղպաղակն մաքուր և
[480բ] յստակ դեղեցկութեամբն՝ նման են լուս||աւորութեան օդոյ
և ջրոյ, յորոց առնուն նորա զօրինակն նիւթոյ հաստատու-
թեան: Բայց ինձ արդարև ծաղու և ապերանաց արժանի
թուին, որք զանձինս առ իմաստունս ունէին և յիմարեցան:
Որք զերկին և զերկիր անսկիզբն և անկատար ասացին,
որպէս ոք զի տեսանիցէ դիր բոլորակ դրոշմեալ յումէ և
իցէ. և վասն զի ո՛չ էր ինքն ի տեղն, յորժամ հանաւ դիրն
էջ 107 բոլորակ. և չերևի թէ ուստ||ի՞ իցէ սկսեալ. և կարծիցէ
թէ անսկիզբն է: Բայց պարտ է նկատել մտօք, եթէ որ
եհանն զնա անդէն, արար նմա սկիզբն. և նոյն բոլան-
դակեաց զնա կատարմամբ: Եւ արդ՝ աւելորդ ե մեզ վասն
նոցա յերկարաբանել, լքեալ թողցուք զխոտեալսն և դարձ-
ցուք անդրէն ի կէտն ահաւոր, որ է երկինն վերին, որում
յոյնք եթերն կարդացին և հելլենացիք հուր թաղկեալ
ասացին: Եւ է նա մարմին անչարչարելի, հուր պարզ,
ո՛չ յումեքէ և ո՛չ ոք ի նմանէ, ինքն յինքենէ, ինքն ա-
ռանձինն մարմին անհաստ.,անտեղիտալի, անկորանալի, ան-

6 Ա—զբնութեան
9 Բ—զգալ ի կերպարանս
12—13 Ա – հաստատութեանն
16 ԱԲ—«յումէ» փխ. «յումմէ»
17 ԱԲ—«ի տեղն» փխ. «ի տեղւոջն»
19 Ա—նկատեալ
20 ԱԲ—էհանն
21 Գ—մեզ աւելորդ է
22 Գ—«զնոցայն ճառել» փխ. «վասն նոցա յերկարաբանել»
Ա—երկարաբանեալ
23 ԳԴ—«որ է երկինն վերին» չիք
24 ԱԳ—եթեր
24 ԱԲ—թախկեալ
24 ԳԴ—«քաղդէացիք» փխ. «հելլենացիք»
26—27 Ա—«առ առանձինն» փխ. «առանձինն»

խորշ, անփոթ, անգոգ, պատ առեալ զամենայնիւ, փակեալ զգոյսս ընդ իւրև տարածեցաւ, կալաւ բոլորն բոլորակ [481ա] || երկնից Թաղուն սերտութեամբ զտարերս ընդ լուրեաւ. և բաւական եղև մեծատարած շրջան նորա՝ որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա բոլորակ գնդաձև՝ զոր նոքա կատարեալ ձև յաւիտենական կոչեն՝ շրջագայ անդադար երագութեամբ անչափելի և անթուելի և անտեսանելի. միայն իմանալի. ո՛չ ամենեցուն՝ այլ միայն որ ղիմանալիսն իմանան. ո՛չ որպէս կամին, այլ որպէս ի գոյացութիւն շրջագայութեան, զոր և պրկումն Լջ 108 անուանեն: Եւ || ի ներքոյ պրկմանն ըստ նմին ձևացեալ կայ Հաստատութիւնդ՝ զոր կոչեմք երկին, և ասեն զդմանէ թէ ջուր է և օդ: Ո՛չ պաղեալ և ո՛չ թանձրութեամբ խըստացեալ: Այլ ջուր է ճշմարիտ լոյծ բնութեամբ՝ որպէս զաստիս. և օդոյն փչեալ ուռուցեալ դոդեաց որպէս պղպըջակք որ փչեալ բոլորին օդով և ի խոնաւութենէ անձրևաց, և առնուն կերպարանս ըստ օրինակի դմբեթաց. նոյնգունակ և Հաստատութիւնդ փչեալ օդով բոլորեալ պատ առեալ զերկրաւ. և օդ թանձր և Թաղուն, և ամենևին բնութիւն ցուրտ առաւել ի ներքոյ մտեալ ի մէջ նորա շուրջ դերկրաւ պրկեալ ումի: Եւ ի ներքոյ պրկմանն [481բ] արգելեալ սաստկութիւն հողմոց || վերնոց և ներքնոց՝ և ի

1 Պ «անփոփ» փխ. «անփոթ»
1 ԱԲ—«պար» փխ. «պատ»
2 Գ—«իւրեաւ» փխ. «իւրև»
2 Ա—զզգոյսս
3 ԱԲ—«ինեաւ» փխ. «իւրեաւ» (Թերևս բնագրում յեղել է ինքեամբ)
4 Բ—մեծարարած
6 ՊԳ «նոքա» չիք
6 ՊԳ—«տարածեալ» փխ. «կատարեալ»
6 ՊԳ—ձև յաւիտեան
7 Դ—«շուրջ գայ» փխ. «շրջագայ»
8 ՊԳ—«և անտեսանելի» չիք
9 ԱԲ—«միայն» չիք
9 ԴՊ—«որք» փխ. «որ»
10 ԱՊ—գոյացութեան
12 Ա և Բ—«զդմանէ» չիք
13—14 ՊԳ — «խտացեալ» փխ. «խստացեալ»
14—15 ՊԳ—որպէս զաստիս լոյծ բնութեամբ. Ա—զաստիս
15 ՊԳ—«գոգացեալ» փխ. «դոդեաց»
15—16 ՊԳ—պղպջակ
16 ՊԳ—«բոլորովին» փխ. «բոլորին»
19—20 ՊԳ — «ամենայնիւ» փխ. «ամենևին»
21 ՊԳ—«ի ներքս» փխ. «ներքոյ»
21 ՊԳ—«պատեալ» փխ. «պըրկեալ»
21 ՊԳ—չիք Եւ
22 ՊԳ—հողմոյն վերոյ և ներքոյ

մէջ առեալ փակեաց զմեծ մարմինս զայս զերկիրս: Քանզի
ըստ ձևոյ բուն երկնին և սա բաղկացաւ՝ զկատարեալ ձևն
առեալ և սա՝ շրջագայ անդադար ի նմանէ հարկաւորեալ:
Եւ ձև բոլոր շրջագայլին՝ բաժանի յերկուս կիսագունդս,
զի իցէ մին ի վերոյ և միւսն հայեցի ի ներքոյ: Եւ հա-
յեցուածք երկուց կիսագնդիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ
ի վերին և ի ներքին տրամագիծսն: Քանզի յորժամ պատ
էառ վերին շրջագայութիւնն զմեծ զաշխարհաւս զայս՝
մնաց արտաքոյ եղելոց նիւթոցս և ո՛չ ինչ, և ամենայն որ
էջ 109 ընդ նովաւ ըստ նորին ձևոյ բաղ||կացեալ: Ո՛չ միայն երկ-
րորդ երկին զոր կոչեմքդ հաստատութիւն, այլ և օդն թա-
ղուն որ ընդ նովաւ, և զարդն որ յօդն. և միանգամայն
ամենայն մինչև ցներքին անօսրութիւն օդոյս: Եւ եթէ ոք
դժուարեսցի՝ և կամիցի օրինակ ցուցական խնդրել, տես-
ցէ՛ զի լոյծ բնութիւն ջուրց անձև է և անորակ. և եթէ
կամիցի ոք զնա ձևացուցանել ի տեսիլս ինչ՝ այսպէս,
եթէ արկանիցես է տիկ նոխազաց՝ զնորին եբեր
ձև: Նոյնպէս և ըստ նմանութեան բուն երկնի՝ և
ջուրն և օդն ձևացան: Զայսոսիկ արտաքինքն ասացին՝
[482ա] և ես հաւանիմ նոցա. մի՝ վասն շուրջ դալոյն || երկ-
նից, զի և աստուածային գիրք վկայեն. որպէս Յովբայն
ասաց տէր. գիտիցե՞ս զշրջանս երկնից: Եւ դարձեալ մին
վասն երկու երկին եղելոյ. որում նոյնպէս աստուածային
գիրք վկայեն՝ երկինք երկնից ասելով, որպէս յիսկզբանն
յայտնապէս ցուցանէ երկու լինել զոր կոչեն արտաքինքն
երկին և բուն երկին: Բայց վասն նիւթոյ հաստատութեանդ
միւսոյ երկնիդ ջուր և օդ լինելոյ՝ բազումք յեկեղեցւոյ

1 ԱԳԲ—չիք «զայս»
2 ՊԳ—«երկնի» փխ. «երկնին»
2 ՊԳ—կատարեալ զձևն
6 ԱԲ— կշիռն
6 Ա—«ուղեղ» փխ. «ուղիղ»
7 ՊԳԴ—«տրամագիծսն» բառից հետո կրճատված է մինչև 18-երորդ տողի «Նոյնպէս» բառը։
13 Բ—աննօսրութիւն
14 Ա—խնդրեալ
19 ԱԲ—«ձևացաւ»
20 ԱԲ—մին
23 ՊԳԴ—«լինելոյ» փխ. «եղելոյ»
24 ՊԳԴ—«երկինք երկնից ասե-լով» չիք

վկայեն նոցա, որպէս Հայաստանեայցս վարդապետ Սուրբն Գրիգորիոս ասէ՝ Ջրեղէն հաստատութիւն երկնից: Եւ երանելին Բասիլիոս ի վեցօրեայ գրին իւրում ասէ, թէ [էջ 110] զվերին վայրս օդոյն հան||դերձ խոնաւութեամբ ջրոյն երկին կոչէ, ըստ այնմ զի ասէ Թռչունս երկնից: Արդ՝ զի՞ ասէ Թռչունք երկնից՝ ի յերկրէ լեալք և կերակրեալք, և ի սմա մեռեալք, զիա՞րդ իցեն Թռչունք երկնից: Եթէ ո՛չ զվերանալն ի յօդս կոչէ: Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բասիլիոս, եթէ յորժամ օրհնէրն Մովսէս զազգն Յովսեփայ՝ ասէր ի ցօղոյ երկնից: Եւ յորժամ դնէր անէծս Իսրայելի՝ ասէր. Արարից ի վերա քո զերկինս պղնձի: Եւ զի՞նչ իցէն միտք բանին՝ եթէ ո՛չ ամենևին երաշտութիւն: Զի յօրինուածոյ պտղոց երկրի պատճառք օդոյն խոնաւութիւն է՝ որ անուանեցաւն երկինք, որպէս ասէ ի ցօղոյ երկնից, [483ա] զխոնաւութիւն ջուրցն յայտ առնէ՝ զոր || ունի օդն վերին, որպէս ցանի զաշխարհաւ ի պարզ ժամանակի: Զայս ասէ Բասիլիոս: Բայց զնիւթոյ բուն երկնէ՝ բազումք բազում ինչ ասացին. որք և յեկեղեցւոջ ոմանք վկայեն նոցա: Եւ ոմանք այլ ինչ ասեն հանդոյն Փիլոնի՝ թէ միտք են և ո՛չ նիւթական ինչ: Եւ վասն երրորդ երկնի արտաքինքն ո՛չ հաւանին, և ո՛չ բնագիր ինչ մեզ յայտնեաց: Բայց վասն

2 Գ—հաստատութիւնդ
2 Գ «եւ» չիք
3 ԳԴ—«Բարսեղ» փխ. «Բասիլիոս»
3 ԳԴ «գրին իւրում» չիք
4—5 ԳԴ—«երկինս» փխ. «երկին»
5 ԳԴ—«կոչեաց» փխ. «կոչէ»
5 ԳԴ—«թէ» փխ. «զի ասէ»
5 ԳԴ—թռչունք
6 Գ—«զի՞ ասէ» չիք
7 ԳԴ—«թռչունք» չիք
8 ԳԴ—«յօդն» փխ. «յօդս»
8—9 ԳԴ—«Բարսեղ» փխ. «Բասիլիոս»
9 ԳԴ—օրհնէր
9 ԳԴ—Յովսէփու
11 ԱԲ իցէ
13 ԳԴ—պտղոյ
13 ԳԴ—պատճառ
13 Գ—խոնաւութիւնն է
14 ԳԴ—անուանեցաւ
14 ԳԴ—«ասելով» փխ. «ասէ»
15 ԳԴ—«օդն ի վեր» փխ. «օդն վերին»
16 ԳԴ—ցանէ
16 Ա և Բ—«ասէ» չիք
17 Գ—«Բասիլլիոս»-ից հետո կրճ. մինչև գլխի վերջը:
17 ԳԴ—«երկնից» փխ. «երկնէ»
18 Ա—«որ» փխ. «որք և»
18 ԳԴ—«և» չիք
18 Ա—յեկեղեցոջ
19 ԳԴ—«եթէ» փխ. «թէ»
21 Գ—«բնագիրք ինչ ոչ» «յայտնեցին մեզ»

ի Պօղոսէ կոչելոյ՝ ես այսպէս հաւանիմ եթէ զերկրէս ասէ, զի ուր աստուած է՝ նա երկին կոչի: Եւ փրկչին մերոյ Քրիստոսի աստուծոյ ի վերայ երկրի շրջելով՝ երկին ա-
էջ 111 սեմ կոչել ի Պօղոսէ. մանաւանդ || զի դրախտն յերկրի՛ս և ո՛չ յերկինս իմանի:

## Գ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐԻ

Զերկիր ոմանք յարտաքնոց բարեաց փիլիսոփայիցն ասացին թէ՝ ձևացեալ է իբր սկուտեղ: Եւ ոմանք ասացին իբր զգունդ: Եւ ոմանք որպէս քուեայ յերկեռեակ դիմի, և ի միջոցի երկնի կառուցեալ՝ սաստկութեան հողմոյ ի ներքոյ մտեալ համբարձեալ ունի զերկիր ի վեր. և ընդ անդայութեան ցան և ցիր հողոյն երկրի խառնեալ մանրասիկ խոնաւութիւն ջուրց. և հողմոյն սաստկութեամբ ի վեր փչելով, և երկրիս թանձրահող ծանրութեամբ ի վայր կալով կափչի հողն յիրեարս, և ճնշի իբր ի մամուլս՝
[483ա] մանրասիկ խոնաւութիւն || ջուրցն ի վեր կոյս. և խտանայ երկրային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ և լինի սալայատակ հաստատրամ անփապելի և անպայթելի. նեցուկ անվթար զբազմութիւն ջուրցն յինքեան ունելով. զոր և ծով անուանեմք: Եւ քանզի երկիրս չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ո՛չ թոյլ տայ սմա երկին իւրով երագութեամբն ի ներքին կիսագունդն խոնարհել: Քանզի երկիր իւրով

1 ՊԴ - «թէ» փխ. «եթէ»
1—2 ՊԴ—«ասիցէ» փխ. «ասէ»
3 ՊԴ—«երկինք» փխ. «երկին»
7 ՊԴ—«յարտաքնոց» չիք
9 Պ—իբրև զգունտ
9 Պ —երկեռակ
9 Պ —«դիմի» չիք
10 Պ—միջոցին
10 Բ—սաստկութիւն
11 Պ—«զերկինս» փխ. «զերկիր»
12 Պ—անդայութիւն
13 Պ—հողմոց
14 Պ— «թանձրութեամբ հողոյն» փխ. «թանձրահող ծանրությամբ»
15 Պ «իբրև» փխ. «իբր»
16 ԱԲ—խոնաւութեանն
16 Դ—«խստանայ» փխ. «խտանայ»
18 Ա և Բ—հաստատատրամ: Ուղղեցինք ըստ Պ-ի
18 Պ—«անպախելի» փխ. «անփապելի»
18 Ա—անպայթել
19 Պ—«զբազում ջուրս»
20 ԱԲ—երկրի
22 Բ—խոնարհիլ

ծանրութեամբն հակէ ի վայր իջանել՝ և հողմն իւրով ուժգնութեամբն ջանայ ի վեր բերել զնա: Եւ ո՛չ ծանրու-
էջ 112 թիւն երկրիս || թողացուցանէ ի վեր բերել. և ո՛չ ուժգնութիւն հողմոյն թոյլ տայ ի վայր իջանել: Եւ այնպէս ղհասարակակշիռ կէտն կալեալ կայ: Եւ չերկոցունց հակառակաց միջոցն զտրամագիծն ունի: Իսկ կայեան սորա ի տրամագիծ անդր զուղղանկիւնսն չորեսին առ միմեանս հայեցուցանէ, և ի հայել ուղղանկիւնեացն առ տրամագիծն միջին՝ զամենայն հարթարդակ զուգամասն զլեռնայինն և զդաշտայինն և զծովայինն յարմարեալ անվնաս պահէ: Զի որք այսսեն՝ անկասկած առցեն զլինելութիւն հրամանաւ արարչին: Եւ եթէ ոք կամիցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել՝ իբր թէ զկայս երկրի նմանեցուցեալ, ինձ ի դէպ թուի ասացեալն ՝իբրև ձու. որպէս նորա դեղինն ի միջին զնդաձև կառուցեալ կայ և սպիտակն շուրջ զնովաւ, և խեճեպն պատ առեալ զամենայնիւ: Նոյն-
[483բ] պէս երկիրս ի միջոյ կառուցեալ կայ, և օդ շուրջ || զնովաւ, և երկին պատ առեալ զամենայնիւ: Դարձեալ եթէ առցէ ոք աման խեցեղէն, և արկցէ անդր ջուր, ձէթ և աւազ, ահա յայտնի երևեցաւ: Աւազն կալաւ զներքին կողմն ամանոյն, և ձէթն զվերինն, իսկ ջուրն հարկաւորեալ ի միջոցին կառուցաւ, և մարմին ամանոյն պատ առեալ զա-

3 Ա—վայր
3 Ա—բերիլ
4 ԱԲ—«թոյլ» չիք
5—6 Գ—հակառակացն
6 Գ—«միջոցն» չիք
6 ԱԲ—զտրամագիծսն
7 Գ—տրամագծի
7 Գ—անդ
7 Գ—չորեսեան
8 Գ—ուղիղ անկեանցն
8—9 Գ—տրամագիծսն
9 Դ—հարթ արդակ
9—10 Գ—զլեռնային և զդաշտային և զծովային
11 Գ—ի սայս են, ԱԲ—այսսեն (անշուշտ խաթարված բառ)։
12 Գ—կամեսցի
13—14 Գ—նմանեցուցանել
14 ԱԲ—«իբրև» չիք
15 Բ—դեղին
15 Դ—գնդատեսակ
17 Ա—միջոց, Գ—միջոցին
17 Գ—«ապա» փխ. «օդս»
19 Գ—անդ
19 Գ—և ձէթ
21 Դ—ամանին
22 Ա—ի միջին
22 Գ—ամանոյն մարմինն

էջ 113 մենայնիւ։ Իսկ եթէ տարերքս այսպի||սիք ունին նմանութիւն ցուցական արարածոցս, ո՞րչափ ևս առաւել արարիչն ամենայնի կամի զի արարածքս այսպէս յօրինեալ կազմեացին բնական բերմամբք։ Իսկ որ ինչ ի չար փիլիսոփայիցն յաղագս երկրի եղեալ է օրինակ՝ ատելի է ինձ, ի նոցանէ ասից ճառել բան բովանդակ։ Այլ զի կամիմ որպէսզի փոքր ի շատէ և զնոցայն իմացուցից ձեզ։ Օրինակ առնուն զփամփուշտ արջառոյ, փչեն և ընկենուն ի նմա հատ կորեկի մեծի՝ որ լինի բոլոր ամենևին. և յոչինչ հաստանելով ի միջին կառչի։ Դարձեալ այլ օրինակ ասեն զյարկ աղամանդեայ զմբեթին որ ի Կրիտէ. և զանդրին երկաթի՝ որ ի մէջ օդոյն կառուցեալ կայ՝ ո՛չ ոք հաստատելով. զի ծանրութիւն երկաթոյն ի վայր հակէ և զօրութիւն աղամանդին ի վեր քարշէ, և այնպէս կախեալ կայ հնարագիտութեամբ ճարտարին։ Զոր առաջինքն կրետացւոց գլուխ մեհենեաց [484ա] ունէին։ || Արդ՝ թէպէտ և արտաքինքն յաղագս երկրի այսպէս ասացին, եթէ չարքն և եթէ բարիքն հանդոյն նոցին՝ թէպէտ և սակաւիկ ինչ մաքրագոյն։ Բայց ես ոչ հաւանիմ նոցա, յիշելով զաստուածային բանն որ առ Յոբն ասէ. Յէ՞ր վերայ հաստատեալ են աղխք դորա։ Ես արդարև ան- էջ 114 գիտելի վարկանիմ զայն ի մարդկանէ || զի թէպէտ և լսեմ ի սաղմոսէն թէ ի վերայ ծովու հիմունս արկ նմա. կար-

1 Գ—այսպիսի
3—4 Ա—կազմեցին
4 Գ—բերմամբ
4 Գ—«չարաց» փխ. «չար»
6 Գ—ասիցն
6 ԳԴ—«բան» չիք
6 Գ—զբովանդակն
6 Գ—«բովանդակ»-ից հետո կըրճատվում է մինչև 10-երորդ տողի «օրինակ» բառը։
7 Հմմ. Եզնիկ II, ԻՁ
11 Ա—Կրետէ, Գ—Կրետէս
12 Գ—«յոք» փխ. «ոք»
12 Գ—«հաստանելով» փխ. «հաստատելով»
15 Ա—մեհենացն
16 Դ—«ունէին» բառից հետո կըրճատվում է մինչև գլխի վերջը։
20 ԱԲ—«Յեր»։ Ուղղեցինք ըստ Հոբի (Հմմ. ԼԸ 6)։
20 Գ—հաստատեղան
22 Գ—Սաղմոսարանին
22 Դ—«էարկ» փխ. «արկ»
22 Գ—«երկրի» փխ. «նմա»

ծեմ թէ վասն զի խառն ընդ սանդարամետս է ջուրն՝ զայնմէ ասիցէ. զի ջրոց ի վեր ունել զերկիր տարակուսին միտքս թէ զիա՞րդ ի վերայ այնչափ բնութեան ջուրց կարցէ անչափ ծանրութիւն երկրիս և ո՛չ ընկղմի, և ո՛չ զերծեալ փրծանի յամենայն կողմանց երկրէ նորեալ և ընկղմեալ ի ջուրս: Արդ՝ ես հաւատամ բանի միւսոյ սաղմոսին, որ ասէ թէ ես հաստատեցի զսիւնս նորա: Իբր թէ հրաման աստուածային կարող է ունել զարարածս յիւրաքանչիւր կարգի, և ի մարդկանէ անգիտելի է: Ասեն արտաքինքն զբնակութիւնս կենդանեաց յերկրի աստի և անտի. և թէ գոն ի ներքոյ երկրի մարդիկ և ՝այլ կենդանիք, որք ընդդիմոտունք են մեզ՝ որպէս ճանճք զխնձորով պատեալք: Նոյնպէս և մարդիկ զերկրաւ, և յամառեալ ընդդէմ [484բ] ասելով՝ եթէ ո՛չ էին մեզ ընդդիմո||տունք ներքոյաբնակք, ո՞ւմ արդեօք արեգակնդ տայր լոյս զկէս աւուրն, յորժամ ստուերաւն զմեզ գիշերացուցանէ. զի յանօգուտս արեգական ծախել զընթացս անհնար է ասել: Անմտութիւն մեծ և առաւել սխալանք ժուժին ինձ առ ի նոցանէ ասացեալքս. զի թողում ասել զյանդիմանութիւն որ յաստուածային էջ 115 գրոց: Բայց յորժամ մարդ||կային իմաստիւք հայեսցիս,

1—2 Գ—«զայնմանէ»,ԱԲ—«զայնմէ (թեև գրաբարում «զայնմէ» ձևը գոյություն չունի և կա միայն «զայնմ» կամ «զայնմանէ», բայց փորոքհեւև ըստ պասելի եր «զայնմէ» հնագույն ձևը, մենք այս ձևով պահեցինք։
2 Գ—«զի» չիք
2 Գ—«ջրոյ» փխ. «ջրոց»
3—4 Ա կայ:ցէ
4 Գ—երկրի
5 ԱԲ—սորել։ Ուղղեցինք ըստ Գ-ի
5—6 Գ—«անկանի»փխ.«ընկղմեալ»
6 Գ—«բանի» չիք
6 Գ—միւսում
7 ԱԲ—«թէ» չիք
10 Գ «յերկրի» չիք
11 Բ—մարդիկք
11 Գ—«եթէ» փխ. «թէ»
12 Ա—ճանջ, Բ—ճանճ
12 ՁՁ—ունեն «խնձորով», ուղղեցինք «զխնձորով»
13 Գ—«մարդիկ» փխ. «և մարդիկ»
14 Գ «մեզ» չիք
14 Գ—«ներքոյաբնակք» չիք
15 ԱԲ—արդեօքն (!)
15 Գ—արեգակն
15 Գ—«օրն» փխ. «աւուրն»
16 Գ—անօգուտ. ԱԲ—անօգուտս, ուղղեցինք—«յանօգուտս»
16—17 Գ—արեգականն
17 Գ—«զընթացս իւր ծախել» փխ «ծախել զընթացս»
18 Գ—«աւելի» փխ. «առաւել»
18 Գ—«սխալանք» չիք
19 Գ—«զի» չիք
20 Գ—հայիցիս

յայտնապէս երևի անմտութիւն ճառից նոցա։ Զի թէ սատէն իսկ յաշխարհի բաղում այն է՝ որ անբնակաց և անկենդանեաց տայ արեգակն լոյս քան որ բնաւորքս են տեղիք և յորում գոն կենդանիք։ Որպէս հիւսիսայինն ի սառնամանեացն է անկենդանի։ Եւ կամ հարաւային երկիրն ի յաւելորդ ջերմութենէն՝ զոր այրեցական գօտին կոչեն։ Կամ անապատն արևելից՝ յորում և ի գեռնոց անգամ ո՛չ երևին։ Բայց պարտ է մեզ զերկբայանալ խորհրդոցս իմոց պատմել ձեզ, որ ինչ յաղագս այսր եղև։ Թէպէտ և լսէի ի մարգարէից և յամենայն աստուածային դրոց, ի վարդապետաց եկեղեցւոյ, եթէ ո՛չ գոն այլ ներքոյաբնակք կենդանիք, սակայն ես հաւանեալ էի ընդդիմոտունս մեզ լինել։ Եւ ըստ իմոց խորհրդոցս զաստուածային բանսն ձևանալ համարէի։ Եւ արդ մի՛ զիս եպերէք, սիրելիք, [485ա] գիտէ՛ || ծածկագէտն, զի ո՛չ ստեմ։ Մինչդեռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւգինեայ և միտք իմ յա՛յս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս։ Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր։ էջ 116 Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկս || ընդունէի զնա. և նա էր պատանի անմուրուս, ոսկէգիսակ, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օծեալ. և ինքն սպիտակս և փայլունս զգեցեալ հանդերձս. և լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն։ Եւ ես ասացի ցնա՝ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՝ ասէ պատմեա ինձ

1 Դ—«եթէ» փխ. «թէ»
2 Դ—աշխարհիս
3 Պ—բնակաւորքն են տեղեօք
5 Պ հարաւայինն երկիր
7 Բ—անապատ
8 Պ—«ոչ գտանի» փխ. «ոչ երևին»
8—9 ՁՁ—ունին իմայ, ուղղեցինք իմոց (հմմ. նույն էջի 13 տող)
11 Ա—եկեղեցոյ
11 Պ—ներքայաբնակ
12 Ա—հաւանել էի
13 Պ—խորհրդոց զաստուածային զբանն
15—16 Պ—առաւօտին յաղօթսն
17 Պ—«իմ» չիք
17 Դ—խորհրդածէին
18 Պ—խոնարհէր
18 Պ—իջանել
19 Պ—յառաջս
19 ՊԴ—ընդունի
20 ՊԴ—անմօրուս
20 Պ—ոսկէդիտակ
22 Պ— «ունէր» փխ. «զգեցեալ»
23 Պ—բերանոյ նորա
23 ԱԲ—«եւ ես» չիք
23 Պ—«թէ» փխ. «եթէ»
24 Պ—«ինձ» չիք

եթէ յորժամ ի մէնջ ծածկիցի ո՞ւմ տաս լոյս, դո՞ն այլ
կենդանիք ի ներքոյ երկրի՝ եթէ ոչ: Եւ նա ասէ ոչ, այլ
լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց
տամ լոյս: Եւ իմ պատմեալ զայս վարդապետին իմում. և
նա ասէ ցիս՝ ընդէ՞ր ոչ հարցանէիր զայդ՝ և նա եցոյց
ինձ զճառս երանելոյն Ամփիլոքիոսի, որ մեկնէր զգիրս
Յովբայ. և ի խօսսն տեառն որ ասէր այսպէս. «Զի՞նչ
վայրք իցեն ուր ծածկեմ ես զարեգակն ի գիշերի յերեսաց
ամենայն կենդանեաց»: Արդ՝ պարտիմք . հաւատալ մեծի
վարդապետին և նորուն նմանեաց արանցն աստուածայնոց.
և ո՛չ արտաքնոցն: Եւ զշարժմանց երկրիս որ լինին ի տե-
[485բ] ղիս տեղիս, զերկինս || պատճառս ասեն աստեղացս այս-
պէս արտաքինքն, եթէ հուրն վերին է հարկաւոր շար-
ժումն, և վերաբերի բնութիւն շրջագայ կազմութիւն բոլո-
րակ զնդաձև տեսակ, ապաքէն և զհողմ ընդ իւր ձևացոյց.
էջ 117 քանզի է յանկութիւն հրոյ || և հողմոյ առ միմեանս. և
ի շրջագայանալն իւրում յառնէ հողմ փոթորկեալ ի նմա-
նէ և բախէ զներքին կողմ սանդարամետաց. և ուրանօր
բախէն՝ շարժի ի վերայ նորա երկիրն: Բայց ես ո՛չ հա-
ւանիմ այսմ, թէպէտ և յառաջագոյն գիտեն նոքա զլինելն:
Այլ ես հաւատամ բանի սաղմոսին որ ասէ. Ո՞ հայի յերկիր
և տայ դողալ սմա: Կամ որպէս ի Յովբն ստամի՝ թէ Ո՞վ
շարժէ զառ ի ներքոյ երկնից ի հիմանց. և սիւնք նորա
դողան:

1 Գ – ծածկիս ի մէնջ
1 ԱԲ—«այլ» չիք
2 Գ – երկրիս
2 Գ – թէ
3 Գ—անփայից, Ա—ափապնա-յից, Բ—«ափափայից»: Ուղղե-ցինք «Հայկազ. բառ-ի» հիման վրա։
5 Գ – զիս
5 ԱԲ—«նա» չիք: Ուղղեցինք ըստ Գ-ի
6 Գ—Ամփիլոքոսի հուն. ᾿Αμφί-λοχος.
6 Գ—զգիրսն
7 Գ—«որ» չունի
8 Բ – արեգակն
9—10 Դ – մեծ վարդապետն
10 ԳԴ—արանց
11 ԳԴ—արտաքնոց
11 ԳԴ—«երկրիս» բառից հետո կրճատված է մինչև էջ 21 առաջին տողի վերջը։
21 Գ—«բանի» չիք
22 Դ—«եւ կամ» փխ. «և տայ»
22 Գ – «եթէ» փխ. «թէ»
23 Գ—ներքոյս

## Դ. ՅԱՂԱԳՍ ԾՈՎՈՒ

Ջծովէ ՝առեն խելագարեալ փիլիսոփայքն հեթանոսաց՝ թէ պատ առեալ զերկրաւ, և ի միջի ծովու է երկիր որպէս կղզի մի. և ջուր ի վերայ օդոյ և ի կողմանէ: Իսկ որ ի վերայ երկրիս են ծովք, ընդ որ չրջին մարդիկ. գոյ նոցա եզեր սպառուած և բովանդակած. ի նմա են ձկունք և այլ կենդանիք բազումք: Իսկ ի ծովուն որ չրջապատեն զերկիր՝ ո՛չ գոնե ի նմա կենդանիք և ո՛չ եզեր սպառուածի. քանզի ո՛չ երկիր և ո՛չ այլ ինչ կայ ընովաւ, և ո՛չ արե- [486ա] գակն անցանէ ընովաւ, այլ ընդ եզեր նորա առ || երկրաւ մտանէ և ելանէ: Փիլիսոփայքն բարիք ասացին զծովէ՝ եթէ այս իսկ է, որ ի վերայ երկրի է և ի մէջ, ընդ որ էջ 118 չրջին մարդիկ, և || ո՛չ գոյ այլ ծով արտաքոյ երկրի: Եւ այս ծովակք թէպէտ և սահմանօք զատեալք են ի միմեանց, այլ են մի, զի ծակք են ի միմեանս ի ներքոյ երկրի, և յատակք ամենեցուն ի միմեանս հային. թէպէտ և յոյժ հեռի են վերին սահմանօքս ի միմեանց: Բայց ես հաւանիմ այսմ զոր աստուածային գիրքն հանդոյն սոցա ասաց:

1 Գ—կրճատված է «Յաղագս ծովու» գլխից մինչև 17 եջի, 4-երորդ տողի «Այլ որ փոյթ… յանձ ին կալան» նախադասությունը։

3—4 Պ—«իբրև» փխ. «որպէս»

5 Դ երկրի

5 Ա «կայ» փխ. «գոյ»

6 ՊԴ—«սպառուածն» փխ. «պառուած», ԱԲ գրում են հայտնապես «Եզերս պառուած»։ Ո. ղղեցինք «եզեր սպառուած». հմմտ. Դ թագ. ԺԲ. 25 «Հասի յեզր սպառուածի անտառին»։

6 Պ—«սմա» փխ. «նմա»

7—8 Պ – շուրջ պատին զերկրաւ

8 ԱԲ—«գոյ» փխ. «գոն»

8 Պ—«սպառուածի» փխ. «պառուածի»

8 Ա—եզրս պառուածի

11 Ա—բարիքն

14 Պ—«ծով» փխ. «ծովակք»

14 Պ—«սահմանաւ» փխ. «և սահմանօք»

14 Պ—զատեալ

15 Պ—«մի են» փխ. «են մի»

15 ԱԲ—«ծածկեն» փխ. «ծակք են» (ուղղեցինք ըստ Պ և ըստ եջ 17)

15 Պ—երկրիս

16 Դ— յատակ

17 Դ—սահմանօքն

17 Պ—«և» փխ «Բայց»

18 Դ—«այսր» փխ. «այսմ»

18 Դ—այս այսպէս զի աստուածային…

18 Պ - գիրն

18 Պ—«ասէ» փխ. «ասաց»

ժողովեցյին Ջուրքդ ի ժողով մի․ յորմէ մարթէ ուսանել թէ խառնին ի միմեանս և զուգեալ լինին մի։ Եւ դարձեալ ասէ զժողովս Ջուրցն կոչեաց ծովս․ ահա յայտ է թէ որոշեալ սահմանօք եցոյց զխորշս գոգոցն, որ են յամենայն կողմանս երկրի․ և ունին իւրաքանչիւր խորշքն առանձին կերպարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արևելից, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ ծովն արևմտից։ Եւ անուանս ևս ունին իւրաքանչիւր գոգք բազումք ծովուց։ Զի մինն անուանեալ կոչի Պոնտոս և Եւքսինոս․ և միւսն Պրոպոնտիս և Հելեսպոնտոս․ և միւսն Եգէոս և Յոնէոս․ և միւս ծովն Սարդոնիկէ աշխարհին․ և միւս ծովն Սիկիլիայ աշխարհին․ և միւսն Տիւրոսի, հանդերձ այլ ևս բազում անուամբք՝ որ անցանեն ըստ թիւ և ըստ համար։ Են և այլ բազում ծովակք որ ո՛չ են յաշխարհածովէ, թէպէտ և զաղի և
Լչ 119 զդառն ճաշակս ունիցին, և աւազօք || սահմանեալ դտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծի ծովուն, սակայն ոչ է մարթ զծովակսն ծովս կոչել։ Ո՛չ զԱսպղատիտէս ծովակ որ մօտ յաշխարհն Հրէաստանի է․ և ո՛չ զՍերբոնիտէս ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի․ և զայ հասանէ ի կողմանս արաբացոց։ Եւ ո՛չ մեր աշխարհիս ծովակ զոր կոչեմք Բզնունեաց, և ո՛չ այլքն որ յարևելս են նոյնանմանք։ Զի սոքա, զորս թուե—

1 Պ—Ջուրքն
1 Պ—«իմանալ» փխ․ «ուսանել»
3 Դ—ասէ թէ
5 ԱԲ—«կողմունս» ուղղեցինք «կողմանս»
7 Դ—«անուանին» փխ․ «անուանս»
8 Պ—գոգքն
8 Պ—«մին» փխ․ «միւսն»
9 Պ—Պրոպոնտոս
9 ԱԲ—ուղղեցինք Եւքսինոս, ինչպես «Պ»-ի տեքստում է։
10 Պ—Յունիոս
11 Պ—Սարդոնիկեայ
11 Պ—«ծովն» չիք
13 Պ—«ըստ»-երը չիք
14 Դ—«որք» փխ․ «որ»
13 Պ—Եւ են
14 Պ—յաշխարհածովէն
15 ՊԴ—աւազով
16 ՊԴ—ծովուցն
17 Դ—զԱսփատէս. Պ—զԱսփալդէս
18—19 ՊԴ—զՍերբինիդիս
19—20 Պ—«աշխարհի» չիք
20 Ա—մեջի
21 ՊԴ—ծովակս
21 Ա—Բըզնունեայ
22 ՊԴ—այլք
22 ՊԴ—որ կոչին նույնանմանք, ԱԲ «որ կոչին» չիք
22 Դ—«քանզի» փխ․ «զի»
22—1 ՊԴ—«զոր ասացաք» փխ․ «զորս թուեցաքս»

ցաքս, ծովակք են և ո՛չ ծովք: Թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա. և զնորուն ընկերն որ անուանեալ կոչի Ասպիայ թէ զատեալ մեկնեալ են սահմանօք ի բուն ծովէն: Այլ որ փոյթ անձին կալան ի գիր առնուլ զաշխարհ ամենայն, որպէս յառաջն ասացի, ասեն թէ ծակ ի միմեանս են ծովքն և երթան կցին յիրեարս ի ներքոյ երկրի, որպէս զի լինել ըստ աստուածային գրոց ժողով ջրոցն ծովու մի: Բայց վասն միակչիռ կալոյ ծովու և ո՛չ լնլոյ ի գետոց և յուղխից՝ ըստ բանին Սողոմոնի, որ ասէ՝ թէ ամենայն ուղխք ի ծով գնան և ծով ո՛չ լնու: Այսպես ասեն չար փիլիսոփայքն թէ անդստին ի նմանէ ելանեն գետք և ակունք աղբերաց. և վասն այնորիկ ո՛չ լնում. զի որպէս ելանեն, նոյնպէս և մտանեն: Եւ վասն էջ 120 աղի և դառն համոյն ասեն՝ թէ վասնզի || ո՛չ ելանէ ջուր ի վերայ երկրի որ պարզէ զմրրութիւն նորա և պղտորութիւն, վասն այնր է դառն և աղի: Իսկ փիլիսոփայքն բարիք այսպէս ասացին վասն միակչիռ կալոյ ծովու. թէ ջերմութիւն արեգականն ծծէ և քարշէ զքաղցունս և զնուրբսն և զթեթևսն զոլորշեաւն հանէ յօդն: Եւ թանձունքն և ծանունքն անդէն մնան, այսինքն է մրրեալքն և պղտորեալքն: Եւ որ անդէնն մնան, են աղիքն և դառինքն: Եւ վասն այնր է ծով միակչիռ և ժահահոտ, զի զոլորշին որ ձգեցաւ ջերմութեամբն արեգական՝ պակասեցոյց զյաւելուածն և տարաւ զքաղց-

1 Գ--ամանք
2—3 Ա—«և զնորուն ընկերն որ անուանեալ կոչի Ասպիայ», Դ—«սապես» փխ. «Ասպիայ»
3 Դ—«եթէ» փխ. «թէ»
4 Գ—«սահմանօք» չիք
4 ԱԳ յանձին
6 Գ—ծակք են
7 Գ—«ի» չիք
8 ԳԴ—ջուրցն
9 Բ—«ծովու» չիք
9 ԱԲ—յուխից
9—10 Ա—Սաղոմոնի
10 Գ—ասէն
10 ԱԲ—ուխք
11 ԳԴ—«է լցեալ», վորից հետո կրճատվում է մինչև 16-երորդ տողը «փիլիսոփայքն...»
16 Գ—«այսպէս» չիք
18 Գ—«քաղէ» փխ. «քարշէ»
19 Գ—գոլոշեաւն
19 Դ—յաւթսն
20 Գ—այսինքն պղտորեալքն և մրրկեալք
21 ԳԴ—աղի և դառինք
21 Դ—այն
22 Գ—«ժահահամ» փխ. «ժահահոտ»

րութիւնն: Եւ օրինակ տան զսանս և զկաթսայս լի ջրով եռացուցեալս ի հրատի. և միտ դիր թէ զիարդ լինի թերութիւն ջուրցն զոլորշեաւն որ ելանէ ի նմանէ. զի թէ յերկար թողցես ի բորբոքեալ հրատին և ո՛չ յաւելցես անդէ ի նա ջուր, ամենևին սպառի: Նոյնպէս և ծով ասեն զուգեալ կայ յաւելլոյ գետոց և յուխից: Եւ ի պակասելոյ զոլորշոյն զոր ձգէ արեգակն տապովն իւրով՝ հանէ յօդն: Ասեն օրինակ և ի նաւավարաց որոց պակասի ջուր ի ծովու, առնուն ասէ ջուր ծովուն զաղին և զդառն և արկանեն ի կաթսայ և եռացուցանեն ի հրատի, և դնեն սպունգս [էջ 121] մեծամեծս խփուսն կաթսայիցն. և ի || խոնաւութենէն զոր առնուն սպունգքն ի զոլորշւոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն [487բ] ի նոցանէ քամելով. և այսպիսի || հնարիւք առնին դարմանք կենաց նոցա ի նեղութենէ ջուրցն նուազութեան յորժամ պակասիցի ի ծովու: Արդ՝ թէպէտ և օրինակս հաւանական տան արտաքինքն, սակայն ինձ ո՛չ է հաճոյ. քանզի հաւատացեալ եմ թէ հրամանն աստուածային է, որ ունի գծով արգելեալ միակչիռ. ըստ բանի սաղմոսի որ ասէ՝ սահման եդեր և ո՛չ անցանեն և ո՛չ ևս դառնան ի ծածկել զերկիր որպէս զառաջինն: Քանզի ինքն ասէ տէ՛ր, փակեցի գծով դրամբք, եդի նմա սահմանս. ասացի ցայդ վայր եկեսցես՝ և այլ մի անցցե՛ս. և այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո: Արդ՝ յայտ է թէ գնալոյ ջրոց ծովու յերեսաց երկրէ ո՛չ արեգակն եղև պատճառք, այլ

1 Պ—զկաթսայս և զսանս
2 Պ—«ելանէ» փխ. «լինի»
3 ՊԴ—ջրոյն
4 Պ—յաւելցես
5 Պ—«ասեն» չիք
6 Պ—ուղխից
6—7 Պ—զոլորշւոյն
8 Պ—«և» չիք
8 Պ—որոց թէ պակասէ ջուրն
9—10 ԱՊ—արկանեն
12 ԱԲ—զոլորշոյն
13 Պ—«ի նոցանէ» չիք
14 Պ—նեղութեան
15 Պ—«նուազի» փխ. «պակասի»
15—16 Պ—հաւանականս
17 Պ—հրաման
18 Պ—սաղոսին
19 Պ—«եդ» փխ. «եդեր»
20 Պ—«ի» չիք
21 Պ—սահման
22 Պ—անցանիցես
23 ԱՊ—«յայտ է» չիք
23 ԱԲ—գնալն, Պ—եթէ գնալոյ ջուրցն յերեսաց ծովու
24 Պ—«երկրէ» չիք
24 Պ—պատճառ

հրաման աստուածային. զի յառաջ իսկ քան զլինել արեգական ժողովեցան ջուրքն ի տեղի ծովու, և ցամաքեցաւ երկիր: Ապա յայտ է թէ այժմ ի հրամանէ աստուծոյ արգելեալ կայ ծով միակչիռ, զի մի դարձցի ի ծածկել զերկիր:

## Ե. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՐԴՈՒՑ

Որ ինչ յաղագս երկնային զարդուց ի մէջ քաղդէացւոց պատմին բանք բաջաղանաց, աշխատութիւն անչահ համարիմ ճշդիւ պատմել: Բայց վասն ի գիտութիւն ձեզ հասուցանելոյ՝ սակաւ փոքր ի շատէ: Յառաջինսն վարժ դըպրութեան և այլոց արուեստից բազմաց որք յիմաստասիրութեան են, մանաւանդ աստեղաբաշխութիւն, ի քաղդէացւոց [488ա] երևեցաւ. և ապ|ա եգիպտացւոց և հելլենացւոց ուսեալ՝ առաւել ևս զօրացուցին: Եւ թէպէտ և ջանացան զհետ իմաստից լինել, ո՛չ քաջ զինքեամբ պարատեսեալ, չկարացեալ վերաբերիլ և անցանել ըստ տեսութեան զարդուց ի վեր, և առ պատճառաւն վերին ո՛չ կարացեալ հասանել. զդոսին իսկ տեսեալ զլուսաւորս և զխումբս զարդուց՝ զի արարողք են, և աստուածս կարդացին: Եւ բաշխս բախտից բաժանեցին. և ծննդոց իշխանութիւն ետուն սոցա. զոմանս ի բարեբախտութիւն, և զոմանս ընդդէմ նոցին ի թշուառութիւն. և զայլսն ևս կարգաւ մի ըստ միոջէ, զոր չէ՛ մեզ հարկաւ ի թիւ արկանել. այլ սակաւս ի բազմաց, զի իմասջիք և դուք զնոցա սխալանսն որ առ ի յոյժ վրիպանացն ասացին զտունջենային և զգիշերային ծնելութիւնս ի տանուտեառնէ աստեղէ՝ շրջագայիկ և հետևագայիկ աստեղք վիճակեալք ի ժամադիտէն բաշխեն ի մասունս և ի

1 Գ—հրամանն
1 Գ—ավելացված ե «իսկ» «արեգական»-ից առաջ
2 ԳԴ—ի ժողովս իւրեանց
3 Գ «այժմ» չիք
4 Գ - կան ծովք
4 ԳԴ—դարձցին
7 Ա—քաղացւոց
7 Գ—քաղդէացւոցն
8 ԱԲ – բաղաջանաց
9 ԱԲ—«ճշտիմ», ուղղեցինք «ճշդիւ»
9 Գ—«պատմել» բառից հետո կրճատված է մինչև էջ 29-ի 25-րորդ տողի «Յառաջ ժամանակաւ»։
9 Ա—գիտութեան
12 Ա—աստեղաբաշխութիւնս
19 ԱԲ—և բախտից

էջ 123 կրկնամասունս, ի || մանրամանակս և ի մանրերկրորդս և ի մանրամասունս բազումս: Եւ ո՛չ միայն շնորհ ասեն տալ և թշուառութիւն՝ այլ և կեանս թուով ասեն տալ՝ ոմանց յոլով և ոմանց նուազս: Եւ ամենայն բարուց և բնութեանց կամաց և գործոց՝ բարեաց և չարեաց՝ որ ինչ միանգամ ի մեզ իրք կրին, պատեհողք դնեն պատճառ: Արդ՝ ասեն [488բ] երկոտասան աստեղատանցդ բաժան||եալ զերկին զոր կենդանակերպ անուանեն. և է մոլորակացդ իշխանութեամբ շրջել, և ո՛չ ի բաժնի կալ. վասնորոյ և ընթացողս կոչեն: Իսկ այլ ախտարք և ապախտարք ըստ ԲԺ իցդ ասեն բաժանեալ: Զխոյէ ասեն թէ՝ գլուխ է աստեղատանց ԲԺ անիցն, և շնորհատու. զի և խոյ գլուխ է հօտի և պարգևատու. զի առանց տրտմութեան մերկանայ յասուէն իւրմէ, և դարձեալ անդստին իւրմէ բնութենէն զգենու հանդերձ հանապազորդ: Նոյնպէս և զաստեղատունն ասեն ըստ նորին նմանութեան: Ասեն թէ որ ի նմայն ծնանի գեղեցիկ լինի և փարփառ, գանգրահեր, ծաւի, զուարթատես, բարեբարոյ, մեծ և ճոխ լինի: Զցլէն ասեն թէ՝ ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեայ է, և որ ի նմայն ծնանի առաւել ուժեղ և մեծահասակ լինի, և հնազանդ և գործունեայ՝ էջ 124 ըստ նմանութեան եզին || որ միշտ ընդ լծով հնազանդեալ կայ ի գործ: Զերկաւորէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի ճոխ և սնափառ, անհաստատ և երկմիտ լինի: Զխեցգետնէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի տառապեալ և մուրական և վէս, և այսր և անդր լինի՝ ըստ օրինակի խեցգետնոյ՝ որ այսր և անդր գնայ. զի և աստեղատունն ասեն՝ թէ ըստ նմին շարժի: Զառիւծէն ասեն՝ թէ որ ի նմայն [489ա] ծնանի քաջասիրտ և հպարտ լինի: || Զկուսէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի հեզ, նիհար և ագահ լինի: Զկըշռէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի արդար լինի ըստ օրինակի

1 ԱԲ—մանտրամանակս
2 ԱԲ—մանտրամասունս
4 Ա—ոմայնց
12 Ա—խու փխ. խոյ
17—18 Ա—բարեփարոյ
19 Ա—նմա
22 ԱԲ—«զեկաւոր». ուղղեցինք «զերկաւոր»
24 Ա—նման
27 Ա—ընդ նմին
30 Ա—նմայ

կչռոց, որ զարդարութիւն և ղհաւասարութիւն պահէ: Զկարճէ ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի չարախոհ և մարդասպան ըստ օրինակի կարճի որ հանապազ հարկանել կազմ կայ: Զաղեղնաւորէ ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի կորովի և անհարկու մօտաւորաց և բացէից լինի, ըստ օրինակի աղեղնաւորի: Զայծեղջերէ ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի խոհեմ, գոռոզ և դաւաճան լինի: Զջրհոսէ ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի անխորհուրդ և առատատուր լինի: Զձկանէ ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի ընչաւէտ և անժոյժ լինի: Բայց կարևորն ի ծնելութիւնս զընթացող ասեն վիճակեալս. և էջ 125 յորում լինի ասեն նշանակել այսպիսի ինչ: || Արեգակն բնութեամբ իսկ բաստ է, այսինքն երջանկութիւն բարուց, խոհականութիւն զօրու ամենայնի իշխանականէ. և է երբեմն զի յաղագս բանին գործակից լինի: Լուսինն բնութեամբ իսկ պատահար է, ամենայն որ ինչ մարմնոյ. և որ ինչ կենցաղոյ բաղձանք են, ստացուածոց և փառաց և [489բ] նախաբարձութեանց յայտնիչ է: || Լուսաբերն բնութեամբ իսկ տարփանք է, շնորհի պատճառք, ի գեղեցկութիւն և ի սիրելութիւն, այսինքն՝ ողողեալ յանառակ ցանկութիւնս: Փայլածուն բնութեամբ իսկ հարկաւորութիւն է, այսինքն՝ թաղծ, և անհնազանդութիւնս և մարտս և խաղմս և թշնամութիւնս և ատելութիւնս և ամենայն բուռն իրք դիպին մարդկան՝ ծնանի և առնէ: Հրատն բնութեամբ իսկ համարձակութիւն է, այսինքն՝ յօգնութիւն, ուժաւորութիւն, դաւաճանութիւն, և խարդախութիւն ամենայնի պատճառք: Ասեն թէ՝ և երբեմն ի վերայ այլոց աստեղատանց անցանելով աստղս այս՝ չփոթմունս և խանգարմունս ղործէ: Լուսնթագն բնութեամբ իսկ յաղթութիւն է, այսինքն՝ հաւատոյ, բարի յուսոյ, մրցման, և ամենայն հաղորդութեան, նա ևս և ձեռնարկութեան, և դիպողութեան պատճառք են: Երևակն բնութեամբ իսկ դատաստան է, այսինքն՝ երկրաւորաց և ծածկեցելոց ամենայնի ապացուցի և զօրութեան և փախչո–

8 ԱԲ—զձուկն ուղղեցինք ըստ «Հայ. բառ.» (տես «ձուկն»)
16 Ա—կենցաղիս
17 Ա—Նախաբարձութեան
21 Ա—հնազանդութիւն
27 Ա—խանգահմունս
32 Ա—ապացուցից
32—1 ԱԲ—բաղչողութեան

էջ 126 ղութեան, և կոր սգոյ և որակութեան: Իսկ զժա||մադիտակն ասեն՝ թէ մատակարարէ ի միջի նոցա հիմն լեալ ամենայն աշխարհի: Եւ զմաղարովթ աստեղէ ասեն թէ յորժամ նա զերկլին հասարակէ և ամենայն փառօք լցեալ լինի, այսինքըն՝ բարեբար աստեղքն զոյգ ընդ նմա երևին. և որ ի [490ա] ժամուն յայնմ ծնաւ անվրէպ թագաւորէ: Շատ լիցի || մեզ ասել զանհամ պատմութիւնս, այսուհետև լքցուք որ ինչ յաղագս ախտարաց և ապախտարաց են ասացուածք, և կամ սպանողաց աստեղացն և մահաբերից. և կամ որովք գյառաջադիմութիւնսն ասեն ուսանել. և կամ զդիւթականն զայն արմատոց ընդ աստեղս հրճուումն կաստաղեա՛ մոլորութիւն: Քանզի չէ ձեզ յօգուտ զայն ամենայն մանրամասնաբար պատմել՝ գուցէ պակասամտաց տեսեալ, հաւանիցին յայն: Արդ՝ ես այսպէս ասեմ թէ՝ քաղդէացիք ո՛չ միայն վասն անձանց մեղացն տան պատիժս, զայս յարմարելով խորհուրդս, այլև վասն այնոցիկ, որ զկնի նոցա լինիցին մոլորութեամբ: Կորեան ընդ մեղացն Ռոբովամու որդւոյ Նաբաթու՝ որ յանցոյց զԻսրայէլ, և ո՛չ միայն զինքն կորոյս, այլ և զկնի իւր զբազումս, որք նորա մեղօքն վարկանեցան. ըստ առաքելական բանին որ ասէ՝ թէ են մեղք որ յառաջոյ երթան, և են մեղք որ զկնի գան ի դատաստան: Քանզի ի քաղդէացւոցն ծնաւ արուեստ աստեղաբաշխութեան, և յաստեղաբաշխու-
էջ 127 թենէն ծնաւ || դիւթական մոլորութիւնն. որ զարմատոյ և զբանջարոյ՝ յաստեղացն տանին հաղորդութեան բարբաջ-
[490բ] մամբքն, և ինքեանք որպէս ասեն կերպս ի կերպս լինին ընդդէմ աստեղացն. և դևք կերպարանօք աստեղաց իջանեն առ նոսա մինչև ի մեր ժամանակս: Ոմանք ի հեթանոսաց պարուց ընդ մեզ վիճին՝ եթէ դոն մարդիկ ախտարմախք որ զլուսին իջուցանեն յերկիր դիւթեալ վհկաւ: Որոց զսաղմոսին բանն առաջի դիցուք որ ասէ՝ տեսից զեր-

3 ԱԲ—զնազարաւթ
11—12 Ա—մոլորութիւնն
17 Ա—լնիցին
17—18 ԱԲ—ձեռագր. Ռոբովամ
18 Ա—որդոյ
22 Ա—քաղդէացոցն
24—25 Ա—զարմատս և զբանջարս
28—29 Ա—հեթանոցաց
30 Բ—վահկաւ
31 Բ—սաղմոսին

կինս զգործս մատանց քոց զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր: Արդ՝ զոր և աստուած հաստատեաց՝ մարդք կախարդասարք զիա՞րդ կարեն իջուցանել: Օ՛ն անդր և ի միտ անգամ ուրուք մի՛ եկեսցէ այսպիսի անկարգութիւն առասպելական բանից: Այլ նմանեսցուք մեծին Աբրահամու՝ զի նա ազգաւ քաղդէացի էր և հմուտ աստեղաբաշխութեան, և հանապազ բացօթեայ կայր ի հօտի. և զնա հանապազ խիղճ մտաց իւրոց խիթացուցանէր, տեսանելով զարարածս ընդ ապականութեամբ և ընդ սխալանօք. ասէր չե՛ն սոքա աստուածք՝ ո՛չ լուսաւորքս մեծ և ո՛չ փոքունքս. և ո՛չ նոյն ինքն երկին և ո՛չ երկիր: Զի ընդ սխալանօք և ընդ ապականութեամբ են և ի հզօրագունէ

էջ 128 իմն ումեմնէ շարժին հարկաւոր, || յորմէ յայտ է թէ՝ այլ ոմն է նոցա արարիչն, որ կարող է զամենայն գոյսս շարժել՝

[491ա] և նա՛ է աստուած. և հանապազ աղօթէր || և ասէր՝ աստուած արարիչ ցո՛յց ինձ զքեզ: Տեսեալ աստուծոյ զհաւատս նորա՝ յայտնեաց զինքն նմա և եհան զնա յերկրէն և յազգէն իւրմէ: Զայս պատմէ մեզ Փիլոն և հաւատարիմ է պատմութիւնս. զի եթէ միտ դիցես՝ բնագիրն զայն ակնարկէ: Քանզի ասէ վասն Նոյի թէ՝ Նոյ այր արդար կատարեալ յազգի անդ իւրում, և հաճոյ եղև Նոյ աստուծոյ: Եւ ապա ասէ լինել առնա յայտնութեան աստուծոյ, և առնուլ հրաման վասն տապանին: Իսկ վասն Աբրահամու ո՛չ յառաջ ինչ ճառէ որպէս Նոյի և այլ նահապետացն, այլ միայն թէ՝ ասաց Աստուած «Աբրահամ, ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ», յայտ է թէ՝ յաստղաբաշխութենէ ծանեալ զաստուած Աբրահամ, վասն որոյ և աստուած եհան զնա ի միջոյ չարեացն, և խոստացաւ լինել նմա և զաւակի նորա աստուած մինչև յաւիտեան: Բայց ես կշտամբեցից զքաղդէացւոցն ծննդաբանութիւնսն՝ որում բազումք հաւանեցան. և յունաց և այլոց ազգաց՝ վարժիլ սնոտիւք, և

5—6 Ա—Աբրաամու
13 Բ—իմումն է
22 Ա—յայտնութեանն
26 Բ—աստղաբաշխութենէ
30 Ա—քաղդէացոցն
30 Բ—յորում
31 ԱԲ—ձեռագրերում «յայլոց յազգաց», մենք ուղղեցինք այսպես։

կշտամբեցից ո՛չ իմ բանիւ՝ այլ սրբոյն Բարսղի, որ ասէ այսպէս. Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երեկրորդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաւաստաբան ճշմարտութե- [491բ] էջ 129 նէս մերմէ կշտամբեալ գտա||նին: Եւ || արդ դարձցուք անդրէն զնոքիմբք վերստին: Եւ ահա սկսանիմ ասել իբր ո՛չ եթէ զիմ բանս ինչ խառնեմ ի ներքս, այլ ի նոցուն բանից երկրորդեմ ընդդէմ նոցա կշտամբել զնոսա անդստին յիւրեանց բանիցն. զի թերևս որք կանխաւ անկան յամբարշտութիւնս նոցա՝ բժշկութիւն գտցեն: Եւ որ ո՛չ իցեն գայթակղեալ անկեալ ի պատրանս նոցա՝ զզուշութիւն ստասցին: Զի յայնպիսի բանս և որ նման սոցին իցեն մի՛ յօժարեսցին անկանել: Արդ՝ ահա տեսանեմք, զի և ի գիտողաց աստեղագիտութեան և ի մեկնչաց աստեղատանցն ուստի զծնունդն բաշխեն՝ բազում իրք վրիպեն յորժամ սկսանին համարել այնպէս: Զի ո՛չ ինքեանք իւրեանց արուեստին բաւական են հասանել, զի զչափ ժամանակացն անհամար րոպէիւք ժամուցն համարեցան. քանզի այսպէս մասունս կոտորեցին զրոպէսն, այսինքն է զթօթափել ական, ըստ այնմ զոր Առաքեալ ասէ թէ յանկարծակի իբրև յական թօթափել. զի տեղի բազում ժամուց է ընդ ծնունդն և ընդ ժամս իւր, և որ ծնանի ի յայն ի մի ասեն ընդ աղօտ, որպէս ժամուն ճոխ լինի ասեն՝ զլխաւոր քաղաքաց, մեծատուն և զօրաւոր: Են միւսն ասեն որ ծնանի, [492ա] ի միւսում ի սա||կաւիկ ինչ փոխել ակնարկելով ժամուն՝ էջ 130 տառապեալ և մու||րաւղ լինի, և այնպէս թափառական շրջի տուն ի տանէ և տեղի ի տեղւոջէ. և հազիւ կարէ ժողովել զաւուրն ռոճիկ: Եւ զբոլորակ պատկերացն աստեղատանցն, ԲԺ. ան մասն բաժանեն. քանզի ըստ Թուոյ, Լ աւուր կազմեալ է զբոլորակն. և արեգակն տարւոյ ի տարի յոր գայ ի շուրջ զ.ԲԺ.ան աստեղատամբքն բոլորակին: Արդ զԲԺ—ան մասն յերեսուն մասն բաժանեն և զմի մի յ.Լ. մասանցն Կ մասն կոտորեն. և զմի մի ի.Կ ժա—

3 Ա—հաստաբուն
4 Ա—դարձրցուք
8 ԱԲ—իրաց: Մենք ուղղեցինք այսպես:
27 Ա—ժողովեալ
27 Ա—բորակ
31—32 Ա—միյ

մուցն յերեսուն վայրկենի հատանեն: Եւ այսու անճամուքս
անհամար և յանկարծածին րոպէիւք սահմանեցին զծնունդս
այնոցիկ որ ծնեալն լինին: Արդ՝ աղէ տեսցուք եթէ կարի-
ցեն կալ ի վերայ երագախաղաց վայրկեննեաց ժամուցն
իւրեանց. ծնանի մանուկն դժուարին երկամբք մօր նորա
ծնանին, և կամ մանկաբարձն դեգերեալ տեսանել թէ արու
իցէ մանուկն թէ էգ. և կտրել (!) կայ լսել զբարբառ ման-
կանն՝ զի այն է նշանակ կենաց նորա, և ի լալոյ անտի
իմանայ եթէ կենդանի իցէ որ ծնաւն: Արդ՝ զայնչափ
ժամս քանի՞ արդեօք րոպէս համարիցիք անցանել ի մասանց
միոյ միոյ Կ իցն. զի մի մի ի Կ մասանցն, ունի–Կ
[492բ] իցս Կ րոպէ. այսինքն է||ական թօթափեալ: Եւ յետ այս-
էջ 131 չափ անցեալ րոպէից ասացաւ աստեղա||գիտին յընտանեաց
այնր, որ ծնաւն: Արդ որչափ ժամս վայրկեննեաց և րոպէ-
ից համարիցի անցանել աստեղագէտն, մինչ կայր ուշ ու-
նէր մանկաբարձն լալոյ մանկանն: Դարձեալ այլուր ևս
դիպեցի ժամաբաշխն և րոպէահամարն արտաքոյ տանն,
ուր ծնաւ մանուկն, և նմին ժամաբաշխն րոպէահամար աս-
տեղագիտին պարտ և պատշաճ էր բազում փոյթ յանձին
ունել, առ ի գիտել ճանաչել զժամ մանկանն, որ ծնաւն
թէ՛ ի գիշեր իցէ, թէ ի տունջեան: Եւ թուի ինձ, թէ այլ
բազում ժամք անհամար րոպէիւք անցանեն, մինչ յայց ելեալ
խնդրէ աստեղագէտն գտանել զժամ ծննդեան մանկանն, թէ
ո՞ր ժամու իցէ. և դարձեալ թէ ո՞ր աստեղատանց է տուիչ
ժամուն և յորո՞ւմ ի մասանց ԲԺ.ան աստեղատանցն երևեցաւ
ժամն նորա, և յորո՞ւմ կարգի թուոցն նոցա եկաց ժամն
առ ի ճանաչել: Եւ ո՞ր իցէ երագընթաց ժամն առ ի յիւ-
րաքանչիւր Կ վայրկեննեացն, յորոց լինին Կ իցս Կ
րոպէք. և այս ասեն նուրբ և առանց հասանելոյ գիտաք
[493ա] անհամար ժամուք ի յուրաքանչիւր աստեղացն || որ ա-
նուանեալ կոչին մոլորեցուցիչք. լինին և ի սիրոյ և ի մեր-
ձաւորութենէ, զոր ունին ընդ աստեղսն չմոլորեցուցիչս, որ

4 ԱԲ—երախազացս Մենք ուղ-
ղեցինք այսպես:
6 Ա—«կա» փխ. «կամ»
ԱԲ—ՁԶ—այսպես «կտրել»
8 Ա—անդի
11 Ա—կից
17 Բ—րոպէ համարն
31 Բ—մոլորեցուց ինչք

անուանեալ կոչին աստեղատունք․ և վասն այսորիկ է առել մերձենալն և պատահել նոցա առ միմեանս․ և ծննդաբաշխն ծննդոցսն հաստատեսցեն, և մեծաւ փութով զոր ունին՝ յանձինս վրիպեցուցեալ ի կորուստ մատնեն զժամսն իւրեանց․ քանզի ընդ վայրկենիս և ընդ րոպէս յաճախեալ բազմանան ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն և աստանդին․ քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ երագախաղաց ժամունքն իւրեանց․ զի երագութիւն երագափոխան ազգութեանց նոցա յապուշ և յիմարութիւն կործանեաց զնոսա, և լինելոյ յայպն կատականաց դատարկացոյց միտնջենաւորութեան ի սնոտիս: Եւ ես զարմանամ թէ զիա՞րդ այնպէս դատարկացեալք ի գործոյ են միշտ զհետ սնոտեաց առանց ամօթոյ և պատկառութեան: Եւ առաւել սքանչանամ ընդ այնս որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբարեաց դէմս նոցա: Ցոփաբանք և թանձրասիրտք են, զի ո՛չ իմանան թէ զորո՛յ զհետ երթան՝ և ո՛ւմ հաւատան զանձինս իւրեանց մեկնել թէ զինչ կեանք [493բ] լինիցի նոցա յաշխարհի: || Եւ ո՛չ մինչ ցայս վայր միայն ձգեն զանհամ պատմութիւնս, այլ մինչև ցա՛յս ևս որ ամենեցուն յայտնի է, զի տեարք եմք մտաց և գործոց մերոց, և այժմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՝ բարիք և չարիք ո՛չ ի կամաց մարդոյն լինին, պատճառք նոցա զերկնից կախին, զի անտի ասեն լինել մար||դիկ չարք էջ 133 և բարիք: Դարձեալ և ընդդէմ այսց ասել որ այսչափ ծաղու աւելի են գործք արժանի համարեալք: Բայց զի բազումք ըմբռնեալք և կապեալք կան ի մոլորութիւն նոցա, չէ՛ պարտ և պատշաճ անփոյթ առնել և լռել: Այլ նախ քան զայս հարցցուք և որպէս հանապազ բիւր ազգի կերպարանս փոխիցեն աստեղքն առ միմեանս․ զի յորս մոլորեցուցիչսն կոչեն՝ հանապազորդ գնացս ունին: Եւ կէսքն արագընթաց գնացիւք հասանեն միմեանց: Եւ կէսքն մեղմագնացիւքն յամեն և անագանեն, և ի միում յանկարծ երևեաց ժամու տեսանեն զմիմեանս, և դարձեալ ասեն ղաւ-

12 Բ—դատարկեցեալք
16 Ա—զոյր
23 Ա—չարիք

31 Ա—երագընթաց
32—33 ԱԲ—ձեռագրերում—յանկարերևեաց: Ուղղումը մերն է:

զեալ թաքչին ի միմեանց. և որպէս ասեն, զաւրութիւն իմն մեծ ունին և գնացք նոցա, և ծննդաբաշխս ծննդոցս կազմեն. և է տեղի ասեն որ տեսանէ աստղն բարի զընկեր իւր՝ զծննդենէ բարեգործի յայտ առնէ. և ի միւսում տեղի՝ ո՛չ ասէ ուր դիպեսցի աստղն չար իւրումն ընկերի [494ա] զծննդ||ենէ չարագործի յայտ առնէ: Եւ է՛ ասեն միւս ևս տեղի, եթէ դէպ լիցի անդ երևեալ՝ բարիոք աստեղն առնեն զերևել բարի աստեղն ծնունդ թշուառականի. և յորժամ ո՛չ կարեն հասու լինել րոպայից ստայօդ ակնարկութեանց իւրեանց, ածեն և դիպեցուցանեն վբարի աստեղն ծննդեան թշուառականին: Եւ արդ զի՞նչ արարից, զի իբրև հարկ իմն համարիմ երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա: Քանզի որպէս վրիպեալ են ստայօդ ճառք նոցա ի մտաց ճըշմարտութենէ, նոյնպէս անչափ բազում են ամբարշտութիւնք նոցա. զի ո՛չ ածեն զմտաւ իմանալ, թէ արդարև, որպէս ասեն, աստեղք իցեն պատճառք չարեաց՝ առ այն որ արարն զնոսա ընթանիան պատճառք չարութեան նոցա. զի թէ ի բնէ չարք իցեն՝ յոյժ չար է արարիչն որ արարն զնոսա: Եւ թէ արձակ կամս ունիցին լինել չարք, թէ այդպէս է, կենդանութեամբ ունին զշարժումն և հանճար ընտրողութեան ի գնացս իւրեանց. ապա և նահանջեն զգնացըս յանդուգն չարութեան իւրեանց՝ կարող են և զայս ասել զաստեղաց, և այսպիսի իրօք բամբասել զանշունչսն: Մորոսութիւն մեծ է որչափ ինչ արդեօք վրիպեալ գտան վարդապետք անհամ և անուսման ստայօդ արուեստին. զի [494բ] բարիքն և չարիքն ասեն ո՛չ որպէս արժանի իցեն || որ առնուն զնոսա բաշխին, այլ որպէս դիպեսցի աստղն որ և իցէ ի տեղւոջ՝ յորում և իցէ բարեգործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի սակաւիկ ինչ րոպէ այնր ժամու: Եւ քանզի ընդ այլ կողմն լինին հայեցուածք նորին աստեղ, չարագործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի փոխել միւսոյ ևս

6 ԱԲ—չարէգործի: Ուղղեցինք մենք:
6—7 Բ—«ևս տեղի» փխ. «և ստեղի»
9 Ա—րոպայիցս տայ օդ
11 ԱԲ—ՁՁ—թշուառակին
21 Ա—ընտրողութիւն
27 Ա—դիպեցցի
28 Ա—տեղիոջ
30 ԱԲ—«աստեղք», ուղղեցինք «աստեղ»

ըոպէի· և դարձեալ թէ սակաւիկ ինչ թիւրեսցի նոյն էջ 135 աստղ, զշարժումն և զդէմս իւր փոխէ առ է || չարագործաբաշխն ըոպէն: Արդ եթէ այնչափ անհամար ըոպէիւք և անչափ և վայրկեննեօք արագափոխն ժամուց լինիցի ի փոփոխումն կերպարանաց աստեղացն ի բիւրազգի դնացս և ի շրջանս, ո՞րչափ արդեօք թագաւորք ծնանին հանապազ ի փոփոխմանցն որ լինին ստէպ ստէպ կերպարանաց աստեղացն, ընդէ՞ր ո՛չ հանապազ ծնանէին թագաւորք: Եւ վասն է՛ր ի հարց առ որդիս ի կարգի գայ ժառանգութիւն թագին թագաւորաց, քանզի ո՛չ ոք երբէք ի թագաւորաց պահեաց գտանել զժամ որդւոյն իւրոյ աստեղօք՝ տեսանել թէ հասանիցե՞ նմա թագաւորութեան վիճակ թէ ո՛չ: Եւ ոչ ի ծառայից ոք երբէք եղև տէր· թէ զայս այսպէս տեսանիցեմք: Այլ ահաւասիկ տեսանեմք՝ զի Ոզիայ ծնաւ զՅովա-
[495ա] թամ, և Յովաթամ զԱքազ· և Աքազ ծնաւ ||Զեզեկիայ: Եւ զի՞ արդեօք ո՛չ պատահեաց ժամ ծննդեան ծառայութեան միում ումեք այնց թագաւորաց՝ որ կարգ ըստ կարգէ թագաւորեցան: Եւ թէ դարձեալ ասեն եթէ բարեաց և չարեաց ո՛չ ի մենջ իցէ յօժարութիւն, և ո՛չ առ ի մէնջ լինիցի սկիզբն նոցա· այլ ի ծննդաբաշխն ծննդոցացն ակամայ և ո՛չ կամօք մերովք· թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են օրէնք, որ դնեն սահման և պատուիրան, զոր ինչ արժան
էջ 136 է գործել և զոր ինչ ո՛չ: Աւելորդ են դարձեալ || և դատաւորք, որ պատուեն զբարեգործն, և առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանօք, քանզի ըստ բախտից ծննդոցն ժպրհութիւն և չարութիւն գողոյն իւրեանց կամացն, և ո՛չ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութեամբն, զի ո՛չ թէև կամէր արգելուլ զձեռս իւր ի սպանելոյ (!), կարէր ապրել ի չարիսն գործելոյ· զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գալ ի գործ սպանութեան: Նաև մեծավաստակն արուեստագիտաց ընդունայնա-

2 ԱԲ—«փոխի», ուղղեցինք ըստ Հայկ. բառ. «փոխէ»
4 Ա—արագայփոխն
7 Ա—ըստ պէտս պէտս
9 Ա—յորդիս

11 Ա—որդոյն
21 Ա—մերոյվք
26 Ա—ժպրութիւն
31—1 ԱԲ—«ընդունայնասոյր է և վայր» տեղին հարմարչէ: Յեն-

սոյր է և վայր՝ և աշխատութիւն մշակացն անօգուտ էր, զի երբու ոչ կարկառուցուն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրկան չրջելոյ. և վաճառականին այն կամք էին թէ գայցեն դիպիցեն նմա շահք [495բ] բազումք մեծութեանց յորժամ խա||ղաղ նստիցի յաշխատութենէ ճանապարհաց, եթէ ի բաշխից բախտից ժողովէին նմա մեծութիւնքն ձրի. և թէ ընդ արդարութեան զոր գործէին մարդիկ ո՛չ լինէր նոցա պատիւ և պարգև, և ո՛չ պատիժ և դատապարտութիւն չարագործացն. ապա իղուր և ընդունայն են յոյս քրիստոնէից, և առանց նահանջելոյ անձանց ընթանային ամենքեան յամբարշտութիւն, զի ո՛չ գոյր վրէժխնդիր, որ խնդրէր վրէժ չարեացն գործոց: Քանզի էջ 137 ո՛չ մերով || կամաւ լինին, որպէս ասեն մոլորեալքն. և զոր ինչ ո՛չ յիւր կամս ոք գործիցէ, զիա՞րդ կրիցէ ընդ այնր պատուհաս. և ուր հարկ և ծննդաբաշխ բախտն ունիցի իշխանութիւն, չի՛ք տեղի վրէժխնդրութեան անօրէնութեան թէ ըստ արժանի գործոց իւրոց առնուցու հատուցումն չարագործն արդար դատաստանօքն: Տա՛տ բաւական լիցին մինչև ցայս վայր: Զայս՝ Բասիլիոս: Արդ՝ որովհետև կշտամբեցի զչար իմաստասէրսն, զմոլորեալսն ի բաշխումն բախտից ծննդաբանութեանց յանդիմանել զնոսա բանիւ Սրբոյ հօրն: Ցառեցից այսուհետև որ ինչ ի բարի յիմաստասիրացն ասացեալ է յաղագս երկնային զարդուդ. զոր սրբոց հարցն մերոց և վարդապետաց ընկալեալ յեկեղեցի առին. որում և աստուածային գիրք չարավանդեն: Յառաջ [496ա] ժամանակաւ մարդիկ իմաստասէրք, || որք զանձինս իւրեանց ի սկզբանէ մանկութեան իւրեանց ետուն ի դեգերումն երկնային տեսութեան, և զընութիւն իմաստութեան ի վայր արկին, հասու եղեալ ամենայնի, դեր ի վերոյ երկնաճեմք երևեցան. և պսակս և աշխարհս և գոհութիւնս ի

թադրում ենք թե պետք է ուղղել «ընդունայն, իզուր և ընդ վայր»

10 Ա—նահանջելոյս

11 Ա—ընթանաին

12 Ա—չարեանց

14 Բ—կարիցէ

15 ԱԲ—«ախտն ունիցին» ուղղեցինք «բախտն ունիցին» ըստ ՆՀԲ-ի

25 Ա—չարավանդեան

26 ՊԴ—մարդք

27 ԱԲ—«իւրհանց» չիք

մեծամեծ թագաւորաց ընկալան: Իսկ վարդապետք եկեղեցւոյ ուսումնասիրութեան զանձինս իւրեանց տուեալ ան-
էջ 138 ցին ընդ ամենայն ճգնութիւնս, պահե||լով զաստուածային հաւատս, մկրտեցան ի խորս գիտութեան. քանզի և գրիւ օրէնքս ո՛չ ընդդէմ են բնական իմաստութեան, ապա եթէ միաբանութիւն է, դաստիարակ եղեն մեզ առաջի իմաստասէրքն, զի նոցա տես քննութեամբն յորոց ճշմարիտքն ասացան: Եւ մեր հոգևոր հարանցն առաջնոցն ընկալեալ ի նոցանէ զտրամագիր ասացեալսն. զի յերկոցունց յարմատոյն և ի ծայրէն պահելով զմեզ զաստուածային հաւատսն, պտղով ծայրին առլցեալք և հաստատուն արմատովն միշտ դալարաբերք պտղաբերք գտցուք ի գիտութեան: Արդ՝ ահա Ե պարունակք ասեն շրջագայց ընդ հրային կամարաւն երկնի, ընդ որ շրջին աստեղք ի նոսա եդեալ դիզեալք զմիմեամբք ի մէջ միմեանց ատրճանեալք. և այսպէս ասեն դիրք և գնացք աստեղացն (ի մէջ միմեանց ատրճանեալք): Եւ այսպէս յամենեսեան գնան աստեղքն հակառակ ընդդէմ: Ի ներք||նումն լուսինն բերի յիւրում գօտւոջն: Եւ ի վերայ նորա Ե աստեղք մոլորականք բերին յիւրեանց գօտւոջն: Եւ ի վերայ նոցա բերի արեգակն յիւրում գօտւոջն և ի վերայ ամենայնի է անմոլոր աստեղքն

1—2 Ա—եկեղեցոյ
2 ԱԲ—«իւրեանց» չիք
4 Պ— «և» չիք
4—5 Պ—«գրաւոր օրէնք» փխ. «գրիւ օրէնքս»
5 Պ—«ընդիմանան բնական գիտութեաննն» փխ. «ընդդէմ են բնական իմաստութեանն»
6 Ա—միաբնութենէ դաստիրակ
6 Պ—առաջին
7 ՊԴ «տեսակ» փխ. «տես»
8 Պ—մերոց
8 Պ—հարցն
9 Պ—զտրամագիծն ասացեալս
9—10 Պ—յարմատոցն
10 Պ—մեզ
12 Պ—դալարաբերեալ
12 ԱԲ—«պտղաբերք» չիք
12 Պ—«լիցուք» փխ «գտցուք»
13 Պ—հարկաւոր շրջագայց
14 Պ—կամարին
15 Պ դիզեալ
15 Պ—«ատրճանեաւք»-ից հետո կրճատվում է մինչև մյուս տողի «եւ այսպէս» բառը
16—17 ԱԲ—փակագծյալ մասը թվում է թե կրկնված է վերին տողը։
18 Պ—ներքնումս
19 ԱԲ—«նորա» չիք
19 Ա—գօտիոջն
19 Պ—մոլորակքն
20 Պ—«բերի» չիք

քերին ի վերնում գօտւոյն: Եւ են ամենեւին ցրտութիւն. և
միջնորդեն արեգական և արփոյ. և զանչէջ տօչորումն ար-
էջ 139 փոյն յիւրեանց բնական սաստիկ ցրտովն բարեխառ||նու-
թիւնս առնելով արեգական մատուցանեն օգնութիւն: Իսկ
արեգական առեալ հեղու ի ներքին գօտիսս. և ի ձեռն մօ-
լորականաց սփռեալ տարածանեն ընդ երկիր օդով և լու-
սով: Զի օդն ունիցի զհովութիւն և լոյսն զարեգակնային
մասն հրոյն. և ի ձեռն այս երկոցունց նուրբ և անօսր տա-
րերացս կենդանածնեալ լինի երկիր օգնականութեամբ ծո-
վային ջրով բոյսք խոտոց և պտուղք ծառոց. և չարժուն
կենդանատեսակք չնչաւորք. և ամենայն սողուն և հետե-
ւակք, թռչուն և սեռականք, գազանք, անասունք, նուա-
զութիւնք և աճմունք, ապականութիւնք մարմնոյ, լրմունք
և պակասութիւնք ուղղոց անասնոց և մարդկան, նոյնպէս
արեանց և չնչոց առ ի լինելութիւն և ապականութիւն. զի
լինելութիւնն իցէ սկիզբն ապականութեան, և ապականու-
թիւն դարձեալ անդրէն իցէ սկիզբն լինելութեան: Զի այսմ
ավնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ զտեւողութիւն:

[497ա] Զ. ՅԱՂԱԳՍ ՈՐ Ի ՄԷՋ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԵՆ ՇԱՐԺՄՈՒՆՔ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

Ամենայն արարածքս առ ի յօգուտ մարդկան եղեն ըստ
քարերարութեան և մարդասիրութեանն Աստուծոյ. զի որ-
պէս պատճառք ճշմարիտ արարչութեանն՝ նոյնպէս և ան-
էջ 140 սխալ մատակարարութեանն:՝ Արդ՝ է || բնութիւն մի

1 Ա—գոտոջն
1 Պ—«ամենեցուն» փխ. «ամե-
նևին»
2 Պ—արփւոյն
3 Պ—իւրեանց բնական ցրտովն
սաստ' կ բարեխառնություն
4 Ա—առել
5 Պ—գօտիսն
6 Պ—տարածանէ
8—9 Պ—երկուցս այս նուրբ և
անօսր տարերցս
8 Բ—անօսր
11 Պ—կենդանի շնչաւոր
11—12 Պ—հետեւակ
12—13 Պ—և անասուն
16 Պ—«իցէ» չիք
16 Պ—ապականութիւնն
17 Պ—«անդրէն իցէ» չիք
19—20 ՊԵ—«եւ տեսութիւնք» չիք
21 Դ—սկզբից կրճատվել է մինչև
4-րորդ տողի «Արդ է...»
23 Ա—չարութեան: Տեքստն հա-
վանական է խանգարված
24 ԱԲ—մատակարարութեան

հողմ, ամպ, ձիւն, եղեամն, օդ, և ծխածան և ձայն որոտման նոցին սակի է, և շանթիք, և ցոլմունք. է՛ ի սոցանէ որ սեռական է՝ և պատճառք առ ի պէտս աշխարհի կենոյ. և են ի սոցանէ, որ հետևանք են սեռից, և դոյք առ ի տեսութիւն և երևմունք նշուլից: Արդ՝ հողմ սեռ ցրտութիւն. իսկ մասունքն ի բաժանմունս բաղումս ճանձրութիւն գործի, համբառնալով գծովային ջուրսն և լեռնայնոյն և դաշտայնոյն զառ ի հասարակութիւն մատակարարելով: Իսկ առ ի յոյժ ցրտութեան ձմեռնային ժամանակին լինքն ամպն կոտորոտի հանդերձ խոնաւութեամբն բաժանի, բրդի, դնի, դիզու, ի բարձրաւանդակ վայրսն՝ զոր և ձիւն անուանեմք: Իսկ ի նոյն ցրտութենէ ի պարզ ժամանակի յորժամ ջինջ երկին լինիցի ի խոնաւութենէն վերնոյ՝ ձիւնակերպիկ իջեալ սփռմամբ նօսր բնութեամբ հողմոյն՝ զոր սերոնսիրդ կոչեմք՝ դնի ի վերայ երկրի, զոր եղեամդ անուանեմք: Իսկ ի պարզութիւն անուշութեան հողմոյն ի ձեռն [497բ] հրային մասինն || սփռի տարածանի առ երկրաւս, առ ի ծծումն կենդանութեան աճմանց և նուազութեանց՝ զոր և օդդ մովորեցաք ասել: Իսկ ի դարնանային ժամանակին յոլովք լինին անձրևք. և արեգակն ի հարաւոյ ի մէջօրեայ էջ 141 մերձեալ, || և ջերմութիւն և խոնաւութիւն յիրեարս խառնեալ և փարատեալ անձրևին յորդեն ներքոյ ի վեր գոլորշիք խոնաւութեան, ընդդէմ ձգման արեգակնային նշուղիցն սփռմամբ անօսրութեամբ օդոյն, և զդենու զդոյնս զանազանս և ըստ երկնային գնդին երևի ի տեսիլս կամարաձև

1 Պ—ամբ
1 ԱԲ— ՋՋ «եղեմն», ուղղեցինք «եղեամն»
2 ՊԴ— շանդիք
2 Դ—«և»-ից կրճատված է մինչև 5-երորդ տողի «Արդ...»
4 Պ—դոյնք
5 Պ—հողմոց
5 Դ—«ցրտություն է»-ից հետո կրճատված է մինչև 8-երորդ տողի «Իսկ...»
7 Պ—ջուրս
8 Պ—առ ի
9 Ա—ամբն
11 Ա—բարավանդակ
13 Պ—խոնաւութենէ
13 Պ—ձիւնակերպ
14 Պ—անօսրութեան
15 Պ—եղեամն, ԱԲ եղեմն
19 Պ—օդ
21 ԱԲ—մերժեալ
22 Պ—յօդէն
22 Պ—ի ներքուստ
22 ԱԲ—գոլոշիք
25 Պ—«տեսիլ» չիք

ողորկակող, զոր և մարդիկ աստուածակամար կարդացին. և է նշանակ դադարման և փարատման յորդ անձրևաց: Բայց եթէ կրկլին երևեսցի երփն երփն գունօք զգաւազանսն ձդելով՝ զսաստիկ անձրևաց և զդողացուցիչ յորդութենէ յայտ առնէ: Իսկ մեկինն զդադարումն և զփարատումն, քանզի է՛ր սա ի սկզբանէ ընդ երկնի. զի հետևանք են նուրբ տարերց որպէս մաղդութիւն ծխոյ, առ ի պարզիլ քամիլ դէջ խոնաւութեան ի հրային կերակրոյն, և ապա յիստակիլ սրբիլ լուսատեսիլ բոցոյն: Արդ՝ ի սկզբանէ լինելութեան երկնի և երկրի, և ի սկսմանէ անձրևացն բերի տեսիլ նշանի այսորիկ, յորում մարդիկ յիշատակեցին զդարձումն և զդադարումն յորդ անձրևաց: Զսոյն զսա յաւուրս առեալ
[498ա] արկածից անչափ || անձրևացն՝ որով դատեցաւ զդարն առաջին, դնել ուխտ ընդ արդարոյն, զի այնպիսի հեղեղ բարկութեան այլ մի՛ եկեսցէ յերկիր: Իսկ սովորական
էջ 142 անձ||րևն որ յառաջ քան զմեծ ջրհեղեղն էր, և ձդումն երևմանն որ էր յառաջ քան զջրհեղեղն՝ լիցի և զկնի ջրհեղեղին անձրևք և նշոյլք, յորմէ բաղկանայ ձև կամարին իբրև զբազմատեսիլ երանգոց. և մարդիկ հայեցեալ ընդ այս ակնկալութիւն յուսոյ լիցի ըստ առաջին յարմարական արարածոյն: Իսկ որոտումդ որ լինի յանկարծակի յեղանակ երից ժամանակաց, և երբէք ի ձմերայնի ո՛չ լինի: Այլ ի գարնան յաճախ և սաստկագոյն: Ասացից ո՞րպէս է և թէ վասն է՞ր է: Քանզի ի ձմերայնի ստերջ են ամպք, և որ բերինն ի խոնարհ՝ ինքեանք են այնք, հանդերձ ջրային խոնաւութեամբն, վասն որոյ և ո՛չ ձայն կարեն արձակել: Իսկ ի

1 Գ—ողորկակալ
2 Գ—փարատելոյ
4 Գ—յորդութեանց
5 ԱԲ—«մէկինն» ուղղեցինք «մեկինն»
6 Դ—հետևակք են
7 ԳԴ—մղտութիւն
11 ԱԲ—մարդիդ
11 Գ—մարդիդ, դրեցինք ըստ Գ օրինակի, թեպետ կասկածելի յե յերևում
12 Գ—յաւուրսն յառաջինս
14 Գ—թէ այսպիսի
20—21 ԳԴ—արարածին
22 Գ—ձմերանի
22—23 Գ—գարնանայնի
23 Գ—որպես են
24 Գ—ստերջանան
25—26 Ա—խոնաւութեամբն
26 Ա—արձակեալ

զարնանային ժամանակին օդն պարարի խոնաւութեամբն․ և յարեգակնային ջերմութենէն ջլանայ զհարստութիւն․ և առ ի յո՛յժ փոթորկեալն խոնարհի ի ծով, և բերանացեալ համբառնայ զջուրն ի վեր՝ և ի սաստիկ արբմանէն ծանրութեամբ յառաջ խաղայ։ Իսկ այլ հողմք չուրջ պատեալ զնովաւ զօրէն կառավարի ղերասանակս ի ձեռս առեալ [498բ] ստիպաւ անցանէ յերկնային ասպարիսին, իբր || առաջին և միջին և վերջին բախմունս և ճայթմունս գործեն․ չկարացեալ ընդ անդայտութիւն մարմնոյն միանգամայն հոսեալ զբաղմութիւն ծովային ջուրցն, զօրէն դժուարածին էջ 143 կա||նանց բարձրաճիչ ձայն արձակեն։ Զորոտումնդ ասեմք և այս ոչ դուզնաքեայ և կամ դատարկ իրօք։ Քանզի ի կենդանի ծննդոց մարդական որք յո՛յժ դժուարին, չիկնելն և չառագունելն և մեծաձայն աղաղակելն ո՛չ այլ ինչ է, այլ որչափ զոդին յինքն քաղէ զձայնն ի վեր բարձրացուցանէ, չնչերակքն ի խոնարհ կողմ զմարմինն ճնչէ, զի որ ի ներքսն իցէ բռնադատեալ ուժով ի վայր բերցի։ Իսկ եթէ առ մասն այս բնական հնարիւք վարիցեմք, ո՞րչափ ևս առաւել մեծ մարմինն ամպոյ որ է պատճառ ծննդոց երկրային թանձրախիտ մարմնոյս։ Քանզի ձմեռնային ժամանակաւ պաղեաց ձուլեաց սառեաւ ընդարմացոյց զբերբեր դէմսն զարդաւանդեալ հող տեղեացն․ սոյնպէս և զամենայն առապարս։ Արդ՝ ո՛չ միայն կարօտ է սա ջերմութեան և խոնաւութեան՝ այլ և ձայնի արձակելոյ յերկնուստ․ զի ի սաստիկ ճայթմանէ օդոյն շարժմամբ խտացեալ թանձրու-

2—3 ԱԲ — «և ի առ» «ի»-ն մենք բաց թողեցինք
3 Պ — փոթորկելն
4—5 Բ — ծանդրութեամբ
6—7 Պ — առեալ ստիպելով
8 Պ — դործեն
9 Պ — գայտութիւն
10 Ա — ջուցն զորոտումդ
13 Պ — ի կենդանածննդոց
15 Դ — զհոգին
16 Դ — կոյս փխ. կողմ
17 Գ — ներքոյ
17 Ա — բռնադատել
18 ԴՊ — «ոմանս» փխ. «առ մասն»
18 ԴՊ — այսպիսի
19 ԴՊ — «ծննդոց» չիք
21 ԴՊ — ընդարմացոյց
21 ՋՋ — «ընդամրացոյց» փխ. «ընդարմացոյց» ուղղեցինք ըստ ՆՀԲ
22 ԴՊ — «դէմս» չիք
22 Ա — դէսն
22 Պ — արգաւանդահող
24 ԴՊ — արձակման

թիւն հողոյս թուլացի, և ի դալարաբեր արմատոյն բոյսքն խոտոցն ի վեր ընձիւղիցին: Սոյնպէս և պտուկք ծայրից [499ա] ծառոց բացեալ փթթիցին. և այլքն ըստ իւրաքանչիւր || կարգի զձմեռնային ծանրատաղտուկ թախծութիւնն ի բաց էջ 144 ընկենուցուն, զարթուցեալք և զուարթա||ցեալք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու զվայելչութիւն: Ապա թէ լինիցին ինչ հետևանք վնասուց ի սաստիկ որոտալոյ, իբր թէ կարկուտ և հրաձգութիւնք, այս ի վրէժխնդրութիւն անզգամաց և ի խրատ այնոցիկ որ զահ և զերկիւղ արարչին չունին ի հոգիս իւրեանց: Քանզի մարդկան իշխանաց գործիք են տանջանաց գաւազանք, չարիք, շղթայք, պէսպէս մեքենայք, և մարդիկ սպասաւորք և սկուռք: Ո՛չ զի մարդատեացք իցեն թագաւորք, այլ յառաջահոգակք, շինիչք և խաղաղասէրք, կարգիչք և յօրինիչք գեղեցկադիր օրինաց: Իսկ վերին թագաւորն արարչական զօրութեամբն բարերար և մատակարար և մարդասէր: Իսկ դատողականաւն խրատիչ և կազմիչ. և լսեն ամենայն տարերքս և ահաւորութեամբ կան ի սպասու. անչափութիւնք անձրևաց ողողեն, և երաշտութիւնք զերկիր դալարաբեր ցամաքեցուցանեն, ժանտախտս գործեն, սուր հիւանդութիւնս, մինչև հարկանիլ մարդ և անասուն առհասարակ: Իսկ յորժամ յանհնարին ցասումն ումեք բրդիցի, որպէս երբեմն ուրեմն ի վերայ Սոդոմայեցոցն ի յերկնէ ի հրեղէն մարմնոյն կոտորոտեալ ի վայր հոսէր. զոր և այսօր ի նմին մարմնոյ անկեալ յերկիր շանթիւ անուանեմք, և հասեալ իբր կենդանի և մտաւոր զքարէջ 145 [499բ] կութեան հրամանսն կատարէ. || և չդադա||րելովն ծակէ

1 Ա—արմատոցն
2 ԴԳ—ընձիւղեսցին, ՁՁ — ընձիւղեցին
4 Ա—«թաղծութիւնն» ուղղեցինք «թախծութիւն»
7 Ա—ինձ
8 ԳԴ—կարկուտք
8—9 Ա—անսգամաց
10 Գ—կրճատվում է «իւրեանց» բառից հետո
10 ԳԴ—յանձինս իւրեանց
12 Գ—սարուկք, Դ—ստկուռք
12—13 Ա—մարդատեայցք
15 ԱԲ—«թագաւորն» չիք
16 ԱԲ «և մատակարար» չիք
18 Գ—անչափութիւն անձրևաց ողողանեն
20 Գ—«գործեն» չիք
22 Դ—Սոտոմայ
23 ԳԴ—«հոսեցուցանէր» փխ. «հոսէր»
24 ՁՁ. նաև ՆՀԲ—«շանթիք», բայց մենք ուղղեցինք «շանթիւ»
26 ԳԴ հրամանն կատարէր

ղթանձրութիւն երկրի թա՛փ անցանէ, ի ներքին կիսագունդն հասանէ. զի ուստի հատաւ՝ անդրէն զտեղի առցէ: Եւ նորին հրոյն սակի իցէ, զոր ցոլմունս աստեղացդ ասեմք: Քանզի առ ի յոյժ բախման շրջագայ պարունակացդ շարժելով գյարմարական ընթացսն, երևումն լինի վերին լուսոյն իբրև ընդ անօսրափապարս ինչ օդեղէնս, և յաղամողեալ լուսոյն առ ի ցրուեալ ուժգնութեան օդոյն. և վաղվաղակի ժողովումն ծածկութիւն անդրէն լինի: Եւ մեք հայեցեալ ի հեռաստանէ, չկարացեալք ճշմարտութեամբ ի վերայ իրացն հասանել հաստատութեամբ, աստեղ թափելոյ նշան առնեմք զայն. և ո՛չ լուսոյն վերնոյ, որ է ճշմարիտ: Բայց ոմանք ի փիլիսոփայիցն որ յեկեղեցւոջն, ասեն՝ թէ հողմ սառնային և թանձր՝ որ և զնա եթեր կոչեմք, նա խոնարհի յամպ և զջուրն իբր ոլուն սառոյց ընդէ, և այն է կարկուտ: Ասեն թէ և զորոտումն այն հողմ առնէ, և զփայլատակմունսդ: Զի ամենայն արարածք բնութեամբ ունին յինքեանս հուր՝ եթէ ցամաքայինք և եթէ խոնաւայինք: Եւ ի բախել հողմոյն այնմ զամպն, հուր ելանէ յամպոյն և ձայն ճայթման ըստ բախման հողմոյն: էջ 146 Զի եթէ սակաւ բախէ, || սակաւ ելանէ ձայնն և հուրն, և անդրէն ընդ ամպսն ցանի ի վեր բերելով օդոյն: Եթէ ուժգին բախէ հողմ՝ ուժգին և ձայնն, և հուր [500ա] ելանէն, || և չզօրէ օդն ի վեր ցանել զնա ընդ յամպն ի խոնարհ անկանի. և ի տեղին, յոր անկանի՝ խաղաղութեան ակն ո՛չ ունիմք: Բայց մեք որ յառաջ հուրն տեսանեմք և ապա զորոտումն լսեմք, այս է պատճառն, զի թէպէտ և յամպոյն զոյգ ելանէ ձայնն և հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երևի, վասն զի ակն երագ է քան զունկն, և ակն փոյթ կարէ տեսանել ի հեռուն զհուրն յորժամ յամպոյն

1—2 Ա—կիսագունտն
2 Պ—«հասանէ» չիք
3 ՊԴ—սորին հրոյ սակի է
3—4 Պ - «անուանեմք» փխ. «ասեմք»
5 ԱԲ—զարմարական
6 ՊԴ—անօսր փապարս
6—7 ՊԴ—յաղամողել
7 ՊԴ—ցրուել
12 ՊԴ—«ասացին» փխ. «ասեն»
14 Բ—ուլուն ուլուն
16 ՊԴ—զփայլատակմունս
17—18 Դ—ցամաքաինք
19 ՊԴ—ճայթմանց
22—23 ՊԴ—հուրն ելանէ
29 ՊԴ—«ի հեռուն» չիք

ելանէ: Իսկ ղձայնն ունկն ոչ կարէ լսել ի հեռին, մինչև ո՛չ ի մօտ հասանէ: Իսկ պցոլմանէ աստեղացդ ասեն՝ թէ հողմն այն ի պարզ ժամանակի բախէ ինքն զինքն և հուրն ելանէ որպէս ամպոյ, բայց նօսր ելանէ ի հողմոյն և ո՛չ որպէս յամպոյն: Եւ օդովն վերաբերեալ անդրէն ամփոփի:

## Է. ՅԱՂԱԳՍ ԿԱԹԻՆ ԾՐՈՅ

Զկաթին ծիր որ անուանեցին՝ ո՛չ այնպէս որպէս չար
փիլիսոփայքն առասպելաբանեցին բազում բանիւք: Զի ո-
մանք ասացին զդմանէ՝ թէ ճանապարհ է դա՛ հին արեգա-
կան հետք: Իսկ այլք տգիտագոյն քան զնոսա ասեն թէ՝ ա-
ռագաստն է Պերսեփոնեայ, զոր սպիտակ սուգն կոչեցին Ա-
էջ 147 Թենացիքն: Այլք ի || Նոցանէ ասեն՝ թէ Հերակլէս զանդէն
գերոնեա ընդ այդ չաւիղ վարեաց: Նաև այլ ևս ըստ նոցին
արուեստի ասեն թէ՝ տարածումն է ստեանցն Հերեայ,
[500բ] կնոջն Արամազդայ: Դարձեալ ոմանք յառաջնոցն || հայոց
ասացին թէ՝ ի խիստ ձմրան Վահագն նախնի հայոց դո-
ղացաւ զյարդ Բարշամայ ասորեստանեայց նախնոյ, զոր և
մեք սովորեցաք բնախօսութեամբ յարդգողի հետ անուա-
նել: Թողէ՛ք զայդ ի բաց, ո՛վ ածասէրք և մի՛ դուք զայդ-
պիսի բանս լսէք. քանզի փիլիսոփայքն բարիք ասացին

1 ԱԲ—ակն
4 Բ—յամպոյն
4 Գ—«անօսր» փխ. «նօսր»
5 Գ—անդէն
7 Դ—կաթինդ
7 Ա—ձիր
7 ԳԴ—ոչ այնպէս է
8 ԳԴ—«քանզի» փխ. «զի»
8 Գ—կրկնատված է մինչև 20 տո-
ղի «փիլիսոփայքն»
10 ԳԴ—«հետ» փխ. «հետք»
10 ԴԳ—տգիտագոյնք
10–11 Գ—առագաստ ասեն
11 Գ—Գերսեփոնայ
11 ԳԴ—սուգ
12 Գ—զանդէս
13 Գ—գէրիոնի, Դ—գիրիոն
13 Գ—«այդ» չիք
14 ԱԴ – Ներեայ
16 ԴԳ—Նախնին
16 Ա—Վաակն
17 Գ—Բաղաամայ, Դ Բաղայ-
մայ
17 ԳԴ—ասորւոց
17 ԳԴ—Նախնոյն
19 ԱԲ—«զայդ» չիք
19 ԱԲ—«և» չիք
20 ԳԴ—բան

զդմանէ թէ խիստ աստեղք են բազումք, Նուազք և յոյժ ընդ աղօտ երևմանէն միաւոր լոյսն տեսանի: Իսկ մեք, որ եմք աշակերտ վարդապետաց եկեղեցւոյ՝ ասեմք թէ ամենայն դոյացութիւնք վերինք և ներքինք խառնուած միաբանութեան ունին զօտեացն առ իրեարս.և է դա՛ անգարտութիւն զօտեաց վերնոց, զթաղկեալս հրոյն նշոյլս հեղլով ի վայր երևումն գործէ տեսողացն, այս է նորա պատճառն ճշմարիտ:

## Ը. ՅԱՂԱԳՍ ԶԻԽՍԻՍԱՅԻՆ ԱՍՏԵՂԱՑԴ

Զաստեղաց զոր կոչեն բևեռ երկնի, որ ի տեղն դան շուրջ և ո՛չ ծագեն յելից և դան ի մուտս: Եւ սայլք աստեղացդ, որք դէմ ընդ դէմ զօրէն անուոյ հոլովին, և այլ խումբքն, որ շուրջ զնոքօք են մշտակայ երևմամբ շրջագայնան: Ո՛չ երկրորդեցից զանհամ նոցա ճառս, զի ի յոլով ասելոյ զսուտսն ձանձրոյթ ձեզ լինի: Այլ ասասցուք որում հաւատացեալ եմք: Են դոքա նշանակ տեսական, զի երևակի են և միայնական զանտեսի զարփոյն բերէ զնմանութիւն շրջագայութեան ծառայական հասարակութիւն գործելով, բաժանել երից հատուածոց ուղեգնացութեամբ
[501ա]|| ծովային ճանապարհաւն միաբանութիւն առնելով ցամաքայնոյն և կղզայնոյն: Քանզի թէ ո՛չ է տուեալ և ո՛չ կարէր առնուլ. և կարի գեղեցիկ, քանզի ի մէջ բաժանեցելոցն կարօտութիւն գործեցաւ: Իսկ ի ձեռն Նաւավարութեան զիւրաքանչիւր պիտոյսն դիւրամատոյցս մերձեցոյց,

1 ՊԴ—խիտ
1 ՊԴ—«Նուազք և» չիք
3 Ա—յեկեղեցոյ
4 Պ գ·այութիւնքս
5 ԱԲ—«զօտեացն» չիք
6 ՊԴ—զօտեացն
6 ՊԴ—զթաղկեալ
9 Պ—աստեղաց
10 ՊԴ—բեւեռս երկնից
11 Ա—«ևս այլք» փխ. «և սայլք»
13 Ա—խումքն

14 ՊԴ—«զանհամոցն» փխ. «զանհամ նոցա»
14—15 Պ—յոլովս ասել
17 ՊԴ- իմացական զանտեսին զարփւոյ բերեն
18 Ա—ճառական
19 Պ հատածաց
20—21 ՊԴ—առնել ցամաքայնոյցս
21 ՊԴ—«և կղզայնոյն» չիք
22 ՊԴ—«կարէր» չիք
22 ՊԴ—«մէջ» չիք

արում տեղեակն են։ Եւ սովորութիւն է անսուտ բանիւք զճշմարիտն ասել. զցերեկ ասեն յածեալ մոլորի նաւն, և ի գիշերի ի ձեռն երկնային արջոցդ ապա երթեալ ելանէ յուղիղ ճանապարհ։ Եւ այս ո՛չ փոքր նախախնամութիւն է արարողին բոլորեցունց, զի ի ձեռն սայլիցդ ո՛չ ապրի միայն նաւն այլ և նաւավարքն. այլ և բազում բիւրք ի նաւահանգիստն զիւրաքանչիւր կարօտութիւնս բարձեալ տանին ի տունս իւրեանց։ Ապա թէ այդ այդպէս իցէ, ո՛չ ինչ է յէսդ երկնից վայրապար և դուզնաքեայ, այլ ‖ էջ 149 առ ի մեծ օգտութիւնս մարդկան [և ի փառս արարչին]։

## Թ. ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍՆԻ

Զերկրորդ լուսաւորէդ բիւր բանք ճառեալ են յարտաքնոց և յեկեղեցականաց, բայց մեզ որ ինչ միաւորեալն է բան յերկոցունցն, յայնց հաճոյ թուեցաւ ասել։ Նիւթ ամանոյ լուսնին նմա միայն է գիտելի, որ արարն զնա։ Բայց առաջինքն, որք ջանացան հասու լինել նմա, ասացին այսպէս՝ թէ լուսինն տարր է սեղմ, խիստ, մաքուր, գնդաձև։ Եւ ոչ ունի զլոյսն բնութեամբ, այլ հաղորդութեամբ յարեգականէ առեալ, որպէս զհայելի ընդդէմ արեգական ունելով, և նա ճառագայթս բացարձակէ յիւրմէ, նոյնպէս և [501բ] ⁞ զլուսինդ ասեն։ Բայց երկու ոմանք յեկեղեցոյ ասացին, թէ առանձին ունի լուսինն զլոյսն և ո՛չ յարեգակա-

1 ԳԴ—որում որք տեղեակն են
2 ԳԴ—ասել
2 Ա—զցերակ
3 ԳԴ—արջոյդ
3 ԳԴ—«ապա» չիք
3 Ա—արջոցտ
3 Գ—երթայ
4 Գ—յուղորդ ճանապարհն
4 ԳԴ—«դոյզն» փխ. «փոքր»
8 ԱԲ «այդ» չիք
8 ԱԲ—«իցէ» չիք
10 Ա—«և ի փառս...» նոր է ավելացրած
11 Դ—շարունակվում է տոմարական մի աշխատության հատվածով։
13 ԳԴ—միաւորեալ է
14 ԳԴ—յերկոցունց
14—15 Գ—ամանոյն
15 Գ—միայնոյ
17 ԱԲ—«է» չիք
17 Գ—«խիտ» փխ. «խիստ»
18 Ա—զլուսն
20 Գ—«բազումս արձակէ» փխ. «բաց արձակէ»
20 Գ—նոյնպէս և
21 Գ—երկուք
21 Գ—յեկեղեցւոյ
22 Գ—առանձինն

նէ: Զի որպէս ամանն լուսնի այլ իմն է, նոյնպէս և լոյս նորա այլ իմն է: Եւ ասեն թէ չէ՛ ծանր աստուծոյ զլոյսն բաժանել ի բազում կերպս: Զի լոյսն արեգական ա՛յլ ունի կերպ և լուսնի ա՛յլ օտար ի նմանէ: Դարձեալ լոյս աստեղացն օտար յերկոցունց լուսաւորացն. և լոյս հրոյն և՛ս առաւել օտար յամենեցունց: Նաև է՛ ճճի մի որ անուանի փոսուռայ և ունի լուսաւորութիւն ի տտանն, որ և զգիրս մարթ է նովաւ ընթեռնուլ ի վերայ կարգի գրոյն տանելով: էջ 150 || Արդ՝ եթէ ի զեռունն յայն արհամարհեալ եդ առատուած լուսաւորութիւն յատուկ որ ո՛չ յումեքէ առնու, այլ հաստատեալ կայ յիւրում մարմնին օտար յամենայն լուսոյ, որ ո՛չ սպիտակ է և ո՛չ լուրջ, ո՛չ դեղին և ոչ կարմրագոյն, այլ կանաչ իմն գոյն է լուսիկն մեղմ, ըստ իւրում տկարութեան, համայն յատուկ ասեն, ո՞րչափ ևս առաւել պարտիմք հաւանել՝ թէ լուսնի ետ լոյս աստուած առանձնական, և յո՛չ ոք արար կարօտ ապաստանի: Բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան յարեգականէ ասել. իսկ որ սև նշանքն երևին ի լուսնին իբր գիծք իմն դրոշմի, ասացին զնմանէ արտաքինքն՝ թէ խոյլք են խոռոչաց, որպէս յական յակնթի, և վասն զի ո՛չ անդեղ ունի զլուսաւորութիւն, այնր աղագաւ ո՛չ կարէ տալ լոյս որպէս զարեգակն: Զի և գունդս բիւրեղ որ դեղն ունիցի կամ ապի ունի, ո՛չ կարէ հեղուլ բոլոր չող լուսոյն: Իսկ եկեղեցականքն ասացին թէ այն որ երևին ի լուսնի, երկիր է

4—5 Պ—«և հրոյ ևս առաւել» փխ. «դարձեալ լոյս աստեղացն»
6 Պ—«ի նոցանէ յերկուց» փխ. «յամենեցունցն»
7 Դ—փոսուղայ
8—9 Պ—գրոցն
11 Պ—մարմինն
13 ՊԴ—կարմիր
13 ԱԲ—մեղմն
14 ՊԴ—«ասեն» չիք
14 ՊԴ—«որչափ»-ից առաջ ավելացված է է: «Արդ»
16 ՊԴ—ոչ յոք
16 ՊԴ—«ապաստանի» բառից հետո կրճատված է մինչև 18-երորդ տողի «իսկ որ...»
18 ՊԴ—նշանն երև ի լուսնի
18 ՊԴ—«որպէս գիծ» փխ. «իբր գիծք»
19 Պ—«զնմանէ» չիք
19 Ա—խոյք, Պ — «ելք» փխ. «խոյլք»
20 Դ անկէզ
21 ՊԴ—զբոլորութիւնն
22 Ա—«գունդ» փխ. «գէզն»
24 ՊԴ—«այն» չիք

[502ա] այն և ծով, զի որպէս հայելի զամենայն || ընդդէմ կացելոց իւր ցուցանէ յինքեան զնմանութիւն, նոյնպէս է լուսինն ցուցանէ յինքեան զերկիր և զծով, ըստ բանին, որ ասէ՝ թէ լուսին է հայելի աշխարհի, զի մեծ իսկ է միանձնութեամբ իբրև զերկիր: Եւ ես ցուցից քեզ ի սակաւ նմանութեանց առնուլ օրինակ: Ուսիր ի քաղաքաց որ ընդ էջ 151 ամենայն տիեզերս շինեալ են ի միմեանց հե||ռիք, հայեաց ընդ հրապարակսն և ընդ փողոցսն՝ որ ուղղորդ ընդ արեւելս հայիցեն, զիա՞րդ միանգամայն լուսաւորեսցին, և միով կերպարանօք տեսանես, զի լուսաւորէ զամենայն նուրբ փողոցս և զամբրաստանս: Եւ զիա՞րդ է այս, եթէ ո՛չ առ ամենեսեան է մեծութեամբ. և կշիռ (!) յերեսս ամենեցուն արձակէ զլոյսն: Եւ արդ՝ ի տկարութենէ ճրագի ուսիր զմեծութիւն լուսնի ի լուսոյն իւրմէ, քանզի յոյժ տկար է լոյսն որ տարածանի ի ճրագէ, այնպէս զի յորժամ կտանիցին բազումք ի միում տան, և մի ոմն որ կացցէ ուղիղ ընդդէմ ճրագին և այլոց ստուերքն այսր անդր ձգին և խուսափեն, և այն ոչ միով կերպարանաւ, զի չիք մեծութիւն լուսոյ նորա, վասն այնորիկ ո՛չ կարէ տալ միակերպ ստուերս ամենեցուն, զի որ ի մօտոյ կայ՝ զնորայն մեծացուցանէ զստուեր, և որ հեռագոյն՝ զնորայն փոքրացուցանէ: Արդ՝ եթէ ո՛չ մեծ էր լուսինն, ո՛չ հաւասար կարէր ծագել և միակերպ տալ ստուերս ամենեցուն, որ բնակալեն ի հիւսիս կամ ի հարաւ: Այլ վասն զի մեծ է [502բ] միանձնութեամբ || ըստ աստուածային գրոց, որ ասէ, թէ արար լուսաւորս մեծամեծս ի նշանս, ի ժամանակս, յա–

1 ՊԴ—«այն»-չիք
2—3 ՊԴ—լուսինդ
4 ՊԴ--«լուսինդ հայելի է երկրի»
8 ՊԴ—հրապարակս և ընդ փողոցս
9 ՊԴ—նայիցին
9 ՊԴ—լուսաւորին
9—10 ՊԴ—միօք
11 ՊԴ—«և զամբրաստանս» չիք
12 ՊԴ—կշիռ
13 ԱԲ—«եւ» չիք
14 ՊԴ— «իւրմէ» բառից հետո կրճատվում է մինչև 19 տողի «ոչ կարէ տալ...»
20 ՊԴ—մօտն փխ. ի մօտոյ
21 ԱԲ—«զստուեր» չիք, ուղղ. ըստ Պ-ի
21 ՊԴ—«ոլոոյ» փխ. «որ»
21 ՊԴ—հեռագոյնն է
21—22 ՊԴ— փոքր կացուցանէ
23 ՊԴ—ստուեր
25 ՊԴ—ասաց
26 ԱԲ—«իշխանս» փխ. «ի նշանս»

ւուրս և ի տարիս։ Յոյժ պիտոյ են մարդկան նշանք, որ
լինին ի լուսաւորացդ, եթէ ոք ըստ կէտ սահմանին ո՛չ
ելանէ՝ ստարոտի քննութեամբ, զի որ միտ եդեալ ընտրեա-
էջ 152 ցէ զգե||ղեցիկ փորձ նոցա և ո՛չ խառնեսցէ ի ներքս զամ-
բարշտութիւն, ազգի ազգի հնարս օգտութեան գտանէ ի
նշանաց անտի։ Զի վասն խոնաւոյ զժամանակաց բազում
անգամ վարդապետք լինին մեզ օդոցն պղտորութեան և
դառնաշունչ հողմոց սառնամանեաց։ Զի յերեքօրեայ ժամա-
նակի յորժամ վճիտ երևեսցի՝ զյստակ պարզոց յայտ առ-
նէ։ Եւ յորժամ ի մահիկեղջերն զնշան կարմրութեան կամ
զմթարութեան ունիցի, ջուրք բազումք յամպոց յերկիր հե-
ղուն, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօդս բարբառի։
Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն յամպոց, և ի նմին
աւուր ունի մռայլ զարեգակն յամպոց. ջուրք բազում յո-
դոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց և զդառնացու-
ցիչ հողմոց ամբոխելոց յայտ առնէ։ Զի յընծայման լուսնին
բազում անգամ յորժամ յիստակ և խաղաղ իցէ օդն, յան-
կարծակի խռովութիւն սաստիկ հողմոյ յայտնի ի նմա
մրրկեալ։ Եւ ամպք ի վերայ ամպոց դիզանին, յահ և
յերկիւղ մեծի տագնապի։ Եւ այսու ամենայնիւ յայտ է,
թէ նշանք որ լինին ի լուսաւորացդ, ի շահ օգտութեան
[503ա] աշխարհի է։ Նաւավարն զգուշասցի և մի՛ խառնեսցէ ||
զնաւն ի ծով, այլ անդէն զտեղի առեալ պահեսցէ ի նաւա-

3 ՊԴ--ելանիցէ
4—5 Ա—զանբարրշտութիւն
5 ՊԴ—հնարագտութեան, գտանեն
6 ՊԴ—խոնաւոյ զժամանակն
7 ԱԲ—անգամ չիք
7 ՊԴ—«աւդոյն» փխ. «օդոցն»
8 Պ—դառնաշունչ
9 ՊԴ-պարզոյ
10 ՊԴ—ի մահիկ եղջիւրսն
11 ՊԴ—բազումք
11 ԱԲ—ուղղեցինք «մթարութիւն» ըստ ՆՀԲ
13 ՊԴ—«ունիցի» բառից հետո կրճատվում է մինչև հեաևյա տողի «յամպոց» բառը
15—16 Ա—դառնացուցից հողմոց
16 Ա—յնծաման
18 ՊԴ—«խռովութիւն» չիք
18 ՊԴ—աւդոց յայտնին
19 ՊԴ—դիզանին
21 Ա—լուսաւորացը
21 ՊԴ—օկտութեան
22 ՊԴ—խառնիցէ
23 ՊԴ—ի ծովն
23 ՊԴ զետեղ
23 ՊԴ—պահիցէ
23—1 ՊԴ—նաւահանգստի

հանդստին, զի մի՛ պաշարեալ գտցի ի մէջ ծովուն ի շըն-
էջ 153 չել || հողմոցն ամբոխելոց: Եւ ճանապարհորդն զգուշաս-
ցի, զի մի՛ ելեալ ի տանէ երթալ աշխատել ի բքայոյզ և
կամ յանձրևայց ժամանակի: Սոյնպէս և մշակն յառաջա-
գոյն իմասցի սերմանել և տնկել ի պատշաճ ժամանակի:
Զի ի փոփոխմունս որ լինին ի լուսնի, անասունք զլիու-
թիւն առնուն. և տունկք օգնականութիւն գտանեն աճման
սննդեան իւրեանց: Զի մի՛ մաշելն լուծութիւն և ունայ-
նութիւն գտանի ի նոսա. և յաճելն լիութիւն և պնդութիւն
առաւելու ի նոսա: Քանզի լուսին ի ջերմութենէ և ի խո-
նաւութենէ ունի խառնուած, և այս լիցի քեզ նշան, զի
որք լուսնակի ննջեն, խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա,
և զմիս դալար եթէ ի լուսնակի կախեսցես, վաղվաղակի
հոտի և ապականի: Եւ ի ջրայինս պակասութիւն և լիու-
թիւն գտանի. սապէս և ի սիրտս ծառոց: Եւ գնացք իմն
են ասեն յաշխարհին Եւրոպացւոց յՈվկիանոս, որ երբեմն
ցուցանեն յաւելուած լիութեան, և երբեմն զիջանին ի լի-
ութենէ անտի. և այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխին:
Ի սկզբան ծննդեան լուսնի անշարժական ասեն գնացք խա-
ղացիցն և ըստ աճելն լուսնի՝ սկսանին շարժել և զեռալ:
Եւ դարձեալ՝ յայնմ ծովու որ անուանեալ կոչի երեկորեայ,
[503ք] նմանութեան որակաց է ասեն ի միջին, || իբր թէ ձգեն
էջ 154 և ծծեն, խոնարհին և պակասին ընդ պակասելն || լուսնի.

1 ՊԴ—գտանիցին
1 ՊԴ—«ի մէջ» չիք
1—2 ՊԴ—շնչելոյ
2 ՊԴ—հողմոյն ամբոխելոյ
3 ՊԴ—ելանիցէ
3 ՊԴ—աշխատեալ
4 ՊԴ «ժամանակի»-ից հետո կրճատվում է մինչև 6 տողի «Զի ի...»
6 ՊԴ—փոփոխմունսն
6 ՊԴ—ի լուսնին
7 ՊԴ—գտանեն
8 ՊԴ—ի մաշելն
8 ՊԴ—«ապականութիւն» փխ. «լուծութիւն»
11 Բ—«այլ» փխ. «այս»
13 ՊԴ—կախիցեն
13 ՊԴ—«վաղվաղակի» չիք
15 ՊԴ—ի սիրտս
16 Դ—Եւրոպիա
17 Ա—զհայելուած
18 ՊԴ—փոփոխի
19 Ա—սկիզբն, ՊԴ—իսկ զսկիզ-բըն...
19 ԱԲ—անշարժական ասեն
20 ՊԴ—յաճելն
20 ԱԲ—զեռուլ
21 ՊԴ—Երեկորեայ
22 ՊԴ—ձգեն

և յորդաբուխ վերանան ընդ լնուլն լուսնի: Այս են նշանք և զօրութիւնք նորա ի յերկրի և ի ծովու: Իսկ զժամանակս, զաւուրս և զտարիս՝ որոշէ և սա հանդոյն արեգական, օր ԻԴ ժամ ընթանալով ընդ տիւ և ընդ գիշեր ամիս յընծայմանէն յընծայումն. և երիցս կատարելով առնէ արեգակն ժամանակ յեղանակի: Եւ ԲԺ անիցս կատարելով՝ առնէ տարի ըստ օրինակի Թուոց եբրայեցւոց, որ կատարեն զընթացս տարւոյն ի հին կտակարանաց: Իսկ իշխանութիւն գիշերոյ՝ ցուցանել ի նմա զլոյսն իւր: Քանզի կարակնահատք բոլորութիւնք անուշաձևք երկուց տարերցդ՝ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսնին: Իսկ առ միւսն առ նոյն հանդիպի՝ ընդունելով մասն գիշերային լուսոյն. և նա հանապազօր անխափան գնացիւքն՝ առ սակաւ սակաւ մատուցանէ զմասունս երևակի լուսոյն աճմամբ և նուազութեամբ: Քանզի ո՛չ եթէ հանապազորդ ընդ նմին շաւիղն գնայ արեգական՝ յորժամ ի հարաւակողմ կոյս նահանջիցի, և կամ այսրէն ի միջօրէդ. նոյնպէս և լուսին ի ձեռն այս երկուց փոփոխմանց տալոյ և առնելոյ լինի աճումն և մաշումն: Վասն զի լուսինն բերի ի ներքնում պարունակիս, և արեգակն ի վերոյ նորա ի Ե-երորդ պարունակին. և ի շրջագայանալն երկոցունց հանապազ տեսանեն զմիմեանս: Եւ յորժամ արեգակն գնայ ի մօտ ի լուսինն՝ էջ 155 [504ա] նուազութիւն լինի լուսոյ || լուսնին. || զի վերին կողմ գընդին լուսնի ունի զբոլորութիւն լուսոյն որ ընդդէմ արեգականն հայեսցի, զի ի վերոյ նորա է: Եւ կէս գնդին լուսնի, որ ի խոնարհ յերկիր կոյս հայի անլոյս՝ ներքին կողմն

1 Ա—լնուն
1 ՊԴ բղխեն, յորդեն, և վերանան
1 ՊԴ—լուսնին
5—6 Ա—«արեգակն» չիք
6 ՊԴ—«արեգակն» բառից հետո կրճատված է մինչև մյուս տողի «տարի ըստ...»
11 ՊԴ—լուսոյն
15—16 ՊԴ—հանապազ ընդ մի շավիղ
16 ՊԴ—ընթանայ արեգակն
16—17 ՊԴ—նհանջիցի
17 ՊԴ—մէջօրեայդ
17 ՊԴ—«Սոյնպէս» փխ. «նոյնպէս»
18—19 ՊԴ—լինի փոփոխմունս աճման և մաշելոյ
22 ՊԴ—«արեգակն» չիք
22 ՊԴ—«երթայ» փխ. «գնայ»
24 Պ—որ. այդ չունին ԱԲ
26 ՊԴ—հայի
26 ՊԴ—անլոյս բոլոր ներքին կոյս

գնդին լուսնի երևի ծածկեալ յիւրում ստուերին: Եւ յորժամ հեռանայ լուսինն յարեգականէն, մեծանայ լնու լոյսն լուսնի. վասն զի հեռանալով յարեգականէ, լուսաւորի ներքին կողմ (!) գնդին լուսնի, և ստուեր տարերն իւրոյ ի ներքին կողմն հալածի ի վեր փոխելով: Քանզի այս է յայտնի պատճառ. վերին և ներքին կիսագունդքն առ է պարունակացդ գեր ի վերոյ երկրիս յերկուս բաժանեալ գիշերոյ և տունջեան քառեակ Զ եկօք: Եւ երբեմն հասանելով յարևմուտս ի ներքին կիսագունդն զերկուս վեցեակս արեգական ունիցի գիշերային մասամբքն զառ ի ներքոյս շրջագայութեան: Իսկ ընդդէմ նմին զերկուս վեցեակսն լուսինն ունիցի ի վերայ երկրիս և ընդ կողմն հիւսիսոյ մատուցանէ արեգակն լրումն լուսոյ ունակութեան լուսնի, ո՛չ հանապազորդ լիով. մատուցանէ, այլ ըստ մօտելոյ և ըստ հեռանալոյ յարեգակն, երբեմն կատարեալ լի՛ ի բոլորն բոլորական երևի լոյս իւր, և երբեմն մաշեալ և պակասեալ ի լուսոյն զպակասութիւն իւր նախ ցուցանէ լուսին ի
էջ 156 վերայ միոյ միոյ կողմանց իւրոց: Զի յորժամ աճէ մի՛ || կողմ, միւս կողմ(!) զնշանակ աղջամղջի ցուցանէ: Եւ դարձեալ յորժամ սկսանի պակասել միւս կողմն, ամփոփի ինքն յինքն, զի ծածկեաց ի միւս կողմն. և յորժամ սկսանի երևել յարևմտից յարևելս կոյս՝ ցուցանէ զհայեցուածս
[504բ] բոլորն բոլորակին: || Եւ յորժամ յարևելից սկսանի մաշիլ՝ յարևմուտս կոյս սկսանիցի ցուցանել զմահիկեղջիւրսն, և այնպէս լուսաւորի կողմ (!) գնդին լուսնի՝ որ ի յարեգականէ կուսէ լինի: Եւ որ ի միւս կողմանէ լինի, կէս գնդին լուսնի առանց լուսոյ երևի ծածկեալ ի ծոց իւրոյ հովանոյն. զի պակասումն լուսոյ լուսնի ստուեր տարերն իւրոյ

1 ՊԴ—ստուերի
2 Ա—լուս
5 ՍԲ - «է» չիք
8—9 ԱԲ—«հոսելով» փխ. «հասանելով»
11 Ա—շրջագայութեանն
14 ՊԴ—հանապազ
14 ՍԲ—«մատուցանէ» չիք
14 ՊԴ—«ըստ» չիք
19 ՊԴ—աղջամղջին
21 ՊԴ—ծածկեացի
22 ՊԴ—զհայեցուածն
23 ՊԴ սկսանի
24 ՊԴ—զմահիկն եղջիւրս
25 ՊԴ—կողմն
26 ՊԴ կուսէն
27 Դ—ծածկել
28 ՊԴ—լուսոյն

է ինքն յինքեան ունելով հովանի: Իսկ յորժամ համօրէն այն որ եմն՝ ի բաց հանցէ ի նմանէ զլոյսն, և սուղ ծածկութիւն լինի մինչև անդրէն ծնցի զնա նովին լուսովն: Դարձեալ եթէ դիպեսցի ժամանակ լուսնի կամ ի լրմունս՝ կամ ի միջոցի կամ մերձ ի հինսն, և լուսին իցէ ի վերին կիսագնդին, և արեգակն հանդոյն նմին ի ներքնում կէսագնդլին, և երկոքին դիպեսցին հաւասարակաւորութեամբ միջին տրամագծին ի միում ժամու, ո՛չ կարէ արեգակն մատուցանել ընդ հիւսիսային կողմ(!) զսովորական ձգումն մասին լուսոյն լոկ մնացեալ ի գիշերային անիւն՝ ի լուսոյ կորնչել լուսնի կարդացաք. և կարի քաջ լուսոյն ||
էջ 157 կորուստ ասացաք և ո՛չ տարերն, զի ամենեցուն յայտնի երևի բոլորածիրն ի տեղւոջն, և առ երագ շարժմունս վերնոյ և ներքնոյ անցանել ի բաժանել տեղեաւն անդրէն զսովորականն ընդունի լուսին, վասն զի անցանէ զնովաւ ստուեր երկրի, որ ծածկեաց և խաւարեցոյց զնա: Արդ ամենայն եղեալքս անկեալ են ընդ յարմարական մասամբքն և ընդ
[505ա] ապականագործ հետևանօք: || Եւ այս ո՛չ դուզնաքեայ նախախնամութիւն արարողին, զի մի՛ ոք զարարածս տեսեալ առանց ապականութեան զսոսա իսկ արարիչս կարծիցէ: Այլ զի հանապազ յերևելի տարերս վայելեսցէ զերկրաւոր սպասաւորութիւնս, և զարարիչն ամենայնի դեր ի՛ վերոյ գիտիցէ:—

2 Ա—բայց
2 ՊԴ—«ի նմանէ» չիք
4 ՊԴ—ի լրման
6 ՊԴ—«կիսագնդին» բառից հետո կրճատված է մինչև «և երկոքն...»
7 Ա—երկոքինն
8 ՊԴ—ի միջնում
10 ԱԲ—մնացեալ
12 ԱԲ—քաջայայտնի
13—14 ՊԴ—վերնոյն և ներքնոյն
14 ՊԴ—անցանել զսովորական
15 ՊԴ—ընդունի լոյս լուսին
16 ՊԴ—«երկրի որ ծածկեաց և» չիք
17 ՊԴ—մասամբք
19 ՊԴ—ամենայն գիտասցէ

## Ժ. ՅԱՂԱԳՍ ԱՐԵԳԱԿԱՆ

Ցո՛յժ սիրելի է ինձ ի միաւորութեանց նոցա բանից յիմումս ճառի առնել զառասութիւնս բանից, որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորիդ է բան. և արդ ասացից նոյնպէս եթէ նիւթ ամանոյ արեգականն Արարչին միայնոյ է գիտելի: Իսկ պատուականք յարարածս մարդիկ այնչափ միայն գիտացին զնա, թէ է՛ տարր սեղմ, խիստ, մաքուր, գնդաձև, բոլոր ամենևին, անդեղն և անսայլ, ինքն է ցուրտ բնութեամբ. զջերմութիւն և զլուսաւորութիւն յարփոյ առեալ հեղու յօդս, որով լուսաւորի և ջեռնու երկիր: էջ 158 || Եւ հաւանեցուցանէ զքեզ օրինակ. դունդ բիւրեղ յորժամ յարևու ունիցիս, տես զի ինքն ցուրտ է ամենևին, իսկ որ չողն կաթէ ի նմանէ, պայծառ է առաւել քան զլոյս արեգական, և ուրանօր կաթէ, լուցանի. քանզի ի կաթուած շողոյ նորա հուր ծնանի, թէպէտ և ինքն ցուրտ է բնութեամբ: Նոյնպէս և զարեգակնդ իմա՛: Բայց երկուք (!) ոմանք յեկեղեցւոյ՝ ո՛չ այսպէս, այլ ասացին, թէ ինքն իսկ արեգակն ունի զլոյս իւր բնութեամբն յինքեան բնակեալ. [505բ] ո՛չ յարփոյ և ո՛չ յայլ ումեքէ առնու: Այլ || ասեն թէ լոյսդ արեգական այն լոյսն է՝ որ յառաջ քան զեղանիլ լուսաւորացդ էր. վասն զի լուսաւորքդ արարած են յաւուրն Դ-որդի: Իսկ երից աւուրցն նախագունից լոյսն ցիր բնութիւն էր, և արեգակն աման եղև այնր լուսոյն, և ժողովեաց և արկ աստուած ի դա զլոյսն զայն, զորմէ ասացի թէ ցիր բնութիւն էր. և ժողովեալ ունի զնա յինքեան արեգակն, որպէս ճրագ զհուր, զոր օրինակ այլ իմն հուրն է և այլ իմն ճրագն. զի մինն ունի յարարածի իւ-

3 ՊԴ—յիմում
3 ՊԴ—ճառս
3 ՊԴ զառատութիւնս
3 ԱԲ—«ինչ» չիք
5 ԱԲ «եթէ» չիք
7 ՊԴ—«խիստ» չիք
11 ՊԴ—օրինակն
12 ԱԲ—«է» չիք
14 ԱԲ—զարեգակա
14 Ա—ուրանուր
14 ՊԴ—լուցանի
18 ՊԴ—բնութեամբ
19 ՊԴ—յարփւոյն
19 ՊԴ—առեալ
26 ՊԴ—«զհուր» բառից հետո կրճ. մինչև 48 էջի 2-րդ տողի «Սոյնպէս...» բառը

րում զօրութիւն լուսոյ. և միւսն յարդարեալ կազմի առ ի լուսաւորել: Սոյնպէս և լուսոյն առաջնոյ կազմեցան լինել ամանք լուսաւորքդ: Արդ՝ թէպէտ հոգևորք են և սոքա, սակայն ես հաւանիմ սրբոց հարցն բազմաց միաբա- էջ 159 նելոցն՝ զոր և բարի փիլիսոփայքն արտաքնոցն համա||ձայնեն յարփոյ ունել զլուսաւորութիւն և զջերմութիւն: Թողում զչար փիլիսոփայիցն ճառս, որ ասեն թէ ի չփելոյ երագ ընթացիցն իւրոյ առնու ջերմութիւն և օդոյս բերեալ տարածէ զաշխարհաւ: Բայց իմաստուն յայսոսիկ խորհողաց յայտնի է թէ յարփոյ է, և լոյսն և ջերմութիւն որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել: Եւ վասն ընթացից լուսաւորացդ ի մտից յելս կոյս ընդդէմ երկնի մի՛ ումեք անհաւատ թուեցեալ յամառեսցի, ասելով թէ մեք տեսանեմք զլուսաւորսդ ելեալ յարևելից և եկեալ մինչև յարևմուտս՝ [506ա] և կամ զանուանսդ ինչ կարծեսցէ || վկայս. այլ գիտասցէ թէ երկին է այն, որ հանէ զնոսա յելից և բերէ ի մուտս. քանզի անչափ է երագութիւն շրջագայութեան երկնի: Արդ՝ որք միտս ունիցին՝ դիւրին է ի տեսութեանցն իմանալ, թէ յարևելս կոյս գնան արեգակն և լուսին և բազումք յաստեղաց, որք ո՛չ կցեալ խմբօք ունին զետեղակալութիւնս: Եւ չէ՛ ինչ պիտոյ եթէ ի մրջենէ կամ ի նոյն նմանեաց առնուցումք օրինակս գնացից լուսաւորացդ: Քանզի ասեն արտաքինքն, եթէ մրջիւնն լիցի քեզ օրինակ, առեալ զմըրջիւն դիր ի վերայ երկանի. և տես թէ զիարդ ընթանայ ընդդէմ երկանին եկիցն: Վասն զի ո՛չ ի կողմն կարէ ըն-

3 ՊԴ—աման
4 ՊԴ—հավանեալ եմ
5 ՊԴ—«որում» փխ. «զոր»
6 ՊԴ—«զջերմութիւն» բառից հետո կրճ. մինչև 11-երորդ տողի «Եւ վասն...» բառը
12 ՊԴ—յետկոյս
13 ՊԴ—«յամառեսցի» չիք
13 ՊԴ—ասիցէ
14 ՊԴ—«յարևմուտս» բառից հետո կրճ. մինչև հետևյալ տողի «այլ գիտասցէ...»
16 ՊԴ—«զի» փխ. «թէ»
16 ՊԴ—«յելիցն»
18 ՊԴ—ի տեսութեանցդ
19 ՊԴ—«կոյս» չիք
19 ՊԴ—«լուսին, և»
20 ՊԴ—կցեալ
21 ՊԴ—տողի սկզբից կրճատվել է մինչև հետևյալ տողի «քանզի ասեն...»
24 ՊԴ—դիցես փխ. դիր
25 ՊԴ—երկայնին փխ. երկանին

էջ 160 թանալ| և ո՛չ զոյգ ընդ եր||կանին ընթացից: Քանզի երկանն երագ է քան զընթացս մրջեանն և զկորէ զնա, վասն այնորիկ հարկաւորի ընդդէմ երկանին եկիցն ընթանալ: Իսկ երկանն իւրով երագութեամբն ընդ իւր բերեալ զնա յոր կոյս ինքն գայ ի շուրջ: Դարձեալ թէ կռուեցուցանես զմրջիւն յանուռ ի կողմանէ հեցին, նոյնպէս ընդդէմ անւոյն ընթանայ, բայց զի յոյժ երագ է անիւն, փոյթ փոյթ բերէ զնա ընդ իւրեաւ, չժամանէ մրջիւնն և ոչ զերիր մասն հեցի միոյ ընթանալ, մինչ անիւն հանէ և իջուցանէ զնա երագ երագ ածելով ընդ իւր: Արդ՝ թէպէտ և նման քաջ է օրինակս, սակայն մեզ անարգանք են ուսանել զընթացս լուսաւորաց ի փոքունց և ի մթին օրինակաց. սապէս և զլուսաւորսդ իմա. այլ որ ոք ուշիմ միտ եդեալ հայեսցի, դիւրեաւ է ուսանել ի լուսնոյ. թէպէտ յարեգականէ
[506բ] ո՛չ կարես գիտել վասն առաւել լուսափայլ || ճառագայթիցն, մանաւանդ թէ ի կենդանի ձայնէ յումեքէ ո՛չ վարժիցիս: Այլ հայեցեալ ի լուսին, տե՛ս յընծայման նորա, զիարդ ի մտանել արեգականն երևի լուսինն մօտ ի մուտս, և յամենայն աւուր հայեա՛ (!) ի նոյն ժամու և տե՛ս թէ զիարդ օր քան զօր զարևելիւք երևի. և դիտեա՛ ո՞րչափ տեսեր զտեղին ուր ժամէ ի ժամ փոխեցաւ յառաջ ընդ յարևելիւք՝ այնչափ է նորա ընթացք աւուրն: Եւ ուսիր թէ
էջ 161 երա||գութիւն երկանին է այն որ ածէ զնա յառուր պատել զաշխարհաւ և ո՛չ թէ իւր ընթացքն: Եւ զարեգակն թէպէտ և ո՛չ կարես տեսութեամբ ուսանել, այլ իմացիր ի կեն-

2 ՊԴ—«երագ է քան զընթացս մրջեանն» չիք
2 ՊԴ—գլէ
2—3 ՊԴ—«վասն այնորիկ» չիք
3 ՊԴ—նա հարկաւորեալ
3 ՊԴ—«երկանին եկիցն» չիք
5 ՊԴ—«շուրջ» բառից հետո կրճ. մինչև 12-երորդ տողի «սապէս...»
12 ԱԲ—«մթիանակաց»: Նույն և ՆՀԲ: Ուղղեցինք «մթին օրինակաց»
12—13 ԱԲ—«սապէս և զլուսաւորսդ իմա» չիք
14 ՊԴ—դիւրին է
14 ՊԴ—«ի լուսնոյ» բառից հետո կրճ. մինչև 17-երորդ տողի «տես յընծայման...»
16 Ա—մանաւանտ
20 Ա—«զյարևելիւք» ուղղեցինք «զարևելիւք»
21—22 ՊԴ—«յառաջ ընդ յարևելիւք» չիք
22 Բ—անչափ

դանակացդ անուանեցելոց յաստեղատանցդ: Ահա տեսանես զհարդ կարգեալ կան կցեալ զմիմեանց և ծագեն յելից, նախ խոյն, և ապա ցուլ, և ապա երկաւորի, և որ ի կարդինն, և արեգական կատարեալ զխոյն փոխի ի ցուլն, և ի նմանէ յայլսն ընդդէմ երկնի ընթանալով յարևելս կոյս: Հաւանեսցի իբրև զիս առաջնոցն վասն ընթացից արեգական և այլոց լուսաւորացդ թէ ո՛չ հոլովելով ընթանան, այլ պտուտաբար շուրջ գոլով որպէս զանգոյ զպտոյտ հարել ի տապեղ: Այսուհետև շատացեալ որ ինչ յաղագս ընթացից է բանս, երթիցուք յաստուածային դրոց ճառս որ ասէ՝ եղիցի ի նշանս, ի ժամանակս, յաւուրս և ի տարիս: Բազում նշանս ունիմք ուսանել յարեգականէ, եթէ ո՛չ առնուցումք զխելագարեալ խորհուրդս աստեղաբաշ- [507ա] խիցն, որ ինչ պա||տահման վիճակաց և ծննդաբանութեան է: Քանզի զմի ինչ իրս որ երևին յարեգականէ. և փրկիչն մեր յայտնեաց յաւետարանին՝ թէ յորժամ տեսանէք զի պայ ամպ յարևելից, ասէք թէ անձրև լինի. և լինի այնպէս: Եւ յորժամ հարաւ շնչէ, ասէք թէ խորշակ ընթանայ, և էջ 162 լինի այն||պէս: Ըստ սմին օրինակի, այլ ևս բազում կերպարանօք փորձիւ յայտ լինի, զի յորժամ ընդ ծագել արեգական մթագոյն ելանիցէ՝ արեան և կայծական նշանակ ունիցին ճառագայթքն ըստ փոփոխման խստաշունչ օդոց. և եթէ ի նմին կերպարանս կայցէ և օդն պղտորեալ և յուզեալ ո՛չ յստակեսցի և դոյն մթագին ո՛չ յրթասցի, և հողմք ևս խստաշունչք յուզեսցին, և ամպն ևս քան զևս

1 ՊԴ—«ահա» չիք
3 Ա—խուն
5 Ա—յայսն
5 Պ—«կոյս» բառից հետո կըր-ճատված է մինչև 10-երորդ տողի «երթիցուք...»
11 ՊԴ—ասեն
12 ԱԲ—բազում նշանս
13 ԱԲ—առնուցուք
14 ՊԴ—վասն և ծննդաբաշխու-թեան
15 ՊԴ—«լինի» փխ. «երևին»
16 ՊԴ—տեսանիցէք
17 Ա—«այնպէս» չիք
20 ՊԴ—փորձի՝ հայտ լինի
20—21 ՊԴ—արեգականն
22 ՊԴ—օդոյն
23 ՊԴ—ի նոյն
23 ՊԴ—կայցէ
24 ԱԲ—յուզել ոչ իստակիցի
24 ՊԴ—յստակիցի
25 ՊԴ—խստագոյնք

յաւելեսցի, զերկար խոնաւայուզից և զսաստիկ անձրևաց յայտ առնէ: Եւ դարձեալ յորժամ ամպոց յամպ մտանիցէ և ելանիցէ արեգակն զջերմակիծ շող ամբն յերկիր առաքելով, զխոնաւութենէ օդոյ յայտ առնէ: Դարձեալ յորժամ լինիցի ծագումն զյառաջևսն խանձելով զառօրեայ անձրևածումն նշանակէ: Իսկ յորժամ ի մուտս զյետոյսն խանձիցէ զերկլինս կարմրացուցանելով՝ զառօրեայ պարզոց յայտ առնէ: Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւքդ:

Ասացուք արդ՝ վասն ժամանակաց որ են փոփոխմունք օդոց և գնացք ժամու և երևել սահմանմանեայ ձմերայնոյ, և քաղցրախառն շնչելոյ օդոյ դարնայնոյ, և բոցախառն հրատք տապոյն ժամանակաց ամարայնոյ, և մեղմախառն [507բ] ցրտութեան || ժամանակաց աշնանոյն: Զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանաց արդար էջ 163 գնացիւք արեգականէն՝ շրջին || անցանեն ի վերայ մեր կարգ ըստ կարգի, յօրինեալ յարդարմամբք՝ ըստ ակնարկելոյ զօրութեանն, որ պատշաճեաց զնոսա յիւրաքանչիւր կարգս և ի ժամանակս: Զի ձմեռն այսպէս լինի. յորժամ հեռանայ մերժի յիջանել արեգակն ի հարաւ, և անդէն մշտնջենաւորէ զգնացս իւր, յայնժամ յաճախեալ բազմանայ աստ ի մերում կողմանս երկայնութիւնք ստուերաց գիշերոյն որ է խաւար: Եւ յիջանել արեգական ի հարաւակոյս կողմանս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ օդոց, որ տարածեալ կայ առ երկրաւս. և ի պատճառս խոնաւութեանն, որ զարթնուն ի վերայ երկրի, առնին անձրև–

1 ԳԴ—յաւելցէ
1 Դ—խոնաւայուզ իցէ
2 ԳԴ—յամպոյ
3 ԳԴ—«շող ամպոյն» փխ. «շողամբն»
4 ԳԴ—«Եւ» փխ. «Դարձեալ»
6 ԳԴ—նշանակելով
6 ԳԴ—«Եւ» փխ. «Իսկ»
8 Դ—նշանացդ
9 ԳԴ—որք են
10 ԳԴ—ժամուց

10—11 Դ—ձմերայնոյն
12 ԳԴ—հրատ
13 ԳԴ—աշնանոյ
15 ԳԴ—շրջանին
17 Ա—զնա
20 ԳԴ—մշտնջենաւորել
20 Ա—յորժամ յաճախեալ
21—22 ԳԴ—գիշերոյ
23 ԳԴ—օդոյ
24 ԳԴԱ—պատճառս

յոյզք և Թօնընկէցք և բալաձիգք և ձիւնաբերք: Դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել ելանել ի Հարաւակողմ կողմանց՝ գալ հասանել ի հասարակած երկնից, զհաւասարութիւն տունջեան և գիշերոյ կատարէ: Մեծ սքանչելեօք բաժանի կարգ ժամանակացն. որչափ վերասցի ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր ի ծագելն յերկիր, և ի նոյին զետեղ առեալ դադարեսցէ: Եւ այսպէս քաղցրախառն խառնուածովք յարդարի գարունն իւրով մեծավեղ վայելչութեամբն. զի ի նմա արմատք արձակեն զբոյսս, մարգք զուարճանան, ծաղիկք պայծառանան, տունկք էջ 164 ցցուիցին, ծառք արձակեն զբողբոջսն, և անասունք ‖ Հանդերձ ‖ [508ա] Թռչնօք և ծովային ջրածնունդ զեռնօք. և ամենեքեան ըստ իւրաքանչիւր ազգի գան ի ծնունդ, ի սէր և ի սնունդ: Եւ յետ այսորիկ սկսանի մօտել գալ արեգակն ի փոփոխմունս ամարայնոյ. և երևեցուցանել զգնացս իւր ի կողմանս Հիւսիսոյ, ձգել և երկայնացուցանել զտիւս. և քանզի յամբագնաց ժամօք անցանէ զօդովք, յերկարաձիգ գնացիւք ջեռուցանէ ի վերայ օդոյ. և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, և առնի գործակից և վաստակակից սերմանց ի պաշտել զպէտս նոցա պարարեալ պնդէ զի հասցեն ի չափ սննդեան իւրեանց. նոյնպէս և զպտուղս ծառոց: Եւ յորժամ ի վերին բարձանց ծագեսցէ արեգակն, փոքրկանան ստուերք տարերց երկրի, և կարճին շուքք հասակաց ի մէջօրեայ ժամանակի, տիւքն երկայնք լինին: Եւ յորժամ ստուերքն երկայնին՝ աւուրքն փոքունք լինին, և աստ առ մեզ, որ ի կողմանս Հիւսիսոյ բնակեալ եմք,

1 Ա—«Թուննընկիցք» ուղղեցինք «Թօնընկէցք»
5 ՊԴ—կատարին կարգք ժամանակաց
9 ՊԴ—վայելչութեամբք
11 ԱԲ—«և»՝ «անասունք» բառից առաջ չիք
12 Դ—«ջրասնունդ» փխ. «ջրածնունդ»
12 Ա—ջրածնունտ
13 Ա—ծնունտ
15 Դ—ամարայնոյն
18 ՊԴ—«ի վերայ երկրի զօդս», Ա—զօդս, ԶԶ—զօդոյ
20 Դ—պարարել
20 Ա—պնդէ
20—21 Դ—հասցէ
21 Դ—սննդեան իւրոյ
22 ՊԴ—բարձանցն ծագեցէ

այլազգ անկանին ի մէնջ աստուերք. և յայլում աշխարհի
մէոջ այլազգ, զի Բ աւուրս յամենայն տարոջ ի մէջօրեայ
ժամանակի առանց ստուերի լինի. քանզի կչիռ ի վերայ
գլխոյ ամենեցուն կան ճառագայթք արեգականն, և հասա-
րակ յամենայն կողմանց արկանէ զնշոյլս պայծառութեանն
էջ 165 ի վերուստ մինչև ընդ ներքին ‖ խորս ջրհորոց ընդ նեղ և
ընդ նուրբ բերանս մտանէ շող և լուսաւորէ. և անուանեն
զաւուրսն անստուեր միջօրեայ: Եւ այլք որ ի հեռաւոր աշ-
[508բ] խարհին Հնդկաց բնակեալ են, ‖ և անդր ևս քան զՍինդ
և զՍմրղանդ ստուերք հասակաց մարդկան յերկոցունց
կողմանց երևի. և կոչեն իսկ երկստուերեան աւուրս: Եւ
այս ամենայն ի փոփոխելոյ ընացից արեգական լինի: Եւ
իբրև հասուցանէ զսերմանս և զմիրգս ի կատարեալ չափն,
ապա սկսանի սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ
տապոյն: Սկսանի այնուհետև մերձենալ աշունն, ցուցանել
նմա զմեղմախառն ընացս իւր, և զայ հասանէ քաղցրա-
խառն խառնուածն, որ ունի զմիջնորդութիւն. և ըստ սա-
տիճանելոյ սկսանի երևել նշանակ ցրտոյ կարգին մտանե-
լոյ ի սառնամանիս ձմերայնոյ. ի չրջելոյն արեգական՝ որ
իջանէ մեղմով ի կողմանց հիւսիսոյ, երթալ երևեցուցանել
զընացս իւր ի կողմանս հարաւոյ: Եւ այսպէս ի փոփոխել
արեգական զընացս իւր կատարէ ժամանակս յեղանակաց:
Եւ եղիցին յաւուրս՝ որպէս և Սաղմոսն վկայեաց՝ թէ իշ-
խանական տունջեան. և ի՞ւ իւիք իցէ իշխանական տուըն-
ջեան՝ եթէ ո՛չ ընացիւքն ցուցանել ի նմա զլոյս իւր. յոր-
էջ 166 ժամ ի վեր քան զկէս ընդին առնիցէ զ‖ընացս իւր, հալա-
ծելով զխաւարն և լուսաւորելով զօդս որ կոչեցաւ տիւ:

4 ԱԲ—«ճառագայթ» ուղղեցինք «ճառագայթք»
5 Դ—կողմանցն
6 ՊԴ—«ցներքին» փխ. «մինչև ընդ ներքին»
7 Ա—երանս
9—10 Դ — «զԱրմաղան» փխ. «զՍմրղան», ՁՁ—«զՍնդ և զՍմրղան»
10 Դ—յերկոցուց
11 Ա—երկստուերսն, ՊԴ—երկըս-տուերեան
12 ԱԲ—«ամենայնի», ուղղեցինք «ամենայն ի»
13 Դ—զսերմանսն
13 ՊԴ—զմիրգսն
14 Դ—բոցաճաճանց
15 Ա—այսուհետև
19 ՁՁ—սառնամանիք
20 ՁՁ—հիւսոյ
22 ՊԴ—և կատարէ
25 ՊԴ—«թէ» փխ. «եթէ»

Եւ արդ՝ յայտ է թէ տիւ ի լուսոյ արեգականէ լինի: Իսկ գիշեր ո՛չ եթէ յումեքէ, այլ ուր ո՛չ գոյ լոյս, անդ խաւար է, և գիշեր է ստուերաբոյս որ անկանի ի տարերէ երկրիս. զի ամենայն ինչ որ կայ ընդդէմ լուսոյն, նա է [509ա] պատճառք երևելոյ խաւարի: || Որպէս ստուերք երկրի պատճառ է գիշերոյ: Եւ հաւանեցուցանէ զքեզ օրինակն, որպէս թէ հարկանիցես տաղաւար ի սաստիկ լուսաւորութեան ի մէջօրեայ ժամանակի՝ և պատիցես պնդիցես ամենևին արտաքուստ, զի մի՛ մնասցէ նմա նշոյլք լուսոյ. և հայեցեալ տե՛ս որպէս խաւար թանձրամած մթացեալ գտանի ի նմա: Եւ գիտեա՛, թէ դու ես արարող խաւարին՝ և տաղաւարն է պատճառք: Զի ամենայն վայրք որ առանց լուսոյ են, խաւար մածեալ գտանի ի նմա: Նոյնպէս և գիշեր՝ յորժամ ի ներքին կիսագունդն խոնարհեսցի արեգակն, և պակասիցէ ՚ի յօդոյս լոյս, և անկանիցի զնովաւ ստուեր տարեր երկրի. քանզի ստուերս զոր տեսանեմք ի տուէ՝ նա է խաւարն գիշերոյ ի փոփոխելոյ ճառագայթից արեգական: Զի յորժամ յարևելից երևեսցի լոյսն՝ ստուերն յարևմուտս կոյս ձգի: Եւ յորժամ ի հարաւ անցանէ էջ 167 լոյսն՝ ստուերն ի հիւսիս || կոյս փոխի: Իսկ յորժամ յարևմուտս փոխի լոյսն՝ ստուերն ուղղորդ յարևելս անկանի: Եւ ի մտանել արեգական՝ ստուեր տարեր երկրի յօդս վերանայ. և այնպէս մտանէ խաւար տիրել յաշխարհի, որ անուանեցաւ գիշեր: Դարձեալ և ի տարիս եղաւ լինել արեգակն ըստ օրինակի թուոց յունաց որ յաւանդութենէ

1 Գ—իցէ
3 ԳԴ—ստուեր աւդոյս
4 ՁՁ—երկիրս (նմ ՆՀԲ)
5 ԳԴ—ստուեր
6 ԳԴ—օրինակն
7—8 ԳԴ—լուսաւորութեան մի-ջօրեայ
9 ԳԴ—մի՛ մտցեն
10 ԳԴ—հայեա՛ և
10 ԳԴ—«մթացեալ» չիք
12 ԳԴ—պատճառ
12 ԳԴ—«ամենայն» չիք
13 ԳԴ—ի նոսա
15 ԳԴ—պակասեսցէ
15 Ա—զնուաւ
17 ԳԴ—«ի տուէ» չիք
18 Դ—«Զի» փխ. «և»
19 ԳԴ—«կոյս» չիք
20 ԳԴ—հիւսիսակողմ փոխի
21 ԳԴ—«ուղղորդ» չիք
22 ԳԴ—«տարեր» չիք
23 Գ—տիրել երկրի

Հարցն իւրեանց համարին զտարի արեգական, ի հաստատեալ կիտէն մինչև ցմիւս կէտն նշանակել. և ըստ ընթացից շարժմանն զոր ունի արեգակն, նոյնպէս առնի կատա- [509բ] րումն տարոյն իւրոյ: || Եւ արար, ասէ, աստուած լուսաւորս մեծամեծս, և զնովիմբ ածեալ՝ ասէ թէ զլուսաւորն մեծ: Միտք բանիցս այսպիսի իմն են, իբրու թէ՝ ինչ մի միանձնութեամբ մեկնակ մեծ է ըստ միանձնութեան երկնից, երկրի, և ծովու: Իսկ այլքն ևս որ կոչին մեծք, ըստ օրինակի բնութեանցն, որ գտանին առ մեզ, ոմն մեծ քան ղընկեր իւր, որպէս ղի մեծ է ձի քան զձի, և եզն քան ղեզն: Ո՛չ եթէ ըստ մեծութեանն այլ ինչ տարր էր, այլ ըստ համեմատութեան իւրոյ ընկերին ասի մեծութիւն նոցա: Արդ՝ ո՛չ այսպէս է մեծութիւն լուսաւորացդ, որպէս մեծ իցէ աստղ քան ղաստղ. այլ այնպէս իմն մեծատարած մեծութիւն ունին որ բաւական են առհասարակ լուսաւորել էջ 168 զամենայն՝ ծագեալ ծաւալեալ համասփիւռ յերկինս || յերկրի և ի ծովու. և շուրջանակի յամենայն ծագս երկրի: Եւ քանզի զամենայն բոլորակն երկնից տարածի ունի լուսաւորդ ի ծագելն և ի մտանելն իւր. և զամենայն միջավայրս վայրեացն՝ իբրու զմի ինչ ունի միանգամայն զամենայն: Վասն այսորիկ միապէս միով կերպարանօք երևի ամենայն մարդկան, որ բնակեալ են յամենայն ծագս երկրի: Եւ գիտեա՛ թէ ամենայն մեծ իրք ի հեռաստանէ փո-

1 ՊԴ—և ի հարցն
2 ՊԴ—նշանակեալ
3 ՊԴ—շարժմանցն
5 ԱԲ—«ասէ» չիք
6 ՊԴ—«իմն» չիք
7 ՊԴ—«մեկնակ» չիք
8 ՊԴ—«ևս» չիք
9 ՊԴ—բնութեան
12 Դ—«իւրոյ» չիք
12—13 ՊԴ—«նորա» փխ. «նոցա»
13 Ա—լուսաւորացդ
14 ՊԴ—«մեծ իցէ» չիք
14—15 ՊԴ—մեծատարած մեծ լուսաւորութիւն
15 ՊԴ—«առհասարակ» չիք
16 ՊԴ—«ծաւալել», ուղղեցինք «ծաւալեալ»
17 ՊԴ—և ի շրջանակի
18 ԱԲ—ամենայն
18 ՊԴ—տարածիւ
19 ՊԴ—ի ծագել
19 Դ—ի մտանել իւրում
20 Դ—«մի» փխ. «զմի»

քումք երևին, և յորժամ երթաս մօտիս, ապա ստուգես՝ թէ մեծ է և ո՛չ փոքր: Իսկ առ արեգակն չէ՛ ոք որ մօտ իցէ կամ հեռի. այլ միով հաւասարութեամբ ամենայն մասանց աշխարհիս տեսանի, և այս է օրինակ ճշմարիտ. զի որ բնակեալն իցէն անդր ի Հնդկաց աշխարհին, կամ անդր ի [510ա] Բրիտանիայ աշխարհին, միով ‖ հաւասարութեամբ տեսանեն զծագելն և զմտանելն արեգականն. զի ո՛չ յորժամ գտանէ առ արևմտեայսն նուազի ինչ ի մեծութենէ անդի առ արևելեայսն. և ո՛չ յորժամ ծագէ առ ի բնակչացն արևելեայց թերի ինչ և պակաս երևեսցի բնակչացն արևմըտեայց: Եւ ո՛չ յորժամ գայ հասանէ ի հասարակած երկնից փոխի ինչ ի կերպարանացն զոր ունէր: Արդ մի՛ խափեսցէ զքեզ սակաւ տեսիլ նորա՝ որ քան զչափ կանգնոյ միոյ երևի. և կարծիցես թէ այնչա՛փ իցէ: Քանզի մեծամեծ ինչ իրք որ ի բացեայ ի հեռաւստ‖տեսանէր, իբր փոքումք երևին. վասն զի քայքայի սակաւ տեսիլն ական ի տկար զօրութենէ լուսոյն զոր ունի. քանզի չլինի բաւական ի հեռաձիգ վայրս հասուցանել զհայեցուածսն այլ ի տեսիլն: Եւ զլոյսն իբրև զմռայլ տեսանես. և մեծ ինչ իրս որպէս զփոքունս: Զիցէ՞ արդեօք տեսեալ քո ի դըլխոյ բարձր լերանց զծով իւրով մեծանիստ լայնութեամբն, ո՞րչափ արդեօք փոքր երևեսցի քեզ մեծութիւն նորա: Եւ կամ ո՞րչափ սակաւիկ տեսանիցես զմեծութիւն նաւու որ բարձրաբերձ իցէ աղխաղխեալ ուղերձեալ զբազմաչահն վաճառս՝ հանդերձ սպիտակ առագաստաւն, որոյ խորշ առեալ զողեալ տանիցի զնաւն յարշաւանի, այլ թերևս իբրև

1—2 ՊԴ—«երևի մեծութիւն նորա» փխ. «ստուգես՝ թէ մեծ է և ոչ փոքր»
5 ՊԴ—բնակեալ են
5 ԱԲ—«անդ» փխ. «անդր»
5 ԱԲ—«անդ» փխ. «անդր»
6 Պ—«Բիւրիտոնիա», ԱԲ—«Բիւրիտանիայ» ուղղեցինք «Բրիտանիա»
13 Ա—կանկնոյ
14—15 Պ—մեծամեծք յիրաց
16 ՊԴ—«քանզի» փխ. «վասնզի»
16 Ա—քայքաի
16 ՊԴ—տեսիլ
17 ՊԴ—«ի տկարութենէ» փխ. «ի տկար զօրութենէ»
17 ՊԴ—«վասնզի» փխ. «քանզի»
18 ՊԴ—«այլայլի» փխ. «այլ ի»
19 Ա—զմառայլ
19 ՊԴ—տեսանէ
20 ՊԴ—«զփոքունս» բառից հետո կրճատված է մինչև 57-երորդ էջի 17-երորդ տողի «դարձեալ յայսմ...»
24 Ա—աւղերձեալ

զձագս աղաւնոյ տեսանիցես զնաւն: Կամ չի՞ցէ տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրաւանդակաց զդաշտ ընդարձակ և զմեծանիստ, յորում վարիցին հարկիք եղանց· զի՞արդ թուիցի քեզ հանդերձ զովողաւն փւրով որ վարէ զնոսա· այլ
[510բ] թերևս որպէս զմրջիւնս զետնա||գնացս յայլայլելոյ օդոյն ոչ քայքայեաց զտեսիլ աչացդ քոց, որ ո՛չ ետ ճշգրտիւ նշմարել զտեսիլ իրացն հեռաւորաց, քանզի չառնիր բաւական լոյս աչացդ զհեռաւորն, որպէս զմաւտաւորս ճանաչել· զի և
էջ 170 զլե||րինս բարձունս որ զատեալ լինին ի միմեանց խորաձորիւք, և յորժամ հայիցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ՝ ցածունք և միայարք երևին· և ո՛չ կարեմք նշմարել զխորաձորոցն անջրպետս· այլ և շարժունս նմանեցուցանեմք· և որպէս թէ շուրջ զմեօք երևեսցին գալ: Զի և աշտարակք չորեքկուսիք բոլորք երևին, և այնպէս թուեսցին թէ շուրջ գայցեն: Եւ մեծութիւնք եռեղակալ տարերց ի բացեայ շարժունք երևեսցին՝ և ո՛չ որպէս հաստատեալ կայ ի տեղւոջն նովին կերպարանօքն երևին ի հեռաստանէ: Դարձեալ յայսմ յօրինակէ ի միտ առ զանբաւ մեծութիւն արեգականն· տես ո՞րչափ բազմութիւն աստեղաց են յերկինս, և ընդ ամենեսեան ո՛չ են բաւական լուսաւորել զմթութիւն գիշերոյն· և արեգակն միայն միով անձամբն յորժամ երևեսցի՝ զամենայն սահմանս աշխարհի միանգամայն լուսաւորէ: Նաև մինչ չև ելեալն իսկ քաղցրահայեաց ճառագայթիւն ցրուէ մաշէ զխաւարն և հետակորոյս առնէ զաղջամուղջն, և բառնայ զտխրութիւն· և ի տարածել մեծապայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն աստեղացն, և զթանձրամած օդոց ստուերն մերկանայ յերկրէ: Եւ ընդ նմին օդ քաղցրաշունչ շնչէ յաշխարհի, և ընդ արևածայրսն լուսաւորին, արկանէ ցօղ մանրացօղ ի ժամանակս

4 ԱԲ—զովաղաւն
5 ԱԲ—մրջունս
5 Ա—յայլ այլոց
6 Ա—աջացտ
9—10 Ա—խորաձորեաւք
15 Բ—«է տեղակալ» փխ. «եռեղակալ»
16 Ա—շարժումք
17 Ա—տեղիոջն

19 ՊԴ—բազմութիւնք
21—22 ՊԴ—երևիցի
23 ԱԲ—մինչև
23—24 ՊԴ—ճառագայթիւքն
25 ՊԴ—տարածանել
27 ՊԴ—օդոյս
28 ՊԴ—«յերկրի» փխ. «յաշխարհի»

էջ 171 [511ա] || ամարայ||նոյ ընդ ամենայն երեսս երկրի: Եւ ուստի՞ կարէ լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի միովն երևելով յանկարծածին ժամու լուսաւորել, եթէ ո՛չ զի անչափ մեծութեամբն յանբաւ բարձրութենէ զա՛նչափ ճառագայթս լուսոյն արձակէ. և յայսմ ամենայնէ յայտ է թէ մեծ է արեգակն ըստ վկայութեան աստուածային գրոց, որում և արտաքնոցն բարեաց ի ճահ պատահեն վկայութիւնք: Քանզի ասեն թէ՝ է մեծութիւն լուսնոյ ըստ չափոյ երկրի. և արեգակն առաւել մեծ քան զլուսին, ըստ աստուածային գրոց. զի թէպէտ և ասաց երկոցունց մեծամեծս, սակայն ի համեմատութիւնն՝ ասէ լուսաւոր մեծ, և լուսաւոր փոքր: Եւ ի տեսութենէ իսկ կարեմք իմանալ՝ թէ մեծ է արեգակն քան զլուսինն: Զի ի պակասել լուսոյն արեգական՝ զոր խաւարեալն կոչեմք, յայտնի միջոց արեգական խաւարեալ բոլոր, և լոյսն արեգական սակաւիկ իբրև ժապաւէն երևի շուրջ զբոլոր խաւարաւն. և այն է լուսին որ կացեալ ընդդէմ արեգական արգել ի մէնջ զլոյսն: Բայց ոչ որպէս ինքն ամենևին՝ քանզի փոքր է քան զնա, և ո՛չ է բաւական զամենայն զանիւն ծածկել: Վասն այնորիկ իբր ժապաւէն երևեցաւ լոյս արեգական շուրջ զլուսնաւն: Իսկ յորժամ սակաւիկ մի իտ դնիցես յառաջէ որոշեալ լուսինն. և սկսանի մերկանալ մեծացուցանել զլոյսն արեգական: Եւ տեսանես զարեգակն կէս թերի որպէս զլուսին էջ 172 եղջերաւոր, || մինչև մեկնի ի նմանէ լուսինն: Զի լուսինն է պատճառ խաւարման արեգական, որպէս արեգակն լուսանի ի թագուցանել զճառագայթս իւր ընդ երկրաւ, որով [511բ] ծածկեալ ի ստուերէ || երկրի՝ լուսին առանց լուսոյ երևի:

1 ՊԴ—«յերկրի» բառից հետո կրճ. մինչև հետևյալ տողի «միոջն...»
4 ՊԴ—բարձրութենէն
5 Պ—արձակէր
9 ՊԴ—«մեծ» չիք
9 ՊԴ—«զնա» փխ. «զլուսին»
12 ՊԴ—«լուսաւոր» բառից հետո կրճ. մինչև հետևյալ տողի «Զի ի...»
13 ՊԴ—«քանզի» փխ. «Զի»
17 ԱԲ—ի մէջ
21 ՊԴ—«Եւ» փխ. «Իսկ»
21 ՊԴ—որոշէ
24 ՊԴ—եղջիւրաւոր
27 Պ—լուսինն

Իսկ ի սորին հակառակէ նոյն անցանէ և ընդ արեգակն,
ո՛չ միջակաւն որ անջրպետեացն, այլ յորժամ եղիցին եր-
կոքեան ի վերնում կիսագնդին. քանզի արեգակն դեր ի
վերոյ լուսնի է, և լուսին դիպեալ ի ներքոյ արեգական.
և յորժամ հասարակագոյգ լիցին՝ մինն զի իցէ ի վերոյ,
և միւսն ի ներքոյ կշիռ նմին. և արեգակն բերանաբացեալ
հոսէ հեղլով զբոլորութիւն լուսոյն՝ հանդէպ ուղիղ կշռու-
թեամբ ի միջոյ լուսնին: Ո՛չ թողու անցանել ի ներքին
անօսրութիւն օդոյն որ սփռեալ տարածանի ընդ ծով և
ընդ ցամաք: Եւ զայս տեսանելով բազումք յանուսմնութե-
նէ՝ արեգական կորուստ կարծեն: Իսկ իմաստնոցն յայտնի
է իրացն եղելութիւն, որպէս և բազում անգամ ասացաք:
Եւ է նա նախախնամութիւն աստուծոյ, ո՛չ միայն զի վա-
յելիցեմք լուսով արեգականդ, այլ զի ճանաչիցեմք զմեծ
սէր արարչին որ առ աշխարհ: Զի ահա ոմանք զարեգակն
աստուած կարծեցեալ՝ մատուցին երկրպագութիւն, իբրև
մտաւորի և բանաւորի և արարչի աստուծոյ: Եւ եթէ դոյր
նորա բարբառ, մեծաւ աղաղակու ձայն արձակէր յեր-
էջ 173 կիր ասելով. Զիս վասն քո արարեալ է՝ || և դու լի՞նձ
երկրպագանես, երկի՛ր. ո՞չ տեսանես զանդադար ասպա-
րէզս ոււնջեան ի գործառնութիւնս և ի վայելս ամենայն
կենդանեաց, տեղի տուեալ գիշերային մասամբն հանգչել
ձեզ ի բազում աշխատութեանցն, հայեցարուք և յիմ յեղա-
փոխութիւնս, զի ի ձմերայնի ցրտանամ, գարնանայնի
[512ա] ծածկիմ ընդ || թանձրախիտ ամպովք. յամարայնի ես յիս
հրկէզ լինիմ, և յիմ տևողութիւն և յերկիր օգտութիւն,
յորժամ կատարեմ զգիշերային ընթացս իմ ի ստուերէ երկ-

1 ՊԴ—նոյնն
2—3 ՊԴ—«երկոքեան» չիք
4 ՊԴ—լուսնին է
5 ՊԴ—լինին
5 ՊԴ—մինչ զի իցէ
6 Պ—բերանացեալ
8 ՊԴ—միջոց լուսնին
9 ՊԴ—օդոյս
9 ՊԴ—տարածեալ է

10 ԱԲ—«Եւ» չիք
14 Պ—ի լուսոյ
15 Պ—առ երկիրս
20 Պ—«զ՚ի անդադար» փխ. «զան-
դադար»
23 ՊԴ—աշխատութեանցդ
24 ԱՊ—գարնանի
24 Ա—ձմերանի
27 Պ—ստորև

ըխս յարևմտից յարևելս. և ի բերելն իմ ի վեր՝ զբազմութիւն ջուրց ցանեմ զաշխարհաւ՝ զոր և դուք ցօղ անուանէք: Ո՞չ ահա տեսանէք զնահանջմունս երկիցս ի տարւոջ և զուգաւորութիւնս հանգոյն նմին. նաև երբեմն պակասիմ ի լուսոյ՝ զոր կորուստ անուանէք: Եւ որչափ ընդ խանգարմամբք եմք և ընդ բազում փոփոխմամբք: Ոչ միայն չաստուած չանուանելով, այլ և ո՛չ կենդանի բանաւոր: Այլ քաջ գործ աստուծոյ որ վարիմ հրամանաւ արարչին, և արդար և ճշմարիտ խնամ աստուծոյ է ի վերայ աշխարհի, որ զմարմինս դարմանէ սննդականաւն և զոգիս առցուցանէ կատարեալ գիտութեամբ քննելով և ի վերայ հասանելով ամենայն արարածոցս, որ ո՛չ ունին յինքեանց զգոյացութիւն: Այլ յանեղէ ումեմնէ որ էած ի լինելութիւն, 174 || և բանաւորաց միայն ետ իշխանութիւն ճանաչել զարարիչն ամենայնի և փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## [512բ] || ԺԱ. ՊԱՏՃԱՌ. Շ. ԵԱԿ ԱՂԻՍԱԿԻ ԵԲՐԱՅԵՑՈՑՆ

Յորժամ կատարեսցի ՇԼԲ ամն, եթէ կացցէ կենաց աշխարհի, դարձեալ ի նոյն աւուրս դառնայ շրջագայութիւն անվրէպ ըստ նմին նահանջից կազմութեան, որպէս և էրն միշտ. և խաղայ նոյն եղանակօք. ԲԺ. ան ամսեայ. և .ԳԺ. ան ամսեայ լրմամբք և յորժամ պատահեսցի .ԲԺ. ամսեայ լրումն յառաջ քան զհասարակել տունջեան և գիշերոյ՝ եկամուտն յաւելու ամիս մի. և յայնմ ամի աղար ամիս կրկնակ առնու Կ օր լինելով, զոր կոչեն եբրայեցիքն աղար և աղար: Քանզի կատարէ արեգակն զտարին յաւուրս .ՅԿԵ. և .Գ. ժամ: Եւ լուսինն յաւուրս ՅԾԴ: Եւ յաւելու յարեգականէն յընթացս լուսնին աւուրք .ԺԱ. և ժամք Գ: Ամի ամի սոքա ժողովեալ լինին յամիսն եկամուտ, որ առնեն զաղար ամիս կրկնակ: Եւ զամս

1—2 ՋՋ—բազմութեան
4 Ա—պակասի մի
5—6 Ա—խանգար մասամբք
9—10 Պ—«երկրի» փխ. «աշխարհի»
19 Ա—աւուրսդ առնայ
23 ՋՋ—«հասարակեալ», ուղղեցինք այդպես:

Գժ–ան լուսին կոչեն: Իսկ ոմանք յեբրայեցւոց ասացին թէ
արեգակն կատարէ ղտարին ·ՅԿԵ· օր և ·Գ· ժամ: Եւ
լուսինն յաւուրս ·ՅԾԴ· և ի ժամս ·Գ·: Որպէսզի յըն-
էջ 175 թացից յարեգականն յաւելցին ա||ւուրք ԺԱ, պակաս միով
ժամաւ: Եւ վասն այսորիկ լինի աւելն ի· ԺԳ· ամին ա-
միսք նահանջք· Ե· և աւուրք· Բ· և ժամք· Ժ·: Եւ յոր-
ժամ համարիցես զ-ԺԴ, ամն վեցից ժողովին և լինին
ամք· ՁԴ: Յոր ժողովին ամիսք նահանջք· ԼԲ· աւուրցն
[513ա] և· Ժ· ժամուցն, յորժամ համարիցիս վեցից || ժողովին
աւուրք, ԺԲ· և ժամք· Կ· որ առնին աւուրք· Ե· որպէսա-
զի լինիցին ընդ ամենայն աւուրք· Ժէ: Եւ յաւելուն ի նո-
սա յամին· ՁԵ·, աւուրք ·ԺԱ: Եւ այսպէս ժողովին ի ·ԻԸ·
աւուրցն ամիս մի նահանջ, որ կոչի նահանջից նահանջ:
Նոյնպէս և արեգականն իւրն յինքեան ժողովին ժամք ·Գ·
որ արտաքոյ ·ՅԿԵ· աւուրցն են, և լինին ի ·Դ· ամին օր
մի եկամուտ· և յաւելուն յաւուրս յաւելեացն և առնեն
զնա ·Զ· զոր կոչեն զնա նահանջ արեգական, որ վազեցու-
ցանէ զ·Է· երեակն· և ի ·ԻԸ· ամին ժողովին և առնեն
աւուրք ·Է· որ դարձուցանէ զարեգակն ի նոյն կարգ ·Է·
երիկաց, զոր կոչեն եբրայեցիք չաբաթումն արեգական, և
·ԺԹ· զանձամբ եկեալ սռուզիւ ցուցանէ զաւուրս ·ՇԼԲ·
ամաց շրջագային, որպէս յեբրայեցւոց յաղխսակին կայ
տպաւորեալ:

## ԺԲ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ԲՈՒՆ ՇՐՋԱԳԱՅԴ .ՇԼԲ. ԱՄԱՑ ԿՈՉԵՄՔ

էջ 176 Բուն շրջագայ ·ՇԼԲ· ամաց վասն այնորիկ կոչեմք, զի
·Թ· և ·Ժ· երեակք նահանջեալ չաբաթանան: Եւ ·ԻԸ·
եակ, ԺԹ լից աւարտին, իբր ամսացելովք նահանջեալ չա-
բաթանան· Նահանջմանցն նահանջմունք և չաբաթմանց
չաբաթմունք: Զուգաւորութիւն թուոց և միաբանութիւն ե-
ղանակաց զանձամբ եկեալ վերստին ածէ զնոյն ժամ, և
զաւուրս՝ զամիսս՝ և զտարիս· և միանգամայն զամենայն
[513բ] չարժմունս: || Զի կէտ ամենեցուն չաբաթանալն է, և որ

1 Ա—յեբրաեցոյ
2 Ա–արեկակ
26 Ա—չաբաթան անան

շաբաթանայն, դարձյալ հարկաւորի սկիզբն առնուլ, զոր
յորջորջումն շաբաթուն յայտ առնէ: Զի ըստ եբրայական
բանից՝ շաբաթն դադարումն և հանգիստ թարգմանի: Ե՛ւ
որ հանգչին՝ դարձեալ սկսանի. քանզի ըստ .է. թուոյ
զամենայն եղեալ և օրինակեալ ծանեաք. որպէս և առաջ-
նոցն հաճոյ թուեցաւ ասել, յորոց և ես: Յորժամ արար-
չագործեաց Աստուած, յ.է. երորդ աւուր հանգեաւ: Է. և
զանմարմնոց դասս ստեղծ, զհրեշտակս, զաթոռս, զտէրու-
թիւնս, զպետութիւնս, զիշխանութիւնս, զսերոբէս, զքե-
րոբէս: Է. արար և պարունակս՝ յորում զաստեղող եդ:
Է. են և անմոլար աստեղք, որք զարփոյն միջնորդութիւն
ասին ունել: Է. և մոլորականք եղեն հակամէտք: Է. աստղ
էջ 177 է և սայլդ: Եւ յեղմունք լուսնոյն. Է. || երեկօք լինին ախ-
տակցագոյնս, առ երկրայինս նշանակելով զօդոցն փոփոխ-
մունս: Բայց աստէն իսկ տեսցուք ի մարդ եղանիլն. Է.
ամսեայքն բեղմանուրք են և ծննդականք: Եւ մանկունք
.Է. ամեայք առնլիք են ի վարժումն, զի և մտաց հասո-
ղութիւն, և փոխումն ատամանց: Եւ դարձեալ սկիզբն և
երկի[ր] ցուցեալ .Է. ամին յանգումն է աճման: Ընդ յ.Է.
և մարմին մարդոյ բաժանի, քանզի փորոտիք են .Է. ա-
խոնդանք, սիրտ, փայծաղն, լեարդ, թոքք, երիկամունք
[514ա] Բ: || Է. և են անդամք, գլուխ, պարանոց, լանջք, ձեռք,
որովայն. զկնի որովայնի համք, ոտք. և իշխանականա-
գոյն և առաջնագոյն կենդանոյն՝ դէմք: Եւ .Է. ելլի ծակո-
տեալ է .Բ. աչօք և ականջիւք զուգեալ .Բ. ռնգամբք, և
.Է. երորդաւ բերանաւ: Եւ արտադրութիւնք .Է.՝ արտա-
սուք, խլիքն, տղուկք, սերմ. և .Բ. աւելորդացն առուք:
Եւ որ բոլոր մարմնոց քիրտն է: Եւ կանանց ըստ ամսոց
ամսոց մաքրութիւնքն՝ մինչև յ.Է. օր յերկարեալ ձգտին:
Եւ յարուեստս բազում ինչ ըստ .Է. ան լինի արւոյ: Որ-
պիսի քերականութեան տառիցն՝ որք աւելի զօրութիւնս

2 Ա—հեբրայական
6—«որոց» ուղղեց. «յորոց»
9—10 ԶԶ—զսերովբէս և զքե-
րովբէ
15 Ա—յեղանիլն
16 Ա—մանգունք
17 Ա—ամայք
25 Բ—ունկամբք
26 Ա—արդադրութիւնք
28 Ա—քիտն է

ունին: ·Է· են Թուով ՚ձայնաւորք: Կամ որպէս յերաժշտա- էջ 178 կանութեան եօթնաղի քնարն քան զամենայն զոր||ծիսն լաւագոյն է: Իսկ ապա եթէ կամիցիս ևս բարձրագոյն յաղագս բանիս այսորիկ իմաստասիրել և ի հին պատմութիւնսն յեռուլև յաստուածայինիս, եթէ զարարչութիւնն և զբարերարութիւնն ·Է· աւուր սահմանեաց: Եւ եթէ զլրումութիւն չարագործացն տանջանաց, որպէս Կայենի վրէժխնդրութիւնքն ի յ·Է·, Թիւ կատարեցան: Իսկ Ղամեք[այ] ·Հ· եկին ·Է· զի սպանող եղև յետ օրինացն և դատապարտութեան: Գտանեմք և ·Է· երրորդի Նախնեացն զԵ- [514բ] նովք պատուեալ՝ փոխելովն: Եւ || Աբրահամ ·ԻԱ· նահապետ փառաւորէր, որ է յաւելուած մեծի խորհրդոյ: Քանզի երեքկին· Է·ական Թուովն զայս կատարեաց· և ի խորհուրդ զատկին՝ երկիցս ·Է· երեկաւ պահել զոչխարն: Եւ· Է· կատարել զտօն: Որպէս և խմորոյն բարձումն զոյգ ընդ նմին Թուակից լինին: Եւ ·Է· երրորդ ·Է· երրորդացն լինի պենտեկոստէ· զոր եբրայեցիքն օր սուրբ անուանեն: Եւ կամ ամիսն ·Է· երորերդ՝ յորում լինի օր քաւութեանն, և ըստ ·Է· եան խորհրդոյ տօնք: Նաև ամք ·Է· Թուէին· և ո՛չ միայն ·Է·, այլ և ·Է· որդ ·Է· երրորդ, որ է ·Ծ· երրորդ ամն Թողութեան, զոր կոչեն յոբել: Եւ արդարն Ջ· իցս ՚փրկեալ լինէր· և յ·Է· երրորդումն ո՛չ մերձենային, իսկ վիշտք և յանցաւորին ո՛չ ·Է· անգամ Թողեալ լինի մեղք, այլ էջ 179 ·Հ· ե՛կին ·Է·: Իսկ անօրէն || դրացիքն ·Է· պատիկ ի ծոցս իւրեանց ընդունէին: Եւ սրբեալ և մաքրեալ բանք տեառն ·Է· պատիկ ի հողոյ: Է· անգամ յաւուր և աստուած ասի օրհնեալ: Նաև քահանայն զ·Է· ամ կատարէր: Եւ բորոտն յ-Է· աւուր սրբեալ լինէր: Իմանամ և զ·Է· փողսն Յեսուայ: Եւ սոյնքան շրջաբերութեան ճանապարհի: Եւ այսքան աւուրս և քահանայս, որով և պարիսպքն Երիքովի դղրդեալ 515ա] կործանեցան: || Եւ ամուլն ·Է· ծնանէր՝ որ է կատարումն Թուոյն· և ընդդիմակաց անորդութեանն: Տե՛ս և զ·Է· սիւնսն յորոյ վերայ իմաստութիւն զտուն իւր հաստատէր: Եւ տաճարին նաւակատիքն զ·Է· օր կատարէր: Եւ դար-

8 Ա—Ղամէք
15 ՋՋ—կատարեալ
34 ՋՋ—նաւատակիքն

ձումն Եղիայի. Է. ական յորժամ զՄարեփթացոյ այրւոյ որդին կենդանագործեալ շնչացուցանէր: Սովին թուովքն չերտիւքն ջրացուցանէր յորժամ աստուածային հրովն ծխէր զողջակէզսն և զմարգարէսն ամօթոյ դատապարտեալ կոտորէր: Է. անգամ և պատանեկին տայր դիտել և տեսանել զամպն: Ըստ նմին օրինակի և Եղիսէ .Է. անգամ խոնարհեալ լինէր ի վերայ սոմնացւոյ մանկանն, և այնպէս զհոգի մանկանն դարձուցեալ յարուցանէր: Է. անգամ և Նէեմանայ հրամայէր մկրտիլ ի Յորդանան և մաքրիլ ի բորոտութենէն: էջ 180 Եւ արդ՝ զի՞ ասացից վասն. Է. աշտա||նակացն. և .Է. ճրագարանացն որ ի տաճարին լուցանէին: Հ. ամի և ժողովուրդն դարձեալ լինէր ի գերութենէն: Է. աչք զվէմն Զօրաբաբէլի զարդարէր: Եւ ի միւս .Հ. ամի տաճարն ներոգէր: Զի զոր ինչ և միակն ունի, սոյն և ի տասնեակն կատարի: Եւ կատարելական .Է. երրորդաւն կատարեսցի խորհուրդն: Արդ՝ զի՞նչ պիտոյ է ինձ զհեռագոյնսն յիշել. քանզի համարձակիմ ասել վասն նորա, որ [515բ] կատարեալ սրբութիւն է և սրբեցելոցն || կատարիչ, և գալ ի նոր յԱդամ յԱստուած իմ և ի տէր Յիսուս Քրիստոս ի հնոյն և որ ընդ մեղօքն էր Ադամ: Քանզի .Հ. երրորդ .Է. երրորդ համարեալ լինի ըստ Ղուկայ ազգահամարութեան: Եւ թէպէտ և բազում վկայութիւնք կան ի գիրս շաբաթու անուան և թուոց, այլ մեզ սակաւս ի բազմաց՝ բաւական լիցի ասացեալքս: Որով յայտ եղև եթէ .Է. ամք շրջի ամենայն, դադարէ և դարձեալ սկսանի:

## ԺԴ. ԶԻ՞ՆՉ (Է) ԺԱՄԱՆԱԿ՝ ԵՒ ԿԱՄ ԶԻ՞ՆՉ ՀՈԼՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՑ

Ժամանակ է անզուգաւոր ընթացք, երկհաւասար պատահ, երկանցիկ, փոփոխաչափ բերման, և հոլովն արտասանեալ յանտեսս:

1 ՁՁ—այրիոյ
7 Ա—սոմնացոց մանգանն
29 Ա—փոփոխ չափ

## ԺԴ. ԶԻ՞ՆՉ Է ՈՂՈՄՊԻԱԴՆ

Ողոմպիադ է քառամասնութիւն ժամանակագրութեան.
էջ 181 և առ հինսն կարգ էր ըմբշամարտեացն: Եւ որք || յաղթեղաց կարծէին դող իշխանութիւն: Բայց ես զճշմարիտն ասեմ արգեալ է արեգակնայիցն, և կամ ի բաց վարումն. և կամ դարձեալ սկիզբն:

## ԺԵ. ԶԻ՞ՆՉ Է ԸՆԴԻՔՏԻՈՆՆ

Ընդիքտիոն է երկակի շաբաթացեալ ժամանակաց. և նախատութիւն թիւ .ԺԵ. ամաց. որ անսայթաք զժամանակագրութիւն պահէ, ո՛չ կորուսանելով ամիսս և ո՛չ աւուրս,
[516ա] որպէս թագաւորական ամաց. և անուանի յաւիտեան:|| Եւ ուսեալ է զսա եբրայեցոց, և է յաղագս աստուածային պարգևին, որ Եզեկիայի թագաւորին Յուդայ շնորհեցաւ կենացն յաւելումն: Եւ քանզի Քրիստոս ի նմանէ ըստ մարմնաւորէ անսպառ կեանք. ապա իրաւացի և կոչեալն յաւիտեանս: Զոր և թագաւորք հոռոմայեցոց առին ի կիր՝ նշան բարւոյ վարկեալ: Որպէս և անաստուած թագաւորութիւնն պարսից զԱպողոնն սովորեցան ընդունելութեան՝ որ թարգմանի յաւելումն: Բայց զի թէ զի՞ յաշնայնւոյ ընդիքտիոնն առնու սկիզբն. գիտեա՛ զի և Եզեկիայ զերկտասարդութեամբ անցեալ՝ զաւտարդութեան էր բուռն հարեալ տիոց:

## ԺԶ. ԶԻ՞ՆՉ Է ԲԵՍԵՔԻՍՏՈՆ

Բեսեքիստոն է քառիցս շաբաթումն ժամանակաց, որ անդր յարեգակնայինն հայեցուցանէ բոլոր:

1 Ա—ողոմբիադն
5 «արգեալ» բառը նոր է և տեքստըն այստեղ անհասկանալի յէ, կարծում ենք, վոր այդ բառը պիտի ուղղել «կարգեան»: Սրանով Անանիան արեգակի քառամյա շրջանն ի նկատի ունի
15 Բ—յիրաւացի
17 Ա—բարոյ
19 Ա—թարքմանի
21 ԶԶ—զաւտարդութեան

## էջ 182 || ԺԷ. ԶԻ՞ՆՉ Է ՅՈՐԲԵԼԵԱՆՆ

Յոբելեան է ժամանակ(ակ)ան չաբաթաց (!) չաբաթումն. և նախատութիւն և օրէն եբրայեցւոց լինել ամ թողութեան: Եւ դարձեալ ողոմպիադն, և յոբելեանն, և նահանջն մի են:

## ԺԸ. ԶԻ՞ՆՉ Է ԹՈՒԱԿԱՆ

Թուական է ժամանակական շարժումն, և ամատող շարժումն. յառաջախաղաց տրամադրութիւն, յորմէ բաղկանայ տումար ի յոքունս սնունդս միակին որ ցուցանէ [516բ] սկիզբն, և առ միայնն || հայեցուցանէ աստուած. յորմէ ամենայնք սկիզբն առին լինելոյ: Եւ է սա շարժումն Թուոց ԻԸ ից և հիմն զանազան մասանց արուեստից: Իսկ հարկաւոր գիտելն զայս յաղագս Նահանջից միայն է զոր ի դիր իմն արկին սակս չարժելոյ հասարակաց տունջեան և գիշերոյ: Իսկ ի սակս վերադրաց և, է երեկաց ո՛չ էր դապիտանի:

## ԺԹ. ԶԻ՞ՆՉ Է ՆԱՀԱՆՋ

Նահանջ է որոշումն ժամանակաց ընթացիցն արգեալ կարգին, որպէս և լսի իսկ ըստ պարսկական լեզուի հատումն կրճիմն: Եւ դարձեալ կարգումն եկամուտ արեգակնային, Գ. ից ժամուցն հաւաքումն. յոր մի տունջեան հետևելով խաւարի: Դարձեալ նահանջն դադարումն ասի. էջ 183 ժողովեալ ի .Դ. ից ամացն, լեալ օր մի. և զօրն || յաւելումն ի տարին ասեն, և զժամսն ի սկզբանէ արարածոց ասեն: Բայց ո՛չ է յաւելումն ի տարին, վասն զի չէ՛ իսկ օրն .ԺԲ. ժամ: Եւ դարձեալ ո՛չ իսկ անկանի օրն յընթացս լուսնի: Եւ զի ոչ անկանի յայտ յայտմանէ է: Վասն զի ամենայն ազգաց յորումն տեղոջ զնահանջսդ ասեն անկանել յամիսն ի տարեմուտն՝ և այլք ի մէջ տարւոյն: Յայնմ

7 ԱԲ—շարուՁն
18 Ա—ընթացացն

28 Ա—Նահանջստ

ետեղ ·Բ· օր զկնի միմեանց նոյն եղանի լուսնի՝ որպէս [517ա] մերս ի Նաւասարդի։ Եւ Հոռոմայեցւոցն ի մուտն || մարտի· վասն որոյ և կէսքն որ ի յունվարի, նոյնպէս կան ի վերայ փետրվարի և ո՛չ անցանի կէսն ի մարտի· և զի ո՛չ անցանէ ի մարտի՝ յայտ ի յանցեալ լրմանցն է։ Արդ՝ տես զբոլորն ·Շ· եակ և գտանես եթէ ի նահանջի ամի ածեալ իցէ կէս ի յունվարէ ի մարտի թէ ո՛չ· և գտանես ո՛չ ածեալ։ Եւ դարձեալ զի ո՛չ են ժամանակն· Ա, ի սկըզբանէ յայտ է յաստեղաբաշխականացն, և յայլ ի բնաբանացն, ուր ո՛չ ասեն ուրեք ի դրութիւնսն զայս ժամս։ Դարձեալ և ի համարակութեանցն ազգացդ որոյ համարակաւորութիւնքն ո՛չ են շարժեալ և յայտ ի յեբրայեցւոցն է։ Վասն զի արարչութիւնն ի համարակաւորութեանն էր, և ի ·Դ· յաւելեացն է միշտ։ Եւ միշտ աստ մտանէ Նիսան ամիսն առաջին, զոր արեգ ամիս կոչեցին։ Զի թէ և յիսրայէլ ծածուկ էր || ժամանակ լինելութեան էիցն, և առաջին զօլ ամիսն յայտնեաց աստուած յասելն զսա առաջին· և զսոյն վկայեն գիրք և առաջինքն։ Արդ՝ պատարագն Աբրահամու ի ·ԺԴ· Նիսան· և ելն Ադամայ ի դրախտէն· և խաչելն Քրիստոսի· ելքն յԵգիպտոսէ· և մուտ յերկիրն։ Եւ զժամանակս զայս և զգործս ի գարնանային յեղանակին ասեն կատարելագործութիւնքն։ Ուստի յայտ է անշարժութիւն համարակաւորութեանն։ Արդ՝ որ շարժեալն || ասեն զայս զմտաւ ածցէ թէ համարակաւորութիւնդ ըստ այս շարժման զ·ՌՆԿ· անցանէ ընդ տարին· և ապա զի՞նչ կարէ զուգեալ զայսքան չափութիւն ամաց ընդ այն կարճ և երկայնութեան ժամանակացն։ Եւ միշտ է Նիսան զօլ գարունն յեղանակին· այս այսպէս է։ Դարձեալ ասեն ոմանք թէ յորժամ կատարէ արեգակն զ·ՅԿԵ· օրն· լուսինն ո՛չ լինի կատարեալ զ·ՅԾԴ· օրն· ապա յայնժամ արեգակն ·Գ· ժամաւ ընթանայ ի նոր ամէն· և լուսինն ապա լնու զիւր պարտսն։ Եւ այսպէս ասեն ամի ամի· Գ·Գ· ժամս աւելի ընթացեալ ըստ իւրում կարգին· զոր ասեն ի· Դ· րորդին զօրն բովանդակ առեալ արեգական և յառաջ վա-

11 Ա—ազգացտ
19 Ա—ՙՆիսան

33—34 Ա—Դ որդին
34 Ա—բաւանդակ

րեալ զհասարակաւորութիւնն ընդ ·Դ·Դ·, ամս: Եւ ըստ այս դիմաց չասեն զօրն զայն յաւելումն ի տարին: Բայց ի պարտսն լուսնի ըստ այնմ թէ յաւելումն արեգականէն էջ 185 ի լուսինն աւուրս · ԺԱ· ժամք || չորս: Արդ եթէ յաւելումն է սա ի լուսնի յընթացսն՝ ընդէ՞ր ոչ վարի սա միշտ ըստ յարակայքին: Դարձեալ և չէր իսկ բանդ նման, վասն զի ԱԺ·ան օրդ յաւելումն է ի լուսնէ ի տարին· քանզի ԲԺ·ան ամիսդ այսպէս է· վասն զի լուսինն· ՅԾԴ· օր կատարէ զ·ՅԿԵ օրն զարեգական զընթացսն· և կատարեցաւ [518ա] այս || այսպէս ։ Ընդ ԲԺ·ան կենդանատեսակսն ·ԲԺ·ան անցամ ի ·ՅԾԴ· օրդ անցանէ· և զ·ԺԵ· օրդ ի սուղականն իջանէ և զ·ԺԵ օրն ժամադէտն ելանէ՝ ընդ ·Զ·սն· և ապա յետ· ՅԾԴ–ից աւուրցդ զ·ԱԺ·ան օրն ընթացսն աւելի առնէ քան զայսոսիկ: Իսկ ·Գ· ժամք զի՞րդ յարին ի ·ԱԺ·անդ՝ զի նա պարտք են և ո՛չ յաւելումն· վասն որոյ և ոչ այսպէս իմանին ·ԳԺ·ան ամքն, զի ո՛չ է նորա վարել զհասարակաւորութիւնդ ի յամիսս ազգացդ ի յանցեալ ժամանակին· որպէս և ո՛չ այնց որ աւելի ասեն զոլ զժամսն· Գ· ի տարուոջն որք ·ՅԿԵ· օր և ·Գ· ժամս ասեն: Բայց է սա կարգեալ ի յԱնդրէասէ փիլիսոփայէ՝ առ ի յիշատակ ողոմպիադացն՝ առ ի խափանս և ի հրաշս տգիտաց: Իսկ տեսանելն թէ քանի է վասն յայտնութեանն և հասարակաւորութեանն և որք չարժին սովաւ աւուրք:

## Ի. ԶԻ՞ՆՋ Է ՆԱՀԱՆՋԻՑ ՆԱՀԱՆՋՆ

էջ 186 || Ի կիտէ ի կէտ նահանջ կոչի· և բոլորին բովանդակ նահանջից նահանջ:

## ԻԱ. ԶԻ՞ՆՋ Է .Թ. ԵՒ .Ժ. ԵՐԵԱԿ

Ինն և ·Ժ·երեակ է կարգ ընթացից լուսնի, զի յաւելմունքն յարեգականէ ամսացեալ չաբաթանան: Դարձեալ զի՞նչ է ·Թ· և ·Ժ·երեկութիւն որ յաւելու ի վերադիրն

1 Բ—զհասարակաւորութիւն
5—6 Ա—միշտ ընդ հարակային
9 Ա—զարեգակնս
23 Ա—սովրաւ

[518բ] յամենայն լուսին մասն մի յաւելու. և յապ||րիլի. Դ.իցն մինչև ի մարտի ի .ԻԵ.ն լինի. ԺԻ. որ կոչի օր մի ըստ մասանց լուսնին. և թիւ մի յաւելու ի վերադիրն: Եւ յապրիլի .ԺԳ.էն մինչև յապրիլի .ԺԵ.ն յամենայն լուսին մասն մի յաւելու, բայց որ ո՛չ կատարի. զի դառնայ լուսինն յապրիլի. Դ.իցն, և նոր սկիզբն առնու բոլորին: Դարձեալ զի՞նչ է .Թ. և .Ժ.երեակն: Զինն և .Ժ. մասունսն որ ամ ամի յաւելու ի լուսնէ ի .ԺԹ. ամն լինի. ՅԿԱ. մասն: Եւ զ.Լ. մասն ժամ մի արա լինի օ՛ր մի որ յաւելու ի վերադիրս ազգաց:

## ԻԲ. ԶԻ՞ՆՉ Է .ԻԸ. ԵԱԿՔ

Քսան .Ը.եակք է կարգ ընթացից արեգականն աւուրքն՝ որ .Գ. ժամուցն հաւասարին, նահանջեալ չաբաթանան:

## ԻԳ. ԶԻ՞ՆՉ Է ԲՌԸՄԱՂ

էջ 187 Բռումաղ է անուան ըստ գրոց, զոր պա||տուէն քաղդէացիքն. զմանէ ասացին Դիմոկրետէս և Ապեղիոս, թէ որպիսի ինչ աւուրս այս լինի, նոյնպէս պարտ է ակն ունել ձմերայնոյն զալոյ: Եւ է սա նոյեմբերի .ԻԳ. և կատարեալն հինգ ամք են:

## ԻԴ. ԶԻ՞ՆՉ Է ԿԱՂԱՆԴ ԵՒ ԿԱՂԱՆԴԻԿՈՍ

Կաղանդն ամսամուտ է և կաղանդիկոսն նախասկզբնակ օր տարոյն: Զորոյ պատճառ Պրոկղիոս երանելի ասաց ակն ունել տարոյն որպիսի ինչ բնութիւն աւուրն անդարեալ է յորում դիպիցին:

16 Ա—բըռ ու մաղ, բառարաններում հայտնի չէ «ըմբռնմաղ» ձևով:
16 Ա—պատուիրէ
21 Ա—կաղան
21 Ա—կաղանդիկոսն
23 Ա—զպատճառ
24 Ա—ունեալ

[519ա] || ԻԵ. ԶԻ՞ՆՉ Է ՆՈՆՈՍՆ

Նոնոսն Թէպէտ և դիաղոնախումբ է, և յամենայն ամսեան գայ, սակայն բովանդակն ·Ե· ամ կոչի. և ոմանք հինգ օր:

## ԻԶ. ԶԻ՞ՆՉ Է ԻԴՈՍՆ

Իդոսն Թէպէտ և ստարտիարտոն է, և ամբափակ ըամենայն ամսոյ պատի, սակայն կատարեալն ·Ը· ամ իմանի: Եւ ոմանք ·Ը· օր կոչեն զդա:

## ԻԷ. ԶԻ՞ՆՉ Է ՀՆԴԵԱԿՆ

Հնդեակն է ·Ե· օր աւելեացն, զոր ո՛չ ունի արեգակն, նաև ո՛չ լուսին: Զի արեգակն զտարին ·ԺԲ· ամսօք կատարէ՝ և ըստ ամի ամի յաւելու ի լուսինն: Եւ դարձեալ ·Ե· աւուրբք որ յառաջ քան զմարդոյն կազմութիւն է:

էջ 188 || ԻԸ. ԶԻ՞ՆՉ Է ՎԵՑԵԱԿ

Վեցեակ է կէսք ամսոցն զոր ո՛չ ունի լուսին, քանզի ԻԹ. և կէս օր կատարէ զամիսն, և մնացեալքն ի լուսնէն լինի տարւոյն, ԺԲ. կէս. որ առնին աւուրք. Զ. և ամի ամի հաւաքին ի լուսնէն. յոր և դարձեալ յամենայն աւուր ·Բ· մասն աւելի ընԹանայ լուսինն քան զարեգակն. որ լինի ի տարին. ՋԻ. մասն. և ժամք. ՃԽԴ. հինգմասնեան: Եւ օր ·Զ· ԻԴ. ժամեան: Վասն այսորիկ զատ ի միմեանց վարին, զի հինգ զայն կատարէ:

## ԻԹ. ԶԻ՞ՆՉ Է ՎԵՐԱԴԻՐ

Վերադիրք են արեգակնայինցն յաւելմանցն հաւաքեցեալ [519բ] ամսացելոցն արտադրուԹեանցն մնացուածք || որք անկանին

3 Ա—բաւանդակն
6 Ա—ստարտ ի արտոն
17 Ա—տարիոջն
24 Ա—արեգակնայինցն

ի վերայ լուսնի: Եւ դարձեալ ո՛չ է պարտ կորուսանել զտարեւլին քանիս լուսնին, այլ ածելովն ի սա ցուցանի քանիք լուսնին ի նորումս. և յելս տարոյն ճշգրիտ հարկաւորապէս ի նմանէ սկսանի վերադիր նոր ամենայն ազգաց: Դարձեալ զմետասան աւուրսն զոր արեգակն աւելի ընթանայ քան զլուսինն, վերադիր կոչեցին:

## Լ. ԶԻ՞ՆՉ Է .Է. ԵՐԵԱԿՆ

Եօթներեակքն ամաց չաբաթացելոց արտադրութեանցն էջ 189 մնացուածք, որք անկանին ի վերայ արեգա||կանն: Դարձեալ աւուրք չաբաթուն է .Է. երեակ. միաշաբաթ, .Բ. չաբաթ, Գ. չաբաթ, Դ. չաբաթ, Ե. չաբաթ, Զ. չաբաթ, չաբաթ: Այսքան անուանք նշանակեն զանաչխատ և զանշարժ էութիւն արարչին. վեցեակ աւուրբք չարժեալ կամքն ի գոյացուցանել զէակս և զժամանակս .Զ. աւուրբք անժամանակ հանգստեան էին. և .Է. նորոգին դադարեալ: Եւ սոյն խրողութեամբ առին զայս կոչմունս .Է. աւուրբքն: Իսկ .Զ. երրորդ օրդ որ է ուրբաթ, որ անուանի Ղերեստրոս՝ պարասկէպիկ կոչեն. և մինչև ցայս վայրի ունի աւելի խսկ տեսութիւն. վասն որոյ և օտար է անունդ ի կարգէ .Զ. աւուրցդ: Արդ՝ կոչի պարասկեպիկդ ի մեզ թարգմանելով աւելորդ անդանճառումն՝ որ է սակս ստեղծման [520ա] մարդոյն: Վասն զի է սքանչելի կենդանի միջոց || և տեղի և ունող մեծութեան և խոնարհութեան, վասն որոյ և առաւել ընդաճումն կամացն ամենեցուն է սա՝ յայսմ աւուր կատարեցաւ որ է մարդ:

## ԼԱ. ԶԻ՞ՆՉ Է ՄԻՋՈՑՆ

Միջոց կոչի հաստարակաւորութիւն տունջեան և գիշերոյ առկայումն արեգական .Ե. աւուրբք անշարժ զմիով տեղօք բերեալ. և ապա ատխճանեալ՝ լեալ սկիզբն դար-

8 Ա—արտադրութեանց
9 Ա—անգանին
10 Ա—միաշաբաթու
18 հուն. παρασχευη «ուրբաթ կամ պատրաստութիւն»
18 Ա—պարասպէկիպիկ
20—21 Ա—թարքմանելով

էջ 190 նայնոյ․ որ ի տումարի ‖ հասարակաւորութիւնդ կոչի․ ո՛չ համարելով գյառաջանցեալ ․Ե․ օրն, քանզի անդ աւարտեցաւ։

ԼԲ. ԶԻ՞ՆՉ Է ԼՐՈՒՄՆ ԶԱՏԿԻ

Լրումն զատկի է տարեկան պարադային լուսնի, նախակարգումն և ամացուցակ։

ԼԳ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ .Ե. ԹԻՒ ԺԱՄ ԿԱՏԱՐԵՄՔ

Զհինգ թիւ ժամ յաղագս այնր կատարեմք՝ զի երկոտասանապատկեալ ․Կ․ կատարէ թիւ՝ որ լինի օր մի տունջեան հետևելով խաւարի․ զի ուր տիւն անցանէ՝ գիշերն առընթեր գտանի։

ԼԴ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ Գ.Կ. ԹԻՒՆ ՕՐ ԿԱՏԱՐԵՄՔ

Զ․Կ․ թիւն վասն այնր օր անգարեմք, զի կէսք աւուրցն մնացելոց լուսնոյ ընդ Բ․ ամիսս կատարէ օր մի։ Եւ կէսքն ո՛չ եթէ յամսեանն ի միոյ յօրէ յամենայն ազգաց կէս ինչ հատանի․ այլ յորժամ ․Բ․ մասունս յամենայն աւուր թողու լուսինն․ Ա․ ի տունջե‖նէ և մի ի գիշերոյ։ Որպէսզի ի լինել ․Բ․ ամսոցն մնացելոց մասունքն տունջենայինք․ Կ․ զոր հինգ բաժանեալ ․ԺԲ–իւք կատարէ տիւ հետևելով խաւարի։

[520բ]

ԼԵ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ .Դ. ԿՐԿՆԵՄՔ ԶՔԱՆԻՍ ԼՈՒՍՆԻՆ՝ ՅՈՐԺԱՄ ԳԻՇԵՐԻ ԶՈՐՉԱՓ ԳՆԱԼՆ ԿԱՄԻՑԻՄՔ ԳԻՏԵԼ

էջ 191 ‖Վասն ա՛յնր չորեքկրկնեմք՝ զի ․ԺԵ․ օրեայն կատարէ գ․Կ․ թիւն, զոր լինին ժամք․ ԺԲ․ զոր լիութեամբ լուսոյն ընթանայ յերեկօրեա մինչև յառաւօտն։

15 Ա—«ազգակէս» փխ. «ազգաց կէս»
16 Ա—մանուՆս
18 Ա—«ի» չիք
18 Ա—Բ–ուց
24 ԶԶ—զոր, պիտի լինի որ

## ԼԶ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ .ԲԺ. ԱՆԱՊԱՏԿԵՄՔ ՅՈՐԺԱՄ Ի ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՍՆ ԶՅՈՐՈՒՄՍ ԿԱՄԻՑԻՄՔ ԳԻՏԵԼ

*Երկոտասանապատիկ յաղագս այնր՝ զի .ԺԵ.օրեայ կատարէ թիւս .ՃԶ. զոր բաժանեալ .Լ.իւք ցուցանէ զ.Զ. կենդանատեսակաւ հեռաւորութիւն յարեգականէ, որով լրումն լինի՝ զի ա՛յլ ազգ անհնար է լինել:*

## ԼԷ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ ԶԵԿԱՄՈՒՏՆ Ի ՆԱԶԱՆՁԷՆ ՅԱՒԵԼԻՍՆ ԱՍԵՆ ԵԲՐԱՅԵՑԻՈՑ ԵՒ ԱՅԼՈՑ ՈՐ *(մի բառ բաց է թողած)* ԻՒՔ ՎԱՐԵԱԼ ԱՄԻՍՆ ԱՒՈՒՐԲՔ ԵՒ Ո՛Չ ՊԱՏՃԱՌԻ

*Աւրն եկամուտ ո՛չ եթէ յաւելլիսն յարդարի, այլ .Ի.
աւուրբք յառաջ քան զհասարակաւո՛րութիւնն: Բայց յաւե-
[521ա]լլիսն վասն այնր կոչեմք, զի թէպէտ || և եկամուտ ի յա-
միս՝ այլ իբր անցանէ ամսովն անդրէն ի բաց վերանայ
և ի վերայ .Է. երեկլին անկանի յաւելլով զնա. և զամիսն
ի նոյն պահելով կարգ՝ վասն այնր յաւելլիսն կոչեմք յար-
դարեալ զեկամուտն: Են և այլ բազումք որ այլ անուն կո-
էջ 192 չեն և այլ ազգ յօրինեն, որպէս որ|| բազմապատիկդ առ-
նեմք: Եւ է այդ ամացն անցելոցն .ԱԺ. անեակքն, որք ըստ
ամի ամի յարեգակնէ հաւաքին ի լուսին. և այլք նոյնա-
նմանք, որպէս որ հանապազորդս երթամք և կամ բերեմք
ինչ ի վերայ, կամ երթամք զամսականսն, կամ զպարագա-
յին, կամ զ.Դ.եք հանդստին, կամ այլ ինչ յայսպիսեացս.
որք ըստ մտաց տեղոյն կերպարանին. հեշտարարք են և
դիւրագիտելիք. ըստ իւրաքանչիւր ազգաց:*

## ԼԸ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ .ԺԲ. ԱՄԻՍ Է ՏԱՐԻՆ

*Այս ըստ աշխարհի մասանց, և ըստ կենդանակերպացն, և ըստ ժամուց տունջեան և գիշերոյ. և ըստ յոդնախորհրդոյ: Վասն զի մեծախորհուրդ իմն է երկոտասան թիւդ:*

5 Ա—հեռաւութիւն
8 Ա—եբրաեցոց
13 Ա—զամսվն
15—16 Ա—յարադրել

սինն՝ զի ի լրման նորա կամաւոր չարչարանքն։ Նաև զա-
լոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրո-
[522ա] ղութիւնս ըստ ընթացից իւրեանց։ || Այլ զի մի՛ անմուխ և
էջ 194 ան||հաւասար իցեն աստեղացն, վասն ումկացն տկարաց
չատացան ·Բ· լուսաւորացն պատահմամբ ընթացից սահ-
մանեալ զժամանակաւորն, գիտել զտիեզերականն անսխա-
լապէս։ Դարձեալ տոմարն առի ժողովլ, վասն հասանելոյ
աստեղաբաշխութեան, կամ վասն զտիեզերս ժողովելոյ
յայս խմբաւորութիւնս· կամ վասն երկուց լուսաւորացդ
սակս ի միասին դրման, վասն որոյ ի Քրիստոս ժողովե-
լոյս։ Դարձեալ տոմար արեգական և լուսնոյ ընթացք։
Եւ զի՞նչ է սկիզբն տումարի, կամ ո՞վ դոլով աղբիւր
չարժման· երեք ժամքն։ Եւ ուստի՞ է այս յայտ, յարչա-
ւանս միաւորեալ ընթացիւք սահմանեալ արեգական և լուս-
նին։ Արեգակն կատարէ բոլոր մի ·ՅԿԵ· օր։ Եւ լուսինն
·ՅԾԴ· օր· և ի պարփակութիւն իւրեանց յոր մտիցն ի
նիսան առեալ ընթացիցն ·Գ· ժամս· ապա աստանօր հա-
սեալ ի կէտ չրջանի իւրոյ ելից զկէտ սահմանադրութեան
չափոյ։ Դարձեալ ի նպերտս ընթացից իւրոց ընդ ոլորտ
մտեալ և հասեալ ի նոյն եռապատում, և պակաս դտեալ
ըստ նախադծի ժամանակին· և ըստ նմին կրկնակ առեալ
·Գ· Ձ· ժամեաց զինքն։ Այսպէս յեռն և ի քառն զբովան-
[522բ] դակ զօրն, երկոտասան ժամեացն ստորա||նստեալ նահանջ,
էջ 195 ընդհանրական յաւիտենիս։ Եւ ըստ այսմ չարադրեալ || յա-
ռաջակարդ խաղացմամբ արեգականն և ո՛չ վերածնեալ և
ո՛չ դարձեալ պակասեալ։

### ԽԲ. ԶԻ՞ՆՁ Է ԱՄԻՍՆ

Տեսնելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ, իմա-
ցան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին թէ՝ «է
մեզ պատկեր»։ Եւ դարձեալ զի՞նչ են ամիսք և կամ ո՞վ

2—3 Ա—իրողութիւն
17 Ա—յնթացիցն
22 Ա—եռն
22—23 Ա—բաւանդակ
29 Ա—«և» չիք
29 Ա—ասեն
30 Ա—ի մէս փխ. է մեզ

## ԼԹ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ .ՅԿԷ. ՕՐ Է

Տարին վասն մարդոյն կազմութեան ·ՅԿ· յօդուածոց և ·Ե· զգայութեանց· ԲԺ·ան անդամոց։ Այսորիկ զբնութիւն արարչին ուսուցանեն մեզ ըստ այսչափ իմացման· ԽԹ· չաբաթդ որ են ·Է·ից Է· զանխառնութեան և զատութիւն արարչին յարարածս ազդեն: Վասն զի ·Է· թիւդ կոյս է և ամուլ, սակս անծնելութեանդ· և այս է անծնելութիւն
[521բ] դորա, || զի ո՛չ ունի Ը կամ ·Գ· կամ ·Բ· և ո՛չ ինքն է կատարելոցն թիւ: Այսպէս և արարչական էութիւն ո՛չ է
էջ 193 հա||տած տարերօք· և ո՛չ ի նմանէ մասն ինչ հատեալ կամ աղգակիցք են միմեանց՝ վասն որոյ ո՛չ կարէ իմանալ զնա գայս որք աստս՝ և ո՛չ միտս, և ո՛չ լոյս, և ո՛չ որք ի կարգիս: Վասն այսորիկ յամենայն կողմանց ·Է· անկիւն է ·Է·եակն և անհատ: Իսկ ·Գ· Է·եակն նշանակեն ·Գ· անձնեան գոլ զարարչական էութիւն համարունս և համազօրս գոլ ըստ գոյդ ·Է·եկացն, ուր ոչ է երիցութիւն և կրտսերութիւն: Իսկ մին օրն նշանակէ զմի իշխանութիւնն և զանքակութիւն կամացն էից երիցն:

## Խ. ԶԻ՞ՆՉ Է ՏԱՐԻՆ ԵՒ ԱՄՆ

Տեսանելով զարեգակն շրջանէ ի շրջան հասեալ՝ իմացաւ զպակասումն աւուրցն, և անէ տարաւ: Իսկ ամն ըստ ամսոցն է եղեալ անուն:

## ԽԱ. ԶԻ՞ՆՉ Է ՏՈՒՄԱՐ

Տումարն ժողով թարգմանի· և դարձեալ սկիզբն աստեղաբաշխութեան: Եւ զ·Բ·ուց լուսաւորաց զհանգամանս ընթացիցն: Զարեգակն վասն հաստաբակաւորութեան: Զի յետ այսորիկ չարչարանքն փրկչին և յարութիւնն: Իսկ զլու—

6 Ա—թիւտ.
8 Ա—«Զ» փխ. «Ը»
12 Ա—«աստս» նոր բառ է. հավանական է և «ազդ»
15 Ա—էութիւնն
16—17 ԱԲ—կրսերութիւն
24 ԱԲ—թարքմանի
26 Ա—հաստաբակաւորութեանն

եղ զանուանս նոցա: Անուանք ամսոցն ո՛չ էին յիսկզբանէ: Այլ՝ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս, զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք. և ամսոց անուանք ոչ դոյր, բայց միայն զառաջինն լուսինն զգարնան առաջին լուսին անուանէին, և զկնի՝ Բ երրորդ լուսին, և .Գ. երրորդ, և .Դ. երրորդ, մինչև ց.ԲԺ. ան երորդն և զողջոյն ամն՝ այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանային: Եւ դարձեալ յառաջինն դառնային: Իսկ անուանք ամսոց եբրայեցւոցն ի Մովսիսէ անուանեցան՝ որ և կարգեաց զյրումն զատկաց նոցա, որ օր էր ելից նոցա յԵգիպտոսէ, և զամենայն տօնս նոցա նա կարգեաց: Իսկ վասն այլոց ազգացդ ամսոց՝ յայտնի ուրեք ո՛չ գտաք, թէ յո՞ւմէ օրինադրեցան, յիմաստասիրա՞ց՝ թէ ի Թագաւորաց:

Զի բազում ամիսք այն են՝ զոր Թագաւորք յիւրեանց ա-
էջ 196 նունն || անուանեցին: Առաջին կայսրն Հռոմայ Գայիոս, որ
[523ա] կոչե||ցաւ Յուլիոս, սա ի Թագաւորելն իւրում զԿուինտիլիոս ամիս յուլիս անուանեաց ի վերայ անուան իւրոյ, և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և Օգոստոս երկրորդ կայսրն զսեքստիլիոս ամիս յօգոստոս անուանեաց յիւր անունն, և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և այլ ամիսքդ անուանեցան՝ յումէ և իցէ. զոր աւելորդ համարիմ կարգաւ ասել: Բայց զամիսքդ Հայոց ասացից, զի Հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել Թուականին Հայոց էին: Եւ ո՛չ քան զա՛յն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն բանին Աստուծոյ՝ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ. և այս է պատճառն: Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յաբեթի որդւոյ Նոյի, եկեալ ի Բաբիլոնէ՝ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի Հայս. և յանուն նորա կոչեցան Հայք. նոյնպէս որդւոց և դստերաց իւրոց եդ անուանս. զոր առեալ Հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորա եդին ի վերայ ամսոցդ՝ վասն

6 ԱԲ—զողջուն
9 Ա—եբրաեցոցն
16—17 ԱԲ—զկնի տիլոս ամսոյ, ուղղեցինք զԿուինտիլիոս ամիս quintilius
19 ԱԲ—երրորդ
19 ԱԲ—զՀեկիտոոս, ուղղեցինք զՍեքստիլիոս sextilius
22 Ա—զամիսք
26 Ա—այտոքիք
27 Ա—որդոյ
31 Ա—ամսոցս

մեծարանաց հօրն և զաւակացն․ և են այսոքիկ։ Նաւասարդի․ Հոռի․ Սահմի․ և Մահեկի․ Արեգ․ և Մարերի, էջ 197 դստերք էին Հայկին։ Տրէ․ Քաղոց․ Արաց․ և || Հրոտից, որդիք էին Հայկին։ Իսկ մարգաց և հարաւանց, զոր այժմ անհկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքա։

[523բ] || ԽԳ․ ՉԻ՞ՆՉ Է ԿՐԿՆԱԿ ԱՄՍՈՅՆ

Այն զի ասէ Նաւասարդի՝ կրկնակ չկայ․ և այս է պատճառն։ Վասն զի ամիսն ․Լ․ օր է, և շաբաթն ․Է․ օր․ և յորժամ ամիսն ․Է․օրեայ բաժանես, լինի ․Դ․ շաբաթ․ և մնայ ․Բ․ օր․ զոր կրկնակ կոչեմք հոռոյ զերկրորդ աւուրն․ նոյնպէս և զայլսն իմասցիս, զի երթայ ըստ կարգի և լինի շաբաթ և ապա ի մինն դառնայ։

ԽԴ․ ՉԻ՞ՆՉ Է ԿԻՍԱԿ

Յաւելուածք ի լուսնէ՝ զոր ի տարւոջն ժողովէ ․ԺԲ․ կէս, և լինի ․Զ․ օր որ կոչի վեցեակ։

ԽԵ․ ՉԻ՞ՆՉ Է ՇՐՋԱՆՆ

Շրջանն ․ՇԼԲ․ ամ է ըստ արեգական։ Եւ ըստ լուսնոյ ․ՇՀ․ ամ է։ Զի ի ․ԻԸ․ ամն արեգակն դառնայ․ և ի ․ԺԹ․ լուսինն և մինչև ․ՇԼԲ․ ամն հասանեն միմեանց՝ և ի միում ամի դառնան և նոր սկիզբն լինի տումարի, այն է որ կոչի Թուական։ Վասն զի արեգակն ի ․ԻԸ․ ամն զնահանջքն, է․ օր առնէ շաբաթացուցանէ և դարձեալ սկիզբն էջ 198 առնէ և կրկնէ ․ԺԹ․ անգամ ըստ || Թուոյ խորանաց բոլորի լուսնին․ և ի ․ՇԼԲ․ ամն ապա հասանեն միմեանց և ի միում ամի դառնան յիւրաքանչիւր բոլորակն իւրեանց՝

11 ԱԲ—«հոռոյ»—հոռի ամսանվան սեռականն եւ Մատենագրութեան մեջ հոռի բառը հոլովում չունի։

15 Ա—տարուջն

20 Ա—հասանէն...

21 Ա—տոմարի

այն է որ կոչի չրջան: Իսկ լուսինն ի ·ԺԹ· ամին զկիսակս իւր ·Է· լուսին առնէ չաբաթացուցանէ և դարձեալ սկիզբն առնէ բոլորին· ԻԸ· անգամ ըստ թուոյ խորանաց արեգականն բոլորակի, և զ·ԹԺ· երեկի թիւն ի ·ԻԸ· օր առնէ: [524ա] Դարձեալ արփիադեղքն չարադրեալ միական ընթացիւք || երթեալ ընդ չափողի՝ դիչերի պարառութեան ·ԻԸ· ԹԺ· երեկլին և իւր փոքուն աստանօր վճարեալ զպարտուցն խմոր; Դարձեալ դըլի ի կարդ ամացն և վերադրացն, և եօթներեկացն, ըստ ի սկզբանէ յընթացսն չափեալ:

**ԽԶ.** ՁԻ՞ՆՁ Է ՈՐ ԵՐԹԱՄՔ .ԻԸ. .ԻԸ. ՅՈՐԺԱՄ .Է. ԵՐԵԱԿ ԱՌՆԵՄՔ

Վասն զի արեգակն ի ·ԻԸ· ամին դառնայ· և ո՞վ է որ դարձուցանէ զնա ·Գ· ժամքն որ յարեգականէն, և ի ·Դ· րորդ ամին լինի օր մի որ կոչի Նահանջ և ի ·ԻԸ· ամին լինի ·Է· աւր որ օր է չաբաթ մի և կոչի Նահանջից Նահանջ: Եւ դարձեալ յառաջինն դառնայ և կոչի դարձ արեգականն: Զի ·Է· երեկաց խորանն յառաջինն խորանն դառնայ, այս ըստ Հռոմայեցւոց տոմարին և ոչ ըստ Հայոց:

էջ 199 || **ԽԷ.** ՁԻ՞ՆՁ Է ԳՆԱԼ .ԻԸ. .ԻԸ.Ն. ԵՒ Ձ.Դ. ՄԱՍՆ Ի ՎԵՐԱՅ ԲԵՐԵԼ

Վասն զի Նահանջեալ եօթներեակն չէ չաբաթացեալ· և ·Գ· ժամքն որ ի ·Դ· ամին լինի օր մի զոր կրկնէ զ·Է· երեակսն:

**ԽԸ.** ՁԻ՞ՆՁ Է՝ ՈՐ ԵՐԹԱՄՔ .ԺԹ.ԺԹ. ՅՈՐԺԱՄ ՎԵՐԱԴԻՐ ԱՌՆԵՄՔ ՀՌՈՄԻ

Զի լուսինն ·ԺԹ· ամին դառնայ, և ո՞վ է որ դարձուցանէ զնա ·Է· ամիսքն որ Նահանջեալ չաբաթանան· վասն զի վերադրի լուսինն ·ԺԱ· աւուրքն մնացեալ՝ յարեգականէն ժողովին ·ԺԹ· ամն և լինի ·Է· ամիս պակաս օր մի, սկսեալ յապրիլի ·ԺԳ–ից որ է գլուխ բոլորի || [524բ] ապրիլ–

12—13 Ա—չորրորդ
17 Ա—հռոմայեցոց

22 Ա—Հռոմ
27 Ա—Բոլի

լեացն մինչև ի կատարումն բոլորի որ է մարտի ·ԻԵ· իսկ
ղպակասեալ օրն յ·Է· ամսոյն լնու աւելի օրն որ ասէ թէ՝
ԺԹ· երկին, ԺԲ· ած· արդ՝ օրն այն ի ներքս անկանելով
·Է· ամիսս կատարեալ առնէ, և դարձումն լուսնի այն կո-
չի: Զի լրմունք զատկին ի նոյն ամիս դառնան և ի նոյն-
քանիս: Բայց և զայս և՛ս դիտել արժան է՝ զի մնացեալ
մասունքն որ յամենայն ·ԺԹ· ամի մնացեալ լինի ըստ Հա-
յոց վերադրացն և ոչ ըստ Հռոմայեցւոց որ ժողովլի ի ·ԺԹ·
էջ 200 ամն և լինի ·Լ·եամասնեայ ժամ ·ԺԲ· որ է ըստ || լուս-
նին օր կատարեալ· և առնէ զվերադիրն ·ԺԲ·: Իսկ մասն
այն սկսեալ յԱդամայ մինչև յ·Է· երրորդ դարն ց·ՊԽ·
ամն ժողովլի և լինի ·ՅԿ ·Լ նեամասնեայ՝ ժամք· ԲԺ·ան
որ է ըստ լուսնին օր կատարեալ· և յայնմ ամի վերադիրն
·ԺԳ· լինի, այն է որ կոչի ·Թ· և ·Ժ· երեկի՝ ինն և տաս-
ներեակ: Եւ այս է զոր ասացին ոմանք յիմաստնոցն կա-
տարումն լուսնի: Դարձեալ ասեն թէ՝ յորժամ օրն այն ի
ներքս անկանի՝ վերջի լրումն է լուսնին, զի այլ ո՛չ մաչի
և ո՛չ աճէ, այլ միշտ մնայ կատարեալ՝ որպէս և ստեղ-
ծաւ յԱստուծոյ: Ո՛չ փոխի ըստ ժամանակաց, այլ միշտ
525ա յերեկօրեայ ելանէ որպէս և էրն յառաջագոյն մինչև || ի
լրումն ժամանակաց:

## ԽԹ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ Ի .Ժ. ԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԻՆ ԹԻԻ ՄԻ ՅԱԻԵԼՈՒ

Ինն և տասն մասունսն որ ի ·ԺԹ· ամին· ՅԿԱ· լինի,
և այն է օրն զոր ·ԹԺ· երեակ կոչեմք:

## Ծ. ԶԻ՞ՆՉ Է ԲԱԶՄԱՊԱՏԿԵԱԼՆ ՅԱԻԵԼՈՒ

.Յաղագս ժողովելոյ զմետասան աւելիսն ի թերատ ինն
և տասներեկին: Իսկ վասն վերադրին՝ թէ ընդէ՞ր բազմա-
պատիկ առնեմք՝ պատճառն այս է: Զի ամենայն ամի

2 Ա—պասեալ
8 Ա—Հռոմայեցոց
13 Բ—յայսմ
15—16 Ա—«կատարումն» գրված և լուսանցքում
17 Ա—անգանի
22 Ա—աւելուլ
25—ՁԶ աւելուլ

.ԹԺ. Երեկացն. զի ի Նահանջից Նահանջին պակասեցուցանէ օր մի. և ըստ .ԹԺ. Երեկացն յաւելու և վերադիրն անսխալ մնայ:

## ԾԳ. ԶԻ՞ՆՉ Է .Ը. ՀԱՆԱՊԱԶՈՐԴ՝ ԵՐԹՆ

Յառաջին Թուականին ո՛չ Նահանջ և ո՛չ .ԹԺ. Երեակ: Զմինն .ԺԱ. բազմապատկեալ՝ և .Ը. երթեալ մնայ .Գ.: Եւ դարձեալ հանապազորդս որ է .Ը. սա վասն զվերադիրն պակասեցուցանելոյ է: Քանզի .ՄԽ.ամ ընդ .Բ. ամիս անցանէ հասարակածն: Եւ կէսքն բազում անգամ գան ի [526ա] լրումն զատկին, որ յառաջ տան կար||ծել մեզ զլրումն լուսնի, զոր սա՛ ըստ. ՄԽ. ամ .Ի. Նահանջէ պակասելով ի յարակայէն. և է այսպէս: Յորժամ հասարակածն ի մարգաց ելանէ՝ երթ զգա .Թ. զ.ՄԽ. ամ. և լի՛ց զվերադիրն .ԼԹ. օր. զի թէ ո՛չ այսպէս առնես՝ զուգել Թուին ընդ հռոմայեցւոցն: Բայց ըստ մերումս ի մաշման լինի լուսինն: Իսկ յորժամ հասարակածն ի Նաւասարդի և ի հոռի լինի. դարձեալ երթ. Ը. և լի՛ց. ԽԴ: Ըստ այսմ օրինակի ընդ .Բ.Բ. ամիսս անցանելով հասարակածիդ փ լրումն տե-[էջ 203]սանելոյ .Ա.Ա. թիւ պակասեցո և է || այսպէս: Նաւասարդի և հոռի .ԽԴ. և հանապազորդն .Ը.: Սահմի և տրէ .ԽԳ. և հանապազորդն .Է.: Քաղոց և արաց .ԽԲ. և հանապազորդն. Զ: Մեհեկի և արեգի .ԽԱ. և հանապազորդն Ե: Ահկի և մարերի .Խ. և հանապազորդն .Ը.: Մարգաց և հրոտից .ԼԹ. և հանապազորդն .Թ.: Եւ սոյն աւելեացն: Արդ մին պատճառ Նկրգործութիւն այս է սորա: Իսկ երկրորդն վասն զի արտաքոյ սահմանի այլոց ազգացն էր այս իմացումն դիտելոյ վերադրիս. կամի զամենայն տարի յոլովից առնել. արդ՝ երթայ զերկուսն առ Նահանջն ի .Ժ. [526բ] Թուականէն: Եւ զութն ևս անպատ||ճառ. և այսպէս մաշէ զ.Ժ. Թուականն: Եւ մնան անդ .ԱԺ.անք ժողովեալք: Իսկ հանապազորդն միշտ ասի ութ:

7 Ա—սայ
9 Ա—կէսքտ
13 Ա—զդայ
15 Ա—հռոմաեցոցն
18 Ա—հասարակացիտ
22 Ա—Մեհեկ և արեգ
27 ՁՁ—օտարի
30 ՁՁ—Յնայ

·ԺԱ· աւուրբ յառաջ կատարէ լուսինն զընթացս իւր քան զարեգակն: Յաւուր ·Դ· շաբաթի ստեղծաւ արեգակն ընդ առաւօտն· և լուսինն ընդ երեկս, և ի ստեղծման լուսնին· էջ 201 ԺԱ· մասն պակաս էր յընթացից || արեգականն, և այն է որ յամսին լինի ժամս ·ԺԱ· և ի տարին յաւուրս ·ԺԱ· և կոչի վերադիր լուսնի:

## ԾԱ. ԶԻ՞ՆՉ Է ԸՍՏ ՆԱՀԱՆՋԻՑՆ ՊԱԿԱՍԵՑՈ՛

Այս՝ առ վերադրին պակասեցուցանելոյ՝ վասն տէրունական լրմանն· զի նահանջն զհաստարակածն յառաջ փոխէ որ ըստ արեգականն ի ·Դ· ամին ժողովեալ թիւ կատարեալ լինի: Եւ թէ վերադիրն մեր ո՛չ պակասէ միով թուով, ի նահանջի ամն լրումն մեր ո՛չ ղուգի ընդ այլոց լրմանցն· այլ միով աւուրբ յառաջ հանդիպի: Եւ ի նահանջից նահանջի ամի թիւ մի՝ ի վերադրաց հայոցն պակասեցուցանէ օրն աւելի որ ի փետրուվար անկանի:

## [525բ] || ԾԲ. ԶԻ՞ՆՉ Է ԸՍՏ .ԹԺ. ԵՐԵԿԱՑ ՅԱՒԵԼ

Զյաւելեալսն յինն և ·Ժ· երեկի ամի ի վերայ ածելով հաւասարէ զպակասումն նահանջիցն: Դարձեալ յինն և ·Ժ· երեկի ամին օր մի յաւելու ի վերադիրն, այն է որ ասէ թէ՝ յ·ԹԺ· երեկի ամին· ԺԲ· ած: Եւ պատճառն այս է՝ զի յապրիլի ·ԺԳ·ից որ է սկիզբն բոլորին մինչև ի կատարումն բոլորին որ է մարտի ·ԻԵ· յամենայն ամի մնացեալ լինին մասունք ·ԺԹ· ի վերադրացն· և ժողովին մասունքս այս ի ԺԹ· ամին՝ և լինին մասունք ·ՅԿ· որ լինի ·Լ·նեամասնեայ, ԲԺ·ան ժամք· և մնայ մասն մի: Իսկ էջ 202 || ժամքն ·ԲԺ·ան կատարեալ օր մի ըստ լուսնին աւուրց այն է որ ասէ՝ յինն և ·Ժ· երեկին ·ԺԲ· ա՛ծ: Եւ վասն այնորիկ յորժամ վերադիր առնեմք, յաւելուլ պիտի ըստ

7 ՁՁ—պակասեցոյ
12 Ա—«ըստ» փխ. «ընդ»
14 Բ—«վարդապետաց» փխ. «վերադրաց»
15 Ա—անգանի
18 Բ—հաւասար է
19 Ա—ամի օր
26 Ա—«ԲԼԺ» փխ. «ԲԺ»

ըստ մարմնաւորութեան և ի սոցանէ ըստ քաղցրութեանն։ Դարձեալ և ըստ ·ԻԴ·ից ախտարաց հիւսիսականաց և հարաւականաց, որք ·ԲԺ·ան ընդ աջմէ և ·ԲԺ·ան ընդ ահեկէ ունին զնիստս։ Ըստ այսց խորհրդոց, և օրն ասի ·ԻԴ· ժամեան· առ ի ծանուցումն մեզ զէ՞ն։ Զի մի օր է աշխարհի, յոր մարդ երկասիրէ ի ·ԻԴ· տեսակս արուեստից։

## ԾԷ· ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ԺԱՄՆ .Լ. ՄԱՍՆ Է

[527բ] Այս ըստ այսմ բաղդատութեան է, զի որպէս · Լ · աւուրքն զամիսն կատարեն, զորս մարդն առաջին ամս կոչէ · սոյնպէս և սա՛ ժամանակ գոլով ·Լ· մասամբ կատարի։ Ունի և այլ տեսումն· Ժ· թիւդ կատարելութեան նշան է։ Իսկ արդ՝ Գ· տասնեակդ կատարեալք ի մի խորհրդութիւն նշանակեն զ·Գ· անձնեան և զմի իշխանութիւնն։

## ԾԸ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ԹԱԻԱԼՄԱՄԲ ԳՆԱՅ ԱՐԵԳԱԿՆ

Զայս վասն իմաստուն առնելոյ զմարդն՝ օրինադրէ Աստուած։ Եւ այս է իմաստութիւնն՝ որ թաւալմամբ նորա ուսանիմք զհանդամանս տարբերութեան տունջեան և գիշերոյ։ Եւ դարձեալ որպէս հայր և սիրող գոլով բոլոր աճելականացս, և ինքն թաւալի անհաստատաբար ի մտանելն էջ 206 և ի յելանելն։ Այսու || ուսուցանէ և զբոլոր եղականքս անհաստատ և անցաւոր գոլով, ըստ Սողոմոնեան բանին՝ եթէ ամենայն ինչ որպէս անիւ շրջէ և գնայ։

## ԾԹ. Ո՞ՐՊԷՍ ԳԻՏԱՑԻՆ ԹԷ ԹԱԻԱԼԻ ԱՐԵԳԱԿՆ

Զվայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուցս՝ զոր վկայեն բաղումք· վասն որոյ ո՛չ միայն զարեգական գնացս

4 Բ—այլոց
5 ՁՁ—զէ՛ն (իմա՛ զէէն, այն է «զաստուծոյն»)
12 Ա—տասնեակս
17 Ա—ուսանիմ
21 Բ—Սողօմոնեան
22 Ա—շրջի
24 ՁՁ—զաժմուցս

## ԾԴ. ԶԻ՞ՆՉ Է ԵՐԹՆ .Լ.Լ

Զի վերադիրն թէ անցանէ՝ ընդ ·Լ, զերեսունն զնար պարտ է։ Է և այս՝ զի ամիսք ժողովեալք ի ·ԱԺ·իցն ըստ քանակի այսր թուոյ զստոս ի բաց տրոհելով մնացեալք լինին ամիսք լուսնի՝ ամին երկակի։

## ԾԵ. ԶԻ՞ՆՉ Է .Գ. Ի ՎԵՐԱՅ ԲԵՐ ԿԱՄ .Դ. Ի ԲԱՑ ԵՐԹ

Նախ քան զգնել թուականին ·Է· երեակն, Գ· էր· և էջ 204 յորժամ զթուականն եղին·՝ Դ։ Իսկ յորժամ || Է· երեակ առնես ·Գ· ի վերայ բեր կամ ·Դ·ի բաց երթ զի· Է· զլխութիւն առցէ՝ և դիւրաւ գտանի խնդրողաց։ Եթէ կամիցիս գիտել թէ ուստի անճէ ·Է· երեակն։ Կալ զաւուրս տարւոյն ·ՅԿԵ· և արա շաբաթս ·Է·Է· օր· և մնա օր մի· այն է որ անճեցուցանէ զնա։ Զի մնացորդ տարւոյն անճէ մինչև լինի ·Է· օր, և ապա ի մին դառնայ։ Վասն այնր լինի վերջի օր տարւոյն առաջիկայ տարւոյն ·Է· երեակ։ Զի տարին ·ԾԲ· շաբաթ է և օր մի, զայն առեալ ընդ առաջիկայ ամին վարեսցես ամ յամէ մինչև շաբաթացեալ առցէ զկարգ իւր և է աւուրք շաբաթու։

## ԾԶ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ՕՐՆ .ԻԴ. ԺԱՄ Է

[527ա] Այս խորհուրդ իմն ունի հզօրագոյն· և վասն բա||զում պատճառի է այս կազմութիւն, զի բազում ·ԻԴ· եակք կատարին ի մի խրողութիւն։ Իմաստասիրութիւնն ի ·ԻԴ·ից մասանց կատարի։ Դարձեալ երկնային իմաստութեանցն են տեսակք, ԻԴ։ Քանզի զաստուածածանութեանն տեսումն ի նոցունց ի ·ԻԴ·ից մասանց տեսին։ Որով ծանեան զաստուած էական, ·Գ·անձնեան, և զմարմնանալ որդւոյն աստուծոյ։ Եւ դարձեալ՝ ԲԺ·ան նահապետացն, և երկոտասան առաքելոցն ի մեզ զծագումն բանին ի նոցանէ որպէս էջ 205 ի գիշերի· և քարա||քելոցն որպէս ի տունջեան։ Ի նոցանէ

4 Ա—զօսայ
12 Ա—տարուն
13 Ա—զնայ
26 Ա—որդոյն

## ԿԳ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ ԱՄՍԱՄՏԻՆ ԱՍԷ՝ ԿԱԼ ԹԻՒ ՄԻ

*Զառաջին աւուրս ամսոյն ասաց և յօրագլխոյն դքանիս աւուրց ամսոյն ասաց։*

[528բ] ## ԿԴ. ԶԻ՞ՆՉ Է՝ ԿԱԼ ‖ ՀԱՆԱՊԱԶ .Լ.

*Զաւուրս ամսոյ լուսնի ասէ, որ ի պակասեցուցանելոյ զվերադիրն, և կիսակսն, զծնունդ լուսնի յայտ ածէ։*

## ԿԵ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ ԱՍԷ, ԿԱ՛Լ ՀԱՆԱՊԱԶ .ԽԵ.

*Երեսուն աւուրք լուսնի՝ և .ԺԵ. ի վերայ՝ զլրումն յայտնէ։*

## ԿԶ. ԶԻ՞ՆՉ Է՝ ԿԱԼ .ԺԳ. ԵՒ ԶՆԱՀԱՆՋՆ

էջ 208 *Վասն զի յառաջին ամի Թուականին հասարակածն ‖ յահկի ի .ԺԳ.ն հանդիպեցաւ, զայն .ԺԳ.ն ի վերայ նահանջին արկանել հրամայէ։ Եւ փմինդ առաջին աւուր ամսոյն տալ։ Նոյնպէս իմա՛ և զայլ ամենայն յեղանակսդ և զոօնսդ որ նահանջիւդ են դրեալ։*

## ԿԷ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ Ո՛Չ ԱՍԷ ԱՐԿԱՆԵԼ Ի ՎԵՐԱՅ, ԱՅԼ ԱՍԷ՝ ԿԱ՛Լ ԶՆԱՀԱՆՋՆ ԵՒ ՏՈ՛ՒՐ ՄԵՀԵԿԻ

*Վասն զի յարաց .Լ. դիպեցաւ յայնժամ յայտնութիւնն, վասն այնորիկ ասէ անմակադիր։*

## ԿԸ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ԱՍԷ՝ ԿԱ՛Լ .Լ. ԶՎԵՐԱԴԻՐՆ, Ե՛ՐԹ ԱՌԱՆՑ ԿԻՍԱԿԻ

*Զի առաջաւորն աւագ ըրմանն պատկեր է։ Որպէս ո՛չ անդ և ո՛չ աստ տայ ունել զկիսակն։*

14—15 Ա—եղանակստ և զոօնստ
15 Ա—նահաջիւտ
22 Ա—անստ

կարացին նկատել, այլ և զբոլոր լուսաւորացս կարացին դրոշմել և ճանաչել: Եւ ո՛չ միայն զորպիսութիւն զնացիցն՝ այլև զհնչումն ձայնից նոցա. և ի նոցանէ զտաւարուեստ երաժշտականութեան աշխարհի:

## Ի. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ .Ճ. ԱՍՊԱՐԷԶ Է .Ա. ՅԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄՆ ԱՐԵԳԱԿԱՆ

[528ա] Զայս երկրաչափականաւն գիտացին: Զի երկրի ‖ լայնութիւն և զերկայնութիւն .ԺԶՌ. ասպարէզս ասացին երկրաչափքն, որ հրամանաւ առաջին թագաւորացն Աղեքսանդրի և այլոցն՝ շրջեցան և տեսին զաշխարհս: Արդ՝ ի հասարակաւորէն նշմարելով զարեգական, թէ՝ .ՅԿ. անգամ թաւալեցաւ, և բաժանեցին զ.ԺԶՌ, ասպարէզն .ՅԿ. թաւալումն. և այսպէս որ .Ա. թաւալումն .Ծ. ասպարէզ կոչեցաւ: Եւ մէկ ասպարէզն .Յ. կանգուն է:

## էջ 207 ԻԱ. ԶԻ՞ՆՉ Է՝ ԹԷ ՄԻՆՉ .Ա. ԹԱՒԱԼԻ ԱՐԵԳԱԿՆ՝ ՄԵԿ ՄԱՍՆ ԱՆ ‖ ՑԱՆԷ ՅՕՐԷՆ ԵՒ ՄԻՆՉ .Լ. ԹԱՒԱԼԻ՝ ԺԱՄ ՄԻ

Աստանօր ուսոյց թէ արեգական թաւալմունքն են արարող մասին և ժամու և որք ի կարգին շարժմունքն զհարաւաւ և զհիւսիսով:

## ԻԲ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՒ Ի ԳԻՇԵՐԻ ԸՆԴ ԵՐԿՐԱՒ ԴԱՌՆԱՅ ԱՐԵԳԱԿՆ

Այս ի նուազութենէ ծովու է յայտնի՝ զի բերումն օտար ջուրցն որ յարական և յիզական օդոյն անկանին ի ծով: Վասն այնորիկ ո՛չ լնու՝ զի իջանելով նա՛ ի ջուրն լափեսցէ ի նոցանէն ջեռուցանելովն, զոր ասացին բնաբանքն:

1 Ա—կարացինն կատարեալ
2 Ա—դրոշմեալ
4 Ա—երաժշտականութեանն
5 Ա—ասպարէս
6—7 Ա—լայնութիւնն
7 Ա—զերկայնութիւնն
16 Բ—արեգակն
18 Ա—զհիւսուսաւ
19 Ա—դառնա

լուսոյ, զի աղէքսանդրացիք և Իռիոն յետ .Մ. եկին կարգեցին զԹուականն հռոմայեցոցն: Զի նորա ամքն յե՛տ Անտիոքայ չինելոյն են: Այն չէ՛: Դարձեալ տօնական կանոնքն Անդրէասի զոր եդ նա՛ .Մ. ամի յինքենէ յառաջ .Ը. ազգաց սուտ կատարեցան: Ապա ժողովեալք յիւրաքանչիւր յաշխարհաց առաջնորդք եկեղեցւոյն, կարգեցին այլ յարմարումն Թուոց և տօնից՝ ճանապարհ անմոլար: Ոմանք նոյն Թուականաւն Անդրէասի գրուԹեամբն. և ոմանք յաւելլին կամ պակասեցին: Արդ՝ մերումս կարգեցան ա՛յն ամն Թուականն .Ժ., և ա՛յն ժողովեցան մինչև ցայս ամս:

### ՀԴ. ԶԻ՞ՆՉ.Է ՏԵՍԱՆԵԼ ՋՆԱՀԱՆՋ ԿԱՄ .ԹԺԵՐԵԱԿ

Զայսօրիկ ա՛յժմ տեսանել յառաջ քան զբազմապատկեալն. և միապատկապատիկն է, որ ժողովէ զմետասանսն լուսնի, և ո՛չ բազմապատիկն, զի բազմապատիկն անսահման է:

### ՀԴ. ԶԻ՞ՆՉ Է Ա՛Ծ Ի ՎԵՐԱՅ .ԹԺ. ԵՐԵԿԻՆ

Զօրն եկամուտ՝ որ ժողովէ զ.ԲԺ.ան ամն երկմանուԹիւն. Ե. եկին՝ և լինի օր մի ի մարտի ի .ԻԱ. ֆնն. զոր
Էջ 211 սատանօր իսկ պարտ է ածել ի յարակայն. || և ո՛չ ի .ԺԷ.ն
ապրիլի, կամ ի .ԻԵ.ն մարտի: Իսկ երկմանուԹիւն .Է. ամի .Ե. կէս աւելի եԹող զա՛յն օրն:

### ՀԵ. ԶԻ՞ՆՉ Է ԵՐԲ ԸՍՏ ՆԱՀԱՆՋԻՑՆ ՄԻՆ ԵՒ ԹՈՂ

[530ա] Այս խարանք միայն են՝ յաղագս || եկամուտ աւուրն
ծածուկ լինելոյ ի ումկաց: Այս է Թէ .Ա. նահանջի Թո՛ղ:

3 «Այն չէ՛»՝ մենք շարում ենք շղագիր՝ կարծելով որ նա արտագրող գրիչներից մեկի աւելացրածը պիտի լինի
21 Ա—երկամանուԹիւն
24 Ա—խարկանք

## ԿԹ. ԶԻ՞ՆՉ Է՝ ԿԱ՛Լ .ԽՉ.

Զի տէրունական լրումն օր մի առնու քան զայլ լըրմունս տարւոյն: Վասն այնորիկ անկխակ տայ երթալ զվերադիրն:

## Հ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ ԱՍԷ՝ ԹԷ ՔԱՆ ԶՀԱՍԱՐԱԿԱԾՆ ԱՒԵԼԻ Է՝ Ի ՆՈՅՆ ԱՄՍԵԱՆ Է ԼՐՈՒՄՆ. ԵՒ ԹԷ՝ ՊԱԿԱՍԷ՝ ՅԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆ ԵԼԱՆԷ

529ա || Զի քան զհասարակածն յառաջ՝ և կամ ի հասարա-
էջ 209 կածին, անհնար է մեզ զատիկն առնել: || Այլ լուսնով միով յառաջ տանիմք:

## ՀԱ. ԶԻ՞ՆՉ Է ԹՈՒԱԿԱՆ ՀՌՈՄԱՅԵՑՈՑ

Ամենայն թուականք ազգաց զյառաջադրութիւնս իւրեանց ցուցանեն, որ քան զհայոցն յառաջ անշարժ թուի, յիսկզբան տումարի իւրաքանչիւրոցն իբրև զհիմն հաստատուն: Նախ զժամանակն զոր մեկնեցին և անուանեցին հայոց, որ յառաջ էր քան զմերս շարժական ժամանակս. առէ կա՛լ այսչափ և զհայոցն ի վերայ բեր քանզի սա՛ թիւ շարժական հռչակեալ յազգս: Դարձեալ ցուցանեմ քեզ յաղագս հռոմայեցւոց թուականին՝ որ ըստ ոմանց ասելոյ յԱղէքսանդրացի Իոփոնէ ասեն լինել, այլ ո՛չ ունի հաստատութիւն բանն: Քանզի ի շինելոյն Հռոմայ մինչև յառաջին ամն Փիլիպպոսի կայսեր ·Ռ· ամ լցաւ, յորոց ·Բ· ամին վարէր թուականն հռոմայեցոց: Արդ՝ իմանի նոցին հռոմայեցւոց կարգել յետ լնլոյ շրջանաց արեգական և լուսնի թուով քաղաքին շինելոյ: Եւ ·յ·է· ամէն Փիլիպպոսի ասեն, զի ·է·՛ամ թագաւորեաց Փիլիպպոս:

## ՀԲ. ԶԻ՞ՆՉ Է՝ ԿԱ՛Լ ՄԻՆՉԵՒ ՅԼԴ. ԱՄՆ ՅՈՒՍՏԻԱՆՈՍԻ ԿԱՅՍԵՐ, ԵՒ Ց.ԻԴ. ԽՈՍՐՈՎԱ ՊԱՐՍԻՑ

՝էջ 210 [529բ] || Վասն զի աստ եղև լրումն ·Մ· ամի կարգացն Անդ-
րէասայ, Ը· պկլաց: Եւ անտի այսր է թուական մեր ար

2 Ա—տարոյն
8 Ա—անհրար է
15 Ա—վերա
16—17 Ա—յաղակս
17 Ա—հռոմայեցոց
21 Ա—հռոմայիցոցն

25 Գլխակարգության թվահամարը 2180 ձեռագրում այստեղ ընդհատվում է, իսկ մյուս ձեռագրում շարունակվում է մինչև վերջ:

### ՁԹ. ԶԻ՞ՆՉ Է Ա. ԹԻՒ ՈՐ ՅԱՒԵԼՈՒ Յ.Է. ԵՐԵԱԿՆ

*Դա՛ զամենայն Թիւ ժողովէ մինչև կ․է։ Զոր մի մի յաւելլով ասի յոբելեան։ Եւ դարձեալ ․է․ամբ բաժանի ամենայն ինչ ի կենցաղս նախակարգեալ յարարչէն։*

### Ձ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՐՈՊԷՆ

էջ 213 *Մինչ աւուրն Բ մասն պակաս է ընթացք լուս||նին և յ․Լ․ օրն է ․Կ․ մասն՝ զոր րոպէ կոչեմք․ և զ․Կ․Ե․Ե․ Թիւ ժամս առնեմք, որ լինի ժամք ․ԲԺ․ան․ և այսու գտանեմք զընծայումն և զլրումն լուսնի։*

### ՁԱ. ԶԻՆՉ Է Ե ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ԱՒԵԼԵԱՑ

*Եօթներեակ է առաջնիկայ տարոյն․ զի յիսկզբան եբրայեցւոցն ա՛յսպէս պատահեաց։ Եւ ամենայն ազգաց։ Եւ վարի մինչև ցայսօր։*

### ՁԲ. ԶԻ՞ՆՉ Է ՈՐ Ի ՄԱՐՏԻ Ի .Ի. Է ՀԱՍԱՐԱԿԱԾՆ ՄԻ՛ՇՏ

*Որպէս պատահեաց յիսկզբանն՝ և այսպէս կայ անշարժ, ոչ միայն հասարակդ, այլ ամենայն տօնք և եղանակք ազգաց իւրաքանչիւրոց։ Բա՛ց ի հայոց։ Զի զօրն յաւելեալ ի ․Դ․ամն՝ նոքա ի յ․է․ երեակն աւելին․ և հայք առանձին նահանջ կարգեցին։ Զոր ո՛չ գովեցին ներհունք արուեստին, այլ սահմանեցին նոքա տումար մերոյ ազգիս անշարժ որպէս այլոց ազգաց։*

### ՁԳ. ԶԻ՞ՆՉ Է ԼՈՅՍՆ ԳԵՐԱԶԱՆՑ

*Զի լուսոյն զոր կոչէք Թափանցիկ, այս ասաց Թէոփի—*
[531ա] *լոս՝ || Թէ ծագումն է ի յաստուածային բնութենէն, և ո՛չ*

1 Ա—երեկին
2 Ա—զա փխ․ դա
3 ԱԲ—յոբելան
9 Ա—զնծայումն
11—12 Ա—եբրայեցոյն
15 Ա—կա
16 Ա—հասարակտ
17 Ա—բայց
19 Ա—նհանջ
24 Ա—բնութեան

## ՀԶ. ԶԻ՞ՆՉ Է .ԺԷ.Ն ԱՊՐԻԼԻ ԵՒ ԿԱՄ .ԻԵ.Ն ՄԱՐՏԻ. Ո՛Չ ՆԱԶԱՆՋ՝ ԵՒ Ո՛Չ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ

*Այս եկամուտ աւուրն անկումն է ի լուսինն. բայց անկանի սա ի .ԻԱ. մարտի՝ և |ո՛չ ատա:, Եւ .Բ. մասնութիւն .Է. ամի .Ե. եկիդ աւելի ժողովլի քան զօրն զայն: Բայց չառնելն բազմապատիկ սուտ է: Այլ այսպէս պարտ է առնել. երթալ ի բաց զ.ԺԹ.ունսն, և մէկ թիւ պատել. և զայլն բազմապատկել՝ և դարձեալ բերել ի վերայ պպատեալն. և պիտի առնել զայս սկսեալ ի .ԻԱ. մարտէն մինչեւ ի .ԺԳ. ապրիլի: Եւ զ.Է. ամդ և զմասունսն ժողովեալ ընդ օրն եկամտի, որք ի .Ե. եկէն ժողովին և լինին մասունքն այնոքիկ ի կատարման .ԹԺ. երեկին .Հ. մասն՝ որ լինին .Ե. ամսեան, ժամս .ԺԴ.:*

## ՀԷ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ Ի ՄԱՐՏԻ ԵՒ ՅԱՊՐԵԼԻ ԼԻՆԻ .ԺԴ.ԱՆ ԵՐՐՈՐԴՆ ԶԱՏԿԱՑ

էջ 212 || *Այս ի յիշատակ տեառն ի ժամանակի չարչարանացն եղաւ յազգս ամենայն քրիստոնէից: Վասն զի չարչարանք նորա յետ հասարակածին դիպեցի ի լրմանն լուսնի: Արդ՝ որ յետ հասարակածին լրումն լինի թէ ի մարտի և թէ յապրիլի. զնա՛ եդին նշան անմոլար ի յիշատակ եկեղեցւոյ, զի հաւասար և համախոհ՝ կատարեսցին ընաւ.քս:*

## ՀԸ. ԶԻ՞ՆՉ Է՝ ՈՐ Ի ՓԵՏՐՈՒԱՐԻ ՎԵՐՋԻ ԱՒՈՒՐՆ ԱՆԿԱՆԻ ՕՐՆ ՆԱԶԱՆՋԻ

*Սա՛ բան միայն է և ո՛չ օր՝ վասն զի .Է. երեակն ան-*
*կանի և զնայ. և ո՛չ յաւելու յաւուրս լուսնին: Իսկ յայժմ*
*տեղւոջ անկանելն ի ներքս առ ի յիշումն ոգոմպիադացն*
*եղաւ, վասն զի ա՛ստ էր այն ժողովն և մարտն. զոր և ա-*
[530բ] *նունդ || ցուցանէ: Եւ յառաջ ձգէ զհասարակաւորութիւն և*
*զյեղանակաց աճումն:*

3 Ա—անդուճն
5 Ա—եկիտ
8 Ա—բազմապատկեալ
10 Ա—ապրիելի
14 Ա—յապրիելի

19—20 Ա—եկեղեցոյ
21 Ա—փիպրուարոյ
23 Ա—զընա
24 Ա—տեղիոջ
24 Ա—ոդոմբիադացն

րէն փաղփայակի պաղարումն տեսութեան տանու: Բայց Գ. ժամն վասն խորհրդոյ սուրբ Երրորդութեան անճնաւորութիւն որոշմամբ .Գ. ժամուցն՝ և միաւորութիւն լուսով ըստ աստուածութեան: Յաղագս այսր խորհրդի և արեգակն զիւր կատարէ .Գ. ժամիւք որ արտաքոյ աւուրց տարոյն է՝ որով նահանջի արեգակն: Զի նահանջ է որոշումն ժամանակաց, որ առնումք յօրինակ պալատեան փրկչին մարմին անհեղոյ: Քանզի այս .Գ. ժամքն որ նահանջին արեգական այժմ են ձօնեալ լուսոյ ըստ աւետարանական [532ա] ձայնի .Գ. ժամքն որ վկայեցին ի վերայ || խաչին՝ տեսեալ զարարիչն ամենայնի ո՛չ եւոսն լոյս տիեզերաց: Զի էջ 216 արեգական կատարեալ էր|| զընթացս իւր աւուրց տարոյն յաւուր յայնմիկ և ի ժամուն .Զ. երրորդի. և պիտոյ էին ի լրումն այլ և՛ս .Գ. ժամք, որ եղև խաւար ի մէջօրէի ըստ յառաջագոյն գուշակելոյ մարգարէիցն, զի ծանիցեն ամենայն արարածք եթէ՝ աստուած է խաչեալ: Եւ յաղագս այսր խորհրդոյ անուանեմք զլոյսն Թափանցիկ .Գ. ժամս՝ զի յառաջ է քան զարեգական եղելութիւն: Վասն զի արեգակն է արարած յաւուրն .Դ. բորդի, և յերից աւուրցն նախեղելոց յառաջ քան զարեգակն լուսատու էր նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն: Առաջին աւուրն լուսատու էր Հայր: Երկրորդին՝ Որդի: Երրորդին Հոգին սուրբ: Ի չորրորդին արար զարեգակն, արբանեակ լինել լուսատու երկրի: Վասն այնր խորհրդոյ .Գ. կոչեմք ժամ զլոյսն Թափանցիկ, այլ նա է երևումն վայրկենի միոյ: Այդ եթէ կամիցիս գիտել զծագումն գերազանցեալ լուսոյն. կա՛լ զընթացս երկրորդին և բաժանեա ի .Դ. մասունս. և կա՛լ զմասն բոլորջիցն, և զկատարումն նորին թուոյ, և գտանես զօրն կամ աւուրբ միով յառաջ, կամ աւուրբ միով ի վերջ, կամ ի նմին իսկ աւուր: Բայց վասն ժամուն եթէ գիտիցես՝ ակն

1 Ա—տեսութեանն
2 Ա—Երրորդութեանն
2—3 Ա—անձնաւորութեան
8 Ա—ժամն
12 Ա—կատարել էր
19 Ա—«յերեգից»նախնական որի-
նակում յեղել և անշուշտ «յե-
րից», համառոտ. «յ.գ.-ից» նա
հասկացել և ընդօրինակել է
«յերեգից»
24 Ա—լոյսն
27 Ա—զման

բովանդակ, այլ նշոյլ ըստ հանդուրժելոյ տեսութեան մարդկան՝ և ո՛չ ստացման։ Քանզի ո՞վ տեսանիցէ զնա՛ բո-
էջ 214 վանդակ և ապրիցէ։ Այլ որպէս առ Պետրոսեանսն ի թաւորական լերինն յորժամ փրկիչն մեր լուսակերպեցաւ ծագումն պայծառափայլութեան ըստ նոցա՛յն բաւական տեսութեան։ Եւ ո՛չ բովանդակ լուսով աստուածութեանն. վասն զի ո՛չ հանդուրժէին։ Եւ արդ՝ առ մեզ լինի նոյն ծագումն մխանլամ ի տարւոջն, բայց և՛ս մեղմագոյն քան զնոցայն. և առաւել քան զարեգակն՝ զլուսին և զաստեղս։ Քանզի թափանցիկ անցանէ ընդ ամենայն արարածս աստուածոյ և ո՛չ ինչ կարէ արգելուլ զնա՛։ Քանզի ամենայն ստուերք ընդդակյանաց լուծանին։ Նաև անդունդ ահագինք ովկիանոսի խաւարայինքն լուսաւորին։ Եւ այսպէս է նորա թափանցիկ զօրութիւնն՝ զի թէ ուրուք միտ եղեալ արժանաւոր խորհրդի ուշիմ հայիցի յորժամ լինի ծագումն եթէ ի տան իցէ ընդ որմունս քարեղէն՝ արտաքինքն երևին. և եթէ արտաքոյ իցէ հայեցեալ ընդ որմունսն՝ զամենայն որ ինչ ի ներքս ի տանն՝ կարէ տեսանել։ Բայց եթէ՝ զի երբեմն համաշխարհական երևի, արժանաւորաց և անարժանից։ Եւ երբեմն արժանաւորաց միայն։ Ո՛չ ինչ պատճառ
[531բ] յա զայս այսր կարեմ ասել, բայց միայն զմարգարէական բանն՝ եթէ զատաստանք աստուծոյ՝ անդունդք բազումք, այսինքն՝ անհասանելիք։ Բայց է՛ այս մեծ նախախնամու-
էջ 215 թեան արարչին, զի ծագմամբս այ||սու գիտասցեն արարածք եթէ ո՛չ է ստատուած լուսին և աստեղք՝ և ո՛չ նոյն ինքն արեգակն և օդի։ Վասն զի հարկաւորք են ամենեքեան ընդ կապաւն արգելանին։ Իսկ թափանցիկն է անհարկաւոր՝ արագ՝ անարգել՝ ի՛նքնիշխան՝ զեր ի վերոյ քան զամենայն գոյս. յորմէ յայտ է՝ եթէ առաքիչն նորա է՛ արարիչ ամենայնի։ Զնա՛ առաջինքն ի հարցն ասացին. Գ. ժամս։ Ժամս ո՛չ ըստ չափոյ իւրոցն կատարեալ մասանցն՝ այլ ի ձեռն խորհրդոյն. քանզի ծագումն լինի վայրկենի մի՝ և անդ-

1 Ա—բաւանտակ
2—3 Ա—բաւանդակ
8 Ա—տարիոջ

12 Ա—պնտականաց
13 Ա—ովկիանոսի
24 ՁՁ—այսով

ո՛չ ունիմ, զումանեմ յոյժ: Դարձեալ կա՛լ զյոբելեանն ·Ծ·
էջ 217 և զաւելլին || ·Ե·: Եւ ·Զ· հանապազորդ· և տո՛ւր յուն-
[532բ] վարոյ և փետրվարոյ, որ մնայ ·Ժ·նապատ||կեա՛ և տո՛ւր
մարտոյ և գտանես: Դարձեալ կալ զվերադիր հռոմայեցւոցն
և ե՛րթ ·Դ·Դ· որ ի Դ·իցն մնա՝ երթ ·Գ·Գ· թէ ·Ա·
մնայ ՝յառաջ է քան զհասարակածն: Թէ ·Բ· մնայ՝ յետ
է: Թէ ·Գ· մնայ՝ այն է իսկ օր զալոյ լուսոյն: Դարձեալ
կա՛լ զվերադիր հռոմայեցւոցն թիւ մի յաւել և երթ ·Գ·Գ·
թէ մէկ մնայ ի մարտի ի ·ԻԱ·ն է: Թէ ·Բ· մնայ՝ ի
·ԺԹ· է: Թէ ·Գ· մնայ՝ ի ·ԻԵ·ն է: Եւ թէ ստուգիւ հա-
յիս՝ գտանես զ·Բ·ոքին լոյսն ի գարնանային հասարակածին
և լաւ լինի: Զայս Թէոփիլոս: Բայց ես ասեմ եթէ ճըշ-
մարտիւ յԱստուածութենէ է՛ ծագումն, այլա ի վե՛ր է քան
զմարդկային գիտութիւնն: Բայց տեսի յաղագս այսր այլ իմն
պատմութիւն ստայօդ և անհամ Աղաթոնի և Փիլաքսոնի
ոմանց բանիւ, որ յաղագս դիւտի Թ· և ·Ժ· երեկին պատ-
մէն, մարտին և ապարսոն ոմանս անուանելով եղբարս:
Զոր մերժեալ խոտեցի ,սուտս զանդիտացեալ պատմութիւնս:

## ԶԴ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՋԵՐԱՋՍ ԳԻՏԵԼՈՅ ՍԱՂՄՈՍԻՒՔ՝ ԵՒ ՄԵԿՆԵԼՈՅ

էջ 218 Բաղումք են որ երազոց հաւատան և վարին || նոքօք:
Եւ ոմանք աւ ոչի՛նչ զերազսն համարին: Բայց ես այսպէս
ասեմ, եթէ մաքուր անձանց միայնաւորաց՝ և նոյնգունակ
մարդոց, որք ի յախտից և ի զբաղմանց աշխարհիս պա-
[533ա] րապք են, նոցա || ճշմարտապէս երազք են: Այլ և թաղա-
ւորաց և մեծամեծ իշխանաց՝ որոց աստուծոյ զաշխարհս
է հաւատացեալ, յաղագս բռնակալութեանն՝ որպէս Փարա-
ւոնին՝ և Նաբուգոդոնոսորին, և նոցին նմանեացն պատմէ
դիր: Որպէս թէ՝ զգաստացուցանէ զնոսա երկնչիլ յԱստու-
ծոյ՝ և խնամակալ լինել աշխարհի: Ո՛չ վասն նոցին ինչ
բարեգործութեանց՝ այլ վասն բազմութեան ժողովրդեանն

4 Բ—հռոմայեցոցն
10 Բ—ԺԹ-ն է
11 ԱԲ—լոյսնն
13 Ա—ծագումն

20 Այս գլուխը, ինչպես առաջաբանում ենք ասել, մեր կարծիքով ընդմիջարկություն է։
23 Ա—սբաղմանց

որ ընդ նոքօք պատահէին: Եւ աւ աչխարհավարաց երբեմն ճշմարտապէս երազք, յորժամ ո՛չ առաւել ւիցեն ի կերակուր և յըմպելիս. նօսրացեալք ի թանձրութենէ քնոյ զաւաւօտին պահու: Բայց առաւելեցելոցն կերակրովք և թանձրութեամբ քնոյ՝ ցնորք են և ո՛չ երազք: Այլ ճշմարտապէս երազքն ազդումն աստուածային է: Քանզի և մեք չեմք հեռի ի շնորհաց հոգւոյն. թէպէտ և ոչ եմք վարուք՝ որպէս արժանն էր, սակայն պարգևին մասին արժանաւորէ՝ որպէս աստուած: Վասն զի ամենակալ է, որպէս մարգարէն ասէ՝ Հե՛ղից յոգւոյ իմոյ ի վերայ ամե-

Հջ 219 նայն մարմնոյ՝ և մարգարէասցին: Ահա չա||սաց թէ ի վերայ ոմանց՝ և կամ մաքուր եղելոց, այլ ի վերայ ամենայն մարդոյ: Յորմէ յայտ է թէ ի վերայ առաքինեացն և ո՛չ առաքինեացն ասէ՝ եթէ հեղից հոգւոյ ի վերայ ամենայն

[533բ] մարմնոյ, և մար||գարէասցին: Ոմանք տեսլեամբք, ոմանք երազովք, քանզի երազք մասն է մարգարէութեան խոնարհագոյն աստիճանաւ: Որպէս ասաց ոմն յիմաստնոցն՝ թէ երազք վասն նշանակի տուան, զկապակայսն մեզ յառաջադէտս առնելով: Արդ՝ եթէ կամիցիս գիտել զսաղմոսն որ յայտնէ զերազն և մեկնէ՝ այսպէս արասցես: Կա՛լ զաւուրս ամսոյն յորում աւուր զերազն ետես, և զամենայն աւուրս ամսոցն անցելոց՝ ի յունվարէ ամսոյն. և զ.Ի. երեակ համայեցուցն, և զ.Ե.եակ տարոյն. և զքանիօնութիւն լուսնին, և զանուն տեսանողին զերազն. և միաբանեա զթիւսն՝ և երթ ի բաց .ԿԿ. որ մնա, կա՛լ զթիւն, և ած ի վերայ զ.Զ.եակ տարոյն, և զթիւ .Կ.իցն: Միաբանեա զթիւսն, և երթ .Հ.Հ. որ մնայ՝ կա՛լ զթիւն. և ի վերայ ած զթիւ Հ.իցն. և միաբանեալ զթիւսն. և արա բազմապատիկ, և երթ ի բաց .ՃԾ. ՃԾ. ըստ թուոյ սաղմոսացն, և գտանես զքանիօնութիւն թուոյ սաղմոսացն զոր խնդրես: Եւ նա մեկնէ զտեսութիւն երազոյն՝ եթէ չար է, եթէ բարի:

7 Բ—հոգոյն
11 Ա—մարմընոյ
14 Բ—հոգոյ
22 Բ—ամսոյ, Ա—ամսոյն. ուղղեցինք ամսոցն:

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ


Աբրահամ 23, 63, 67
Ագաթոն 92
Ադամ 64, 67, 76, 79
Աղեքսանդր 84
Ամփիւլոքիոս 14
Անդրէաս 68, 86, 87
Անտիոք 87
Ապեղիոս 69
Ասպիա ծով 17
Ասպղատիտէս ծովակ 16
Արամազդ 37
Արաց 77
Արեգ 77
Աքաղ 28

Բաբելոն 76
Բարսեղ 24
Բասիլիոս 29
Բարշամ 37
Բզնունեաց ծովակ 16
Բրիտանիա 56

Գայոս 76
Գրիգոր Աստուածաբան 2, 8

Դիմոկրետէս 69

Եգիպտոս 16, 76
Եզեկիա 28, 65
Եղիա 64
Եւրոպա 43
Եւքսինոս 16
Երիքով 63

Զօրաբաբէլ 64

Թէոփիլոս 89

Իռիոն Աղեքսանդրացի 86

Կայեն 63
Կուինտիլլիոս 76
Կրիտէ 11

Հայկ 76, 77
Հելեսպոնտոս 16
Հեր 37
Հերակլէս 37
Հիւրկանիա ծով 17
Հնդկաց աշխարհ 50, 53
Հոռի 77
Հռոմ 86
Հրէաստան 16
Հրոտից 77

Ղեբեստրոս 71
Ղուկաս 64
Ղաբիթ 76

Մահեկի 77
Մարերի 77
Մովսէս 76

Յեսու 63
Յորդանան 64
Յովբ 7, 11, 14
Յովնաթամ 28
Յովսէփ 8
Յուդա 65
Յուլիոս 76

Նաբաթ 22
Նոյ 23, 76
Նաւասարդի 77, 81

Ոդիա 28
Ովկիանոս 43

Պաղէստինէ 16
Պետրոսեանք 90
Պեռսեփոնեա 37
Պոնտոս 16
Պրոկղիոս 69
Պրոպոնտիս 16
Պօղոս 1, 9

Ռոբովամ 22

Սահմի 77
Սաղոս 53
Սարիբթացի այրի 64

Սերբոնիտէս ծովակ 16
Սեքստելիոս 76
Սիկիլիա 16
Սինդ 53
Սմրղանդ 53
Սողոմոն 17

Վահագն 37

Տիւրոս 16
Տրէ 77

Փառաւոն 92
Փիլաքսոն 92
Փիլիպոս կայսր 86
Փիլոն 8, 23

Օգոստոս 76

Քաղոց 77

Պատ. խմբագիր՝
Հ. Աճառյան

ՎՖ 3308. Պատվեր 554. Տիրաժ 1000. Տպագրական 8 մամուլ։ Մեկ մամուլում 35520 նշան։ Հեղինակային 5 ¾ մամուլ։ Ստորագրված է տպագրության համար 25/II 1941 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65